


ՍԻՆԿԼԵՐ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

ՄԻ ՊԱԴԱՔՏՈՆՐԹՎԱԾ  
ՄԱՐԴՈՒ ՎԱԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵԵՐԵՎԱՆ — 1937

10898



ՍԻՆԿԼԻՆ

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

ՄԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՎԱԾ  
ՄԱՐԴՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. ՆՅ. ՎԱԶԱԽԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1937

Պատ. Խմբագիր՝ ՄՆ. ՍՆԱՐՑԱՆ  
Տել. Խմբագիր՝ Մ. ՃԻՆԻԲԱԼԱՑԱՆ  
Սլքագոհչներ՝ Մ. ՀԱԿՈԲՑԱՆ Մ. ԳԵՎՈՐԳՑԱՆ,

Հրատարակ. № 4030  
Տիրաժ 3 000  
Պատվեր № 460

Հանձնված և արտադրության մարտի 9-ին. Ստորագրված և տպագրության մարտի 28-ին 1937 թ. Ստատֆորմատ Բ-5.


Уполномоченный № О-1978. Типография Краевого Армянского Издательства „ГРО“, Ростов-Дон, Ворошиловский пр. № 27.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Այս փոքրիկ պատմվածքը գրված է մոտ քսան և հինգ տարի առաջ։  
Դրս մասին յեղած վճիռն այն եր, թե «չի կարելի հրասարակել»։ ուստի  
յիս մի կողմ զրի այդ՝ մինչև ի վիճակի լինելի ինքս հրասարակելու  
Վերջերս աշքի անցկացրի այդ, և Հետաքրքրութան պատկերացում ունեցա-  
տյն մասին, թե ինչպես քսան և հինգ տարվա ընթացքում ժամանակ-  
ները փոխվել են։ Յես այս պատմվածքը մի կողմ զրի իրքի հեղափոխա-  
կան մի փաստաթուղթ, իսկ այժմ դուքս եմ բերում իրքեւ ընդհանուրի  
կողմից ընդունված տեսակետների մի անվիճելի և միանգամայն հասկա-  
նալի տեղեկագիր։ Պատմվածքը կարդալիո պետք և նկատի ունենալ։  
Գոր այդ գրվել և այն ժամանակ, յերբ գեռևս գոյություն չուներ «մեր-  
կացնող զրականություն», վոր նրա հեղինակը վոչինչ չի քաղել քաղա-  
քական ապականության վերաբերմամբ Ստեֆենսի քննադատությունից  
վոչ յերկաթուղային դեղջի մասին միս Տարբելի վերլուծումից, վոչ ել մը-  
կուսոնի «գաղաղած ֆինանսի» ներքին աշխարհի ցուցազրումից։

Ը. Ս.

Հայլիս, 1924 թ.



## I

Մի կողմ թողնելով բոլոր յերազանքներն ու սպային յերեակայությունները, յես մտակրություն ունեմ այս ժամանակագրությամբ տալ մի քաղաքակրված մարդու պատմությունը, գործ ունենալով այն նվաստ իրականության հետ, վորն ընկած և մեր շեմքին:

## II

Ցուրաքանչյուր առած, ամեն մի ռամիկ արտահայտություն կամ սովորական դարձվածք, կարելի յե կոչել քարացած ներշնչում: Մի ժամանակ այդ մի կենդանի բան եր, մարդու հոգում փայլատակող մի շանթ, իսկ հիմա այնպես ե գուրս սահում մեր լեզվից, վոր չենք ել մտածում նրա խմաստի մասին: Այսպես, յերբ կատարվեց պատմությանս սկիզբը կազմող դեպքը, լրագրերը սիահամուռ հայտարարեցին, վոր Ռոբերտ վան Ռենսելերը ծնվել և արծաթե դդալը բերանում: Մանրամասն պարագաների մեջ մտնելն ավելորդ ե. միայն պիտի ասենք, վոր այս ժամանումը խիստ զգալի տառապանք պատճառեց մեր հերոսի մորը, վորը մինչ այդ վարժված չեր վորեն չարչարանքի:

Նրա հայրը, Մր. Չառնսի վան Ռենսելերը մեր մայրաքաղաքի բարձր հասարակության շատ հարգված անդամ-

ներից մեկն եր, դըան միացնելով հարստության և լավ ծննդի իր մեծ ու փոքր իղձերը, և բնակում եր քսաներորդ դարի մի պալատում,—Ֆիֆտ Ավինյու, համար հինգ հազար հարյուր քառասուն և չորս:

Մեր պատմությունն սկսվելու պահին վան Ռենսելեր-հայրը փախել եր նեղության այդ տեսարանից և ժամանակն անց եր կացնում իր մի քանի համակրելի բարեկամների հետ բիլիարդ խաղալով: Իսկ յերբ հեռախոսի դանդը հնչելով հաղորդեց լուրը, նրանք բաց արին շամպայնի շները և խմեցին վան Ռենսելեր-վորդու կենացը:

Ուշ ժամանակ, յերբ հայրը կանգնած եր մթնած հարկարաժնում և աչքերը հառած կյանքի կարմիր ու վարդագույն մասնիկին, հպարտ հույզերը բարձրացան նրա սրտում և նա ուխտեց Ռոբերտ վան Ռենսելերից մի ջենտլմեն պատրաստել—մի ջենտլմեն հորը կաղապարով: Իմ հերոսի կարիերայի հենց սկզբում՝ յես պետք ե նշեմ այն մեծ ուշադրությունը, վոր նա աբժանացավ մամուլի և անձկացող հասարակության կողմից:

Մր. Զառւնսի վան Ռենսելերը հարստատ եր ըստ Նյու-Յորկի և Ֆիֆտ Ավինյուի չափերի, ուստի մանուկ վան Ռենսելերն ապահովվեց զգեստների մի ներածական շարքով, վորի ծախքը կազմեց տասնյոթ հազար դոլարի մի ոլատկառելի գումար: Յես ունիս վան Ռենսելերի վերաբերյալ կտրոնների մի դեղ և յես այստեղ մեջ կրերեմ մանըակրկիտ նկարագրություններ ու դրանք կպահեմ յերախտագետ գալիք սերնդի համար: Մինչ այդ մաստեր<sup>1</sup> Ռոբերտ վան Ռենսելերն եւ մեծացած կլինի: Յես անցնում եմ այն ժամանակամիջոցի նկարագրություններին, յերբ նա արդեն հասակն առած տղա յեր և ուներ յերկու դաստիարակչունի, մի քանի խնամակալ, մի ձիապան և ուրիշ այնպիսի սպասավորներ, ինչ պես պետք ե ունենա ամեն մի տղա:

### III

Եառ մանուկէներ կփչանային այդքան ուշադրություն վայելելուց, ուստի և միանգամայն պատշաճ ե նախապես ասել վոր «Ռոբբին» յերբեք չշփացավ, վոր նա իր մանկության վերջին որերում հանրածանոթ եր վորպես «մի լավ ընկեր» և վոր միայն յերբ իր ուզածը չեր կատարվում՝ զայրույթ եր յերեռում նրա աչքերում:

Տարիներ առաջ նա հաճախել եր մի խոշոր, հարուստ դպրոց, Նրան ուղեկցել եյին ընտանիքի աղոթողները, սպասավորն ու ձիապանը: Այնտեղ նա ուներ մի շարք սենյակներից բնակարան, յերկու ձի և մի զույգ շներ, վորոնք ավելի յերկար ճյուղագրություն ունեյին, քան նա: Այնտեղ նա սովորեց բարձրորակ, ընտիր գլանակներ գործածել, սովորեց «պոկեր»<sup>2</sup> խաղալ և հատկապես հետաքրքրվում եր ձիարշավային խաղերով: Այնտեղ նաև,—յերբ պատրաստվում եր թողնել դպրոցը և գրոհ տալ մի մեծ կոլեջի վրա— Ռոբբին հանդիպեց մի հուզիչ պատահարի:

Այս մի իրական բան ե, վորը նկարագրելիս միշտ պետք ե մանրասահնությունների մեջ մտնել: Այսպիսով, ուրեմն, պետք ե նկարագրենք, թե ինչպես Ռոբբին բուռն կերպով սիրահարվեց մի գեղեցիկ աղջկա վրա, վորն ապրում եր դպրոցի մոտ գտնվող գյուղերից մեկում:

Ռոբբին յերիտասարդ եր և գեղեցիկ, հարուստ և ուշիմ, ուստի վոչ մի բան չեր կարող խոչնդուտ լինել նրան իր սեփական ուղին հարթելու:

Այսպես ել արեց նա. յերբ թողեց դպրոցը՝ աղջկին ել թուավ տնից և հետեւց նրան:

Յերանելի ամիսներ եյին քաղաքում այդ ժամանակ, հետո բարդություններ առաջացան և յերբ ճզնաժամը հասավ՝ քիչ մնաց, վոր Ռոբբին ամուսնանար այդ աղջկա հետ:

Բայց նրա հոր հետաքրքրությունը խիստ գրգռված եր  
նրա Փինանսական ծանր պահանջների շնորհիվ, ուստի  
Մր. Զառւնսի վան Ռենսելերը և Մր. Ռոբերտ վան Ռենսել-  
երը մի տեսակցություն ունեցան առաջինի առանձնասե-  
նյակում:

— Դեռ, Ռոբբի, — հարցրեց հայրը, — վնդքան ժողովակ և,  
վոր այս բանը գոյություն ունի:

— Գրեթե մի տարի, սըր, — ասաց Ռոբբին նայելով հա-  
տակին,

— Մի տարի: Հըմ: Ինչու սկզբից չասացիր ինձ, հենց  
վոր ընկար այդ գլխացավանքի մեջ:

— Ինձ... ինձ ել հաճելի չեր, — ասաց Ռոբբին:

— Ճիշտն ասած, — շարունակեց հայրը, — աղաները չպետք  
ե գործ ունենան այդպիսի անմիտ բաների հետ, բայց  
քանի վոր դու ընկել եյիր գրանց մեջ, պարտավոր եյիր  
ինձ ասել: Այդպես, ուրեմն դու ուզում ես ամուսնանմլ:

— Յես... յես սիրում եմ նրան, — ասաց մյուսը կարմրու-  
թյան զանազան յերանդներ առնելով, կարծելով թե բառերը  
խիստ այլանդակ հնչեցին:

— Բայց Ռոբբի, — բողոքեց վան Ռենսելեր-հայրը, — մարդ  
անպայման չի ամուսնանում իր սիրած բոլոր կանանց հետ:

Ապա մի փոքր լուսությունից հետո հայրը շարունակեց  
լրջորեն:

— Դեռ, զավակս, ասա ինձ նրա աեղը, և յես քեզ հա-  
մար կկարգադրեմ ամեն ինչ:

Ռոբբին սթափվեց:

— ԶԵ՞ք բարկանա նրա վրա, — հարցրեց նա պազ-  
տագին:

— Իհարկե զնչ — առաց հայրը, — յես յերեք չեմ նեղա-  
նում վորեւե մեկի վրա, ամեն ինչ կարգին կլինի, խոստա-  
նում եմ:

Յեվ այսպիս մի քանի որ հետո հայտնվեց, վոր Ռոբըին գնում ե արտասահման մի տարով։ Յերբ նա փնտռեց Դեյզիին մնաս բարով մաղթելու, տեղեկացրին, վոր նա մեկնել և դեպի Արևոտաք, —մի հանդամանք, վոր մի քանի որդու անձկություն պատճառեց Ռոբըին։

#### IV

Իմ հերոսը գնաց արտասահման իր մտերիմ բարեկամի հետ, վորն իրանից տարիքով մի քիչ մեծ եր։ Յերկօտան ել սքանչելի կերպով անցկացրին իրենց ժամանակը։ Նրանց տրամադրության տակ առատ զրամ կար, իսկ Ռոբըին ել արտոնել եյին ամեն բան, վոր նա կցանկանար, բացի ամուսնակալուց։ Ուստի նրանք Յեվրոպայի բոլոր քաղաքները շրջեցին, տեսան անցյալի բոլոր գեղեցիկ բաները և ժամանակակից բոլոր զվարճառիթ յերեսոյթները։ Նրանք իջևանում եյին լավագույն հյուրանոցներում և ուր վոր գնում եյին, մարդիկ խոնարհվում եյին նրանց առաջ և արագորեն կատարում նրանց ցանկությունները։ Կային նաև գեղեցիկ կանայք, վորոնք վոչինչ չեյին խնայում Ռոբըին յերջանկացնելու համար։ Լինելով վեհանձն սրտի տեր և առատաձեռն մի տղա՝ Ռոբերտը միշտ տղիկների սիրելին եր։ Ինչ վոր ստանար, փոխարենը իսկույն կվճարեր, այն ել մշտապես շուկայի բարձրագույն գները։ Նա վարձեց մի փոքրիկ ու գեղեցիկ զբոսանավ և իր հետ վեցցրեց բարեկամին ու մի քանի մտերիմ կանանց Միջերկարականի վրա մի հիանալի զրուանք կատարելու համար։ Յերկինքը կապույտ եր, ոդը տաք։ Ռոբըին տեղավորվեց տախտակամածի վրա, պառկեց արևի տակ և ծծեց անուշաբույր գլանակների ծռւխը. սիրտն ուրախ եր և յերբեք կյանքում այսքան յերջանիկ չեր գլացել իրեն։

Դրանից հետո յերկու ճանապարհորդները վերադառնան  
տուն։ Ռոբբին մտածեց զնալ կոլեջ։ և իրոք նա վարձեց  
մի քանի սենյակ ու սկսեց անհրաժեշտ ծախսերը հոգալ։

Սակայն կոլեջ զնալը մի տարի տևեց միայն, զորով-  
հետև Ռոբբին աշխարհում չափից շատ բան եր տեսնէ,  
զորպեսզի կը կին հետ զնար դեպի կոլեջի հարսնյակը  
(chrgsalis), իսկ յերբ պարզվեց, վոր նա չի կարող իր քըն-  
նությունները բռնել, նա թողեց կոլեջը և վերադառնան  
Նյու-Յորկ, այնտեղ մնալու համար։

## V

Այժմ զուք կարող եք նրան տեսնել պատշաճորեն գործի  
գլուխ անցած, վոր բախտը դրել եր նրա առջև,—հորը պես  
մի ջենտլմեն դարձնելով նրան։

Վոչվոքից խորհուրդ չեր վերցնում, գործերը վարում  
եր իր գիտեցածով։ Մի շարք սենյակներ եր վերցրել և  
կահավորել այնպես, վոր մեծ հաճույք եյին պատճառում  
այն քիչ աչքերին, փորոնք դիտում եյին այդ. դրանք հա-  
սարակության բարձր խավերում տարածված մի քանի  
ժուրնալներում նկարագրված եյին վորպես քաղաքի կրթա-  
կան մեծագույն ուժերից մեկը։ Հետո նա անդամագրվեց մի  
քանի ակումբների, մի ոթյակ վերցրեց ողերայում և կա-  
տարեց այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ եր նրա դիրքի  
տեր մի յերիտասարդի։

Հասկանալի յե, ուրեմն, վոր Ռոբբին անցել եր բարձ-  
րագույն «շրջանները» և հրավիրվում եր ճաշկերույթների  
ու պարահանդեսների, այնպիսի վայրեր, ուր կարող եյին  
զնալ հազիվ մի քանի դյուժին ընտրյալներ։ Բավական մեծ  
համբավ ուներ վորպես գոլֆ<sup>3</sup> և պոլո<sup>4</sup> խաղացող. Նյուպորտի  
հոչակավոր նավազբուներից մեկն եր հանդիսանում։ Բայց

և այնպես տարակույս չկա, վոր նրա հոչակն իրառեա հիմն-  
ված եր նրա ավտոմոբիլային ռեկորդների վրա։ Իր աշքի  
լույս ավտոմոբիլով մայրաքաղաքի մեջ սրբնթաց կերպով  
շրջագայելն ամենորյա տեսնելու բան եր, — ավտոմոբիլ,  
վոր կոչվում եր Գրին Գոստ (կանաչ ուրվական)։ իսկ զբո-  
սանքից հետո հաճախ իր ծառային ուղարկում եր դառա-  
րան առույժերը վճարելու

Մի անգամ, յերբ դժբախտ պատեհությամբ սպանեց մի  
փոքր տղայի, վերջինիս ծնողներն ընդմիշա յերջանկու-  
թյուն գտան Ռոբերի արքայական առատաձեռնության  
շնորհիվ։

Ռոբերին սկսում եր հոչակ վայելել նաև, վորպես ակմ-  
բասեր և Յօն νίναντ մի անձնավորություն։ Այդ ժամանակ  
նա արդեն մեծագույն չափով ճանաչում եր կյանքը. իրոք  
նա զիտեր այն բռլորը, ինչ վոր անհրաժեշտ եր իմանալու։  
Նա լավ զիտել եր մարդկանց և կատարելապես ըմբռնում  
եր նրանց և նրանց գործերը։ Զպետք ե պատկերացնել  
նրան վորպես մի ցինիկ անձնավորություն, քանի վոր մի  
անգամ արդեն հիշատակել եմ, վոր նա ամենաբարեսիրտ  
մարդն եր աշխարհում, սակայն ուներ ինչ-վոր մի չորս-  
թյուն իր բնավորության մեջ, վորը չարժե ընդորինակել։  
Յերբ մի անեկդոտ եր պատմում, վորը աշխարհը լսում եր  
նրան։ Ռոբերի պատմություններն ամեն կարգի թեժաներ  
եյին ընդգրկում, բայց մեկի մասին ճշմարտությունն ասել  
անպայման չի նշանակում պատմել նրա բոլոր զրույցները,  
նույնիսկ ամենասխալ կենսագրության ժամանակ։

Չեմ ուզում վորեն մեկը գաղափար կազմի, վոր իմ հե-  
րոսը վատ եր. ընդհակառակը, նա անգամ եր մի յեկեղեցու,  
վորի ուղղափառությունը և պատկառելիությունը զերծ եր  
վորեւ խծրծանքից—և ամեն կիրակի առավոտ ուղեկցում  
եր իր դասին պատկանող ընտիր շրջազգեստով մի տիկնոչ

և իր ոթյակից լուսմ հոչակավոր ըեկտոր՝ զերապատվելի վետուս Սպրեյի ուերճ քարողները։ Հետո, յերբ յեկեղեցին մի տռնավաճառ կազմակերպեց հոգուտ Ֆիջի կղզու բնակիչների, Ռոբբին դնեց վիճակախաղի մնացած բոլոր բաժնետոմսերը և թույլ տվեց դեռատի կանանց, վորպեսդի ծաղկեփնջեր ամրացնենք և այն, վոր լրիվ վեց շաբաթ փաստորեն դաս տվեց կիրակնորյա դպրոցում այն ժամանակ, յերբ գլութե հուսահատության աստիճան դյութված եր մի ամեկնոջով, վորը նույնաղես սովորեցնում եր։ Խիզախորեն տանելով այս խնդրի վերաբերյալ բոլոր ծաղրը, նա իր սեղանից վերցրեց և մի կողմէ գրեց *T. Cautier*-ի յերկերը, սկսեց ամեն շաբաթ յերեկո նախապատրաստվել և սովորեցնել փոքր տղաներին, թե ինչպես բարի Տերը տնորինեց, վոր Գեղիոնի արեվը չոր մնա և ստիպեց զորքերին, վոր գետից ջուր խմելու համար պառկեն գետնին, և ընդհանրապես անում եր այնպիսի անսովոր բաներ, վորոնց նպատակն եր փոքրիկների վրա ազդել։

Վոչինչ գուբր չեկավ այս կիրականորյա դպրոցի արկածից, ինչ ել վոր լիներ, վան Բենսելլեր-հայրն այն կարծիքի յեր, վոր դեռատի կինը վոչինչով չի նմանում այն հարսնացույին, վոր Ռոբբին պետք և ունինար, այսպիսով յերիտասարդի բաղձանքները թեքվեցին գեպի *West Side* ի կողմը դոնված վայելչորեն կահավորված մի բնակարան, վորտեղ կար շամպայնի և ընտիր գլանակների մի առատ պահեստ և Ռոբբիին ծանոթ յերկու ջահել կանայք։ Շաբաթվա մեջ յերեք կամ չորս յերեկո դուք կարող եյիք տեսնել նըա և նրա մի քանի բարեկամների ավտոմոբիլներն այս բնակարանային շենքի դռան առջև շարված և իրազեկ կլինել յեր, վոր Ռոբբին այնպես յերջանիկ եր, ինչպես մի այսպիսի բարեսերտ յերիտասարդ արժանի յեր լինելու։

Նախորդ զլուխներում բավականին խոսվել ե Ռոբերտ  
վան Ռենսելերի կյանքի վաղ ժամանակաշրջանի մասին,  
ցույց տալու համար, թե ինչպես ելին անցնում նրա այդ  
հաճելի որերը:

Ներառյալ նրա հարկաբաժինները, բնակարանը, ակումբ-  
ները, ավտոմոբիլը, զբոսանավը և ճոկանախաղի ձիախում-  
բը, մեր բարեկամի տարեկան ծախսը կազմում եր մոտավո-  
րագես յերեք հայրուր հազար դոլար: Յեզ քանի վոր,—  
յեթե նա լիներ մի տաղանդավոր բանաստեղծ, մի ներշնչ-  
ված յերաժիշտ, կամ մարդկության համար նոր պատգամ  
բերող մի մարդարե՛ հասարակությունն այդ գումարի միայն  
մի հազարերորդ մասը հաղիվ կհատկացներ նրան կենդանի-  
պահելու համար,—ակնհայտ ե, ուրեմն, վոր հասարակու-  
թյունը նրան համարժեք եր համարում հազար այդ կարգի  
յենթագրական անձների: Այս հովվերդական եյակն այսպես-  
շարունակեց ընդամենը մոտ յերեք տարի: Ապա մի գեղե-  
ցիկ ձմեռային որ Ռոբերին հրավիրվեց հոր գրասենյակը, ուր  
յերկուսով ունեցան մի յերկար և լուրջ խոսակցություն:

— Դեռ, Ռոբերի:—սկսեց վան Ռենսելեր ավագը, — յես չեմ  
առարկել քո յերիտասարդական մոլությունների դեմ, դա  
յուրաքանչյուր յերիտասարդի իրավունքն ե և դու սահ-  
մանը չես անցել: Յես սիշտ կամեցել եմ տալ իմ դաշվակին  
այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ ե մի ջենովմենի: Իսկ  
հիմա յես կարծում եմ, վոր ժամանակն ե զրանց վերջ տա-  
լուն. չես կարծում, վոր այդպես ե:

— Հըմմ... դրա մասին չեյի մտածել:—ասաց Ռոբերին  
մտախոհ:

— Գիտես, վոր մարդու կյանքն ամբողջապես խաղ չե, —  
ասաց վան Ռենսելեր: հայրը, — մենք ունենք լուրջ պար-

տակտնաւթյուններ այս աշխարհում—վորոշ բան պարտ ենք  
հասարակությանը:

— Այս,—ասաց Ռոբբին,—այդպես եմ յինթադրում, բայց  
դա ձանձրույթի դժոխքն է:

— Այդպես կարող ե թվալ,—ասաց մյուսը,—բայց վեր-  
ջում մարդ կշահագրգովի:

— Գուցե այդպես ե,—ընդունեց Ռոբբին յերկմտորեն:  
— Ուզում եմ ասել, ժամանակն ե արդեն, վոր դու քո-  
տեղը գրավես աշխարհում,— ասաց հայրը,— բավականին  
կյանք ես տեսել և հասկանում ես արդեն, թե ինչ եմ  
ուզում ասել. վու չես կարող մինչեւ վերջը վորպես հորդ  
զավակը մնալ, պետք ե ինքնազլուխ լինես. մի որ կարող  
եմ մեռնել, իսկ պետք ե մեկը լինի, վոր իմ գործերը կառա-  
վարե: Յել հետո, գուցե ցանկանում ես ամուսնանալ.  
հիշիր, վոր արդեն յերկու անգամ ցանկացել ես (Ռոբբին  
շիկնեց). հետո յերբ ընտանիք զաղմես, կտեսնես, վոր նրանք  
շատ բան կսպասեն քեզանից, ինչ վոր դու եյիր սպասում  
ինձանից: Մարդու կյանքը, զավակս, կորիվ ե, և հասնում ե  
ժամանակը, յերբ ամեն մարդ ստիպված ե լինում պայ-  
քարել:

Ռոբբին առաջ չեր իմանում, վոր իր հայրն այդպես  
փիլիսոփա մարդ ե. և այդ նա համարում եր մի հետաքրք-  
րական փորձառություն իր համար Նրանց խոսակցու-  
թյունը աւեց մինչեւ ուշ կեսոր: Այդ ժամանակ Ռոբբին  
հօժարություն հայտնից ջանք գործ՝ դնել կատարելու իր  
պարտականությունները հասարակության հանդեպ:

## VII

Ռոբբիի հայրը մանուֆակտուրային մի քանի խոշոր  
հիմնարկությունների նախագահն ու գլխավոր բաժնետերն  
եր. միաժամանակ նա ամբողջ յերկրում հռչակ ստացած

դրամատեր եր, վորի ուժն իրեն հաճախ զգացնել եր տալիս համաշխարհային ապրանքաշուկաներում:

Այս բոլորի մասին Ռոբրին անորոշտրար գիտեր և անհետաքրքիր չեր ավելին զիտենալու. ուստի վորոշեց առավոտները ժամը տասին վեր կենալ և ավտոմոբիլը շուր տալ դեպի քաղաքի գործարար մասը: Այլևս ակումբներն ավելի ու ավելի նվազ եյին տեսնում նրան. և համարյա ել չեր լավում նրա ծիծաղը: Մի ինչ-վոր տարորինակ փոփոխություն եր կատարվել Ռոբրիի մեջ: Զգիտեմ, ուրիշ կիրագ ինչպես ավելի լավ կարող եմ բացատրել այդ յերեսութը, քան մի անգամ արդեն մեջ բերված նրա հոր խոսքերով՝ վոր նա սկսել եր հասկանար, թե մարդու կյանքը մի կոիվ ե:

Իր նախնական գիտելիքները կյանքի խաղային կողմէն եյին վերաբերվում: Յերբ մեկը մասնակցում ե գորֆ խաղին, գործ ե դնում իր ամբողջ ճարպիկությունը, տաղանդն ու վոչինչ չի ստանում, բացի մի արծաթն բաժակից և լրագրային գովեստից, իսկ յերբ նա խաղում ե արժեթրդութերի հետ, ստանում ե կանխիկ դրամի վաճառելի ապահովագրերի իրական մրցանակներ: Մը. Ռոբերտ վան Ռենսելլերը ջանք եր թափում սովորելու այս նոր խաղի կանոնները: Քանի վոր նա ճարպիկ եր և բացի այդ, ուներ մեծ դրամագլուխ, շատ շաւով նրա անունը դասվեց այն մարդ կանց շարքը, վորոնց պետք ե հաշվի առնել: Նա գլուխ բերեց մի քանի գործեր, վորոնք շփոթեցրել եյին իր պաշտելի հորը. շատ չանցած, վերջինս դադարեց այլևս եր վորդու հաշվին բանկային չեքեր ստորագրելուց:

Դեռևս հինգ տարի չանցած ցյերիտասարդ վան Ռենսելլերը մի քանի կորպորացիաների գլխավոր խորհրդում իր տեղն ուներ արդեն, վորտեղ իր առաջադրանքներն անհապաղ կատարվում եյին, իսկ յեթե յերեմն դրանք չեյին կերառվում, նա ընդունակ եր իսկույն այլ ձեւ տալու դրանց.

այդպիսի գեղքերում ընդհանրապես նախ քան մեկի գծունելը, նա խնդիրը շուռ տված, վերջացրած կլիներ արդեն:

Իհարկեն այս բոլորը չեյին կարող տեղի ունենալ առանց վորեև մի փոփոխություն մտցնելու նրա մեջ: Ճիշտ ե, վոք նա գեռես «Ռոբբի» յեր իր հին բարեկամների համար, և գեռես նույն բարեսիրտ անձը, վորի նմանը յերբեք չի յեղել Ճիշտ ե, վոր նա գեռ պահում եր իր զբուանավը, ավտոմոբիլն ու բնակարանը:

Սակայն առաջ նա վոչ մի թշնամի չուներ, մինչդեռ հիմա հազարներով կային դրանցից: Նա ամեն ող իր ժամանակը հատկացնում եր բուռն և հուսահատական մրցակցության, — այնքան դաժան, վորքան վորեև մի ջունգլ՝ յերբեք տեսել եւ: Այսպես, նրա բերանի անկյուններում ծալքեր գոյացան, իսկ հոնքերը միշտ կիտած վիճակումն եյին: Յեվ քանի վոր նրա գործերը բացարձակապես կանոնավոր վիճակ չունեյին, նրա խառնվածքն ել կորցրել եր առաջվաքաղցրությունը: Կարեոր նշանակություն ունի բացատրել այս, վորովհետև մեր իրարեկամն այդ որերում շատ անդամ հանդես յեկավ լրագրերում և մի հոռի տրամադրության դժբախտ ցուցադրության հետեանքով լայն հոչակ ստացավ: Այդ գեպքը պատահեց մեր նկարագրած նոր մարդ դառնալուց մի տասը տարի անց, յերբ արդեն անցել եր իր հոր տեղը՝ վորպես նախադան մի խոշոր և կարեոր մանուֆակտորային ընկերության: Ընթերցողը թնրես արդեն գուշակում ե, վոր ակնարկում եմ պատմական Հընդերվիլի պողպատի գործարանների և Հընդերվիլի մեծ գործադրությունը, վոք մի ժամանակ ցնցեց ամբողջ յերկիրը:

### VIII

Հընդերվիլ գործարանների ընկերությունն ավտգ վան թինակերի ֆինանսական տաղանդի սահղծագործություն-

Ներից մեկն եր: Գործարաններ գոյություն ունեյին առաջ,  
բայց աշխատեցվում եյին մի քանի մըցակից ընկերու-  
թյունների կողմից, վորոնք միշտ ել պայքարում  
եյին իրար դես, վորի հետևանքով այդ գործարանները  
ծաղրի առարկա եյին դարձել մարդկանց բերնում: Բայց մի  
որ արագորեն մի լուր հասավ Ուլության առաջ և ահա այդ  
ընկերության արժեթղթերի գինն սկսեց բարձրանալ սան-  
դուխքը միանգամից յերկ-յերկու աստիճան և, յերբ մի ան-  
գամ բարձրացել եր, այդպես ել մնաց աշխարհի գիմաց՝  
վորպես հաջողության մի մոնումենտ Ռոբերտ վան Շեն-  
սելլերն առանց աղմկի նրանով իրեն մի պատկառելի շահ  
եր ապահովել: Խակ մի քանի շաբաթ հետո նրանց գործերը  
միացան, վորից հետո Հընգերվիլ գործարանների ընկերու-  
թյան կարիերան բացվեց: Պայքար կար, իհարկե, և այն  
ել են սկզբից, պայքար սակագների, վոր տասնյակներով  
փոքր գործարաններ կործանեց: Ընկերությունը գրեթե  
իրեն ել կործանեց և մոտ եր սպանելու նաև իր գործավոր-  
ւերին: Մի քանի ամիս զործում եր ֆլոսով և ահեղ ու  
հեռատես նախագահի ձեռք բերած փողերով, մինչև վոր  
վերջապես յեկալ մի ժամանակ, յերբ մըցակիցներն իսպառ  
ջախջախվեցին. այս բոլորից հետո գները բարձրացան և  
ահա Հընգերվիլ ընկերությունն ապահովված եր:

Գործարանի բանվորների ոժանդակությամբ այս փոր-  
ձանքներն անկորստաբեր կերպով անցան, ուստի վերջում  
նրանք ներկայացրին մի նոր վարձացուցակ և քսան տո-  
կոսով աշխատավարձի հավելում պահանջեցին: Սրա դիմաց  
ստացան հինգ տոկոսի հավելում և աշխարհը վարդագույն  
դարձավ նրանց աշքին: Բայց շատ շուտով պաշտոյա պի-  
տակների գինը, վորն աշխատավարձի չափանիշն եր, սկսեց  
իջնել այնպես արագ, ինչպես վոր բարձրացան պողպատի  
բոլոր մյուս իրերի գները:

Մարդիկ նկատեցին, թե ինչպես նոր տարի փային որենքը  
նվազեցրեց պողպատյա պիտակների բաժը և հետաքրքրու-  
վում եյին իմանալու, թե ընկերությունը վորևե բան գիտե՞  
այդ մասին:

Դրանից մի քանի տարի հետո յեր, յերբ վրա հասալ  
այնպիսի մի ձեռ, վոր փողոցներում յերկու վոտնաչափ  
ձուն նստեց: Ածուխի գինն ամեն ամիս բարձրանում եր  
հինգ տոկոսով. Հընգերվիլ ընկերությունը՝ հանձինս իր նոր  
նախագահի՝ շարունակ բանավեճի մեջ եր այս կամ այն միու-  
թյան պատգամավորների հետ, մի ձանձրալի յերևույթ նա-  
խագահի համար, վորը նոր եր անցել գործի գլուխ: Վոչ վոք  
թող չկարծե, թե նա այս խնդիրներում խիստ եր: Կարող եյի  
որինակ բերել բարի կղերականի ունեցած փորձառությունը—  
այն կղերականի, վորը վայելում եր միությունների վստա-  
հությունը՝ նրանց շահերը պաշտպանելիս, — և պատմել, թե  
ինչպես նախագահը մի քանի կարևոր խնդիրների շուրջը  
խօսեց նրա հետ և վերջում խնդրեց թույլ տալ իրեն մեկ-  
նելու, վրովինետե այդ յերեկո ժամադրվել եր մասնակցելու  
պոկերի խաղին և ծիծաղելով խոստացավ կղերականին իր  
շահած բոլոր գումարը տար, ոգնելու համար չքավորներին:

Յեվ ինչպես կարող եր դրա դեմ առարկել մի բարի  
կղերական, մանավանդ վոր մի քանի ամիս առաջ մր. վան  
Ռենաբլերը նույն յեկեղեցուն նվիշել եր մի հրաշալի ցու-  
ցափեղի, վորը ներկայացնում եր ձկների և նկանակների  
հրաշքը: Ահարկու ձմեռն անցավ առանց փոփոխության.  
պողպատյա պիտակների գները մնացին նույնն, առանց  
բարձրանալու. Հընգերվիլի խնայողական բանկը դադարեց-  
րեց գործը, վորովինետե ավանդները շատ քիչ եյին, իսկ  
Հընգերվիլի վոստիկանները կազմ ու պատրաստ հոկում  
եյին, վորպեսպի վորևե խռովահույզ խոսք չարտասանվի  
Հընգերվիլի գարեջրատներում խմբված ամբոխի մեջ:

Սակայն ամբողջ ամառը հսկա գործարաններն աշխատեցին՝ արտադրելով որական հազարավոր տոններով պողպատ՝ տասնյակ հազար գոլլարի արժողությամբ։ Պատգամավորները չեյին կարող յերկար ժամանակ տեսակցել նախագահի հետ, քանի վոր Ռոբերտ վան Ռենսելերի համար շինված յերկու հարյուր հիսուն հազար գոլլարի արժողությամբ «Ազրորան», Նյուպրտի այդ հոյակապ մենակցորդողը (*Singlare-Sticker*) որերում ելեկտրականություն եր տալիս ամբողջ շրջակայքին։

Ապա վրա հասան աշնան ցուրտ որերը՝ վորպես հեռանկար մի այլ խստաշղունչ ձմրան, վորի հետևանքով պողպատյա պիտակների գներն իջան յերեք տոկոսով։

Մը. Ռոբերտ վան Ռենսելերի հոյակապ զբոսանավը — «Գիսավորը», գըեթե մեկնելու վրա յեր գետի Ֆլորիդայի ժողովերը, յերբ հույժ շատապ մի հեռագործ հրավիրում եյին նրան Հընգերվիլ հայտնելով, վոր ճգնաժամը վրա յե հասնում։

Ճիշտ վոր մի քիչ վատ կացություն եր ստեղծվել, — նույնիսկ նախագահը կարող եր խկույն նկատել այլու Յեթե մեկը զուրս գար Հընգերվիլի փողոցները, կտեսներ գունատ և հիվանդություն յերեխաներ, կորացած ու վտիտ կանայք, այրեր, գորոնք կախ ընկած հոնքերի տակից շողազուբեկ աչքերով նայում եյին իրենու կտեսներ կիսավեր տներ, վորտեղից գուրս եյին գալիս սովատանջ մարդիկ, կտեսներ զայրացած ամբոխը, վոր լսում եր վայրենի հայացքով՝ մարդկանց հրապարակախոսությունները՝ լիներեն և այլ ոտար լիդուներով։ Այս բոլորը նշանաբեց նախագահը, հենց վոր նրա մեքենան անցավ այս փողոցներից, սակայն նրանք վորնե յերկուուղ չաղղեցին նրան։ Իսկ յերկարատե և վրդովահույզ խորհրդակցություննէց Միության պատգամակորները վերադարձան և հայտնեցին, վոր բոլոր առաջարկ-

ները մերժված են: Հաջորդ առավոտյան լրագրերում կարելի յեր կարդալ, վոր միությունները վերջնական խորհրդականություն են պահանջում և վոր յեթե այս անգամ ել վորչինչ չտրվի, գործադուլը կսկսվի և պայքարը կտարվի մինչև վերջ:

## X

Սկզբում նախագահը կատաղած տրամադրություն ուներ, յերբ գնաց այդ խորհրդակցության, «Գիսավոր» նավարկումը դեռ մի որ ել պիտի հետաձգվեր: Բացի այդ, մի հինգ րոպե առաջ եր, վոր քար եյին դցել նրա գլխին: յես հիշատակում եմ հատկապես քարը, վորովհետեւ, ինչպես ասացի, մի անախորժ դեպք տեղի ունեցավ խորհրդակցության մեջ:

Հոկտեմբերյան մի որ, կեսորից հետո, ութ հոգի հստած եյին մի յերկար սեղանի շուրջը՝ սրանցից՝՝յոթը՝ դժույն կողդոջուն՝ ձեռներում պահել եյին իրենց գլխարկները: Հղագրգությամբ նայում եյին իրար: Նրանց դեմքին զրոշված եր տագնապի մի զգացում, հալածված լինելու միշտահայտություն, վոր ծանոթ ե վորսորդներին, բայց վորին նրանք ուշագրություն չեն դարձնում: Յեվ ահա, մը Ռոբերտ վան Ռենսելլերը:

Բավական ժամանակ ե անցել այն որվանից, յերբ վերջին անգամ տեսել ենք նրան: Հիմա նա քառասուն տարեւ կան ջննալմեն եր, մի քիչ ավելի սարմնեղ և մի քիչ ել բոսորագույն — բայց վոչ այնքան: Միշտ նշանավոր ե յեղել նա, առնվազն դիպլոմատի կամ գեներալի տեղ կընդունեյիք նրան: Մի նուրբ գունատություն կար հենց նրա շրթունքների չորս կողմը: Նա խորհրդակցությունը բացեց այնպիսի մեղմ տոնով, վորի բռնազբոսիկ լինելն աման մարդ կարող եր նկատել:

Սկսեց հենց սկզբից. բացատրեց գործարանի կորուստ-ները և թե ինչպիսի խարխուլ հիմքերի վրա յե գտնվում նա այժմ. Հիշատակեց նոր մեքենաների մասին՝ մատնա-նշելով, թե վորքան թանկարժեք են նրանք. Նրանց առաջ թափեց կապոցներով թղթեր և բացատրեց, թե ինչպես նոր մեքենաներն ավելացրել են արտադրանքը, վոր հավասար ե աշխատավարձի հավելմանը: Նա կանգ առավ պողպատյա պի-տակների գների վրա. մեծ խնամքով քաղված թվական տվյալ-ներով ցույց տվեց ներկա շուկայի դրությունը և ապացու-ցեց, թե շուտով ինչպիսի գներ են գոյանալու: Մոտ յերկու ժամ տևողությամբ ճառը բոլորը լսեցին սեեռած աչքերով:

Ի վերջո, պատգամավորներից մեկը, մի քիչ ջղուտ և սեամորուս մի հունգարացի, ձայն խնդրեց: Խսկույն շեղ-վելով նյութից, սկսեց վիճաբանել և մեջ բերել կենսամթերք-ների գինը և բանվորների վիճակը, — մի բան, վոր խիստ ձանձրույթ պատճառեց նախագահին: Վերջինս աշխատեց նրա ուշադրությունը դարձնել խսկական խնդրի վրա, կըր-կին թղթերին վերադառնալով, վորից հետո յերկուոն ել հետ-ու առաջ ընդդիմախոսեցին յերկար ժամանակ: Մի քանի անգամ մը. վան Ռենսելերը կոկորդում խեղդեց զայրույթի այս կամ այն բառը:

— Դուք խոսում եք բանվորների դրության մասին, — բացականչեց նա ձեռքի մատիտով խփելով սեղանին, — բայց յես ի՞նչպես կարող եմ բարելավել նրանց վիճակը. դուք ասում եք, վոր նրանց աշխատավարձով ապրել չե կարելի, իսկ ով կարող ե լուծել այդպիսի մի խնդիր. ի՞նչով վոր ժեկը կարող ե ապրել, մյուսը չե կարող: Ի՞նչ կլինի հետե-վանքը, յերբ բանվորները շուայլորեն գործածեն իրենց աշ-խատավարձը և հետո վեր կենան ասեն ինձ, թե չենք կա-րող ապրել դրանով: Ի՞նչ... — Այստեղ նախագահը կանդ առավ, հսնքերը կիտեց և շարունակեց տարբել տոնով.

— Սակայն միտք ել չունի նման խնդիրների շուրջը վիճելը Յես աշխատում եյի բացատրել ձեզ շուկայի դրամթյունը և թե ընկերությունը ինչ կարող է անել. յես ավելի վոչինչ չեմ կարող անել Զպետք և մոռանաք, վոր մինք մեր առջև ունենք պատահարներ, վոր ընկերությունները նույնպես կարող են կործանվել: Տնտեսական յերկույթների կանոնները շոշափում են ընկերությունների վիճակն այնպես, ինչպես մարդկանց վիճակը. կան նաև ընկերությունների համար ապրելու սահմաններ...»

Նախագահը կանգ առավ, յերբ ընդդիմախոս պատգամավորն իսկույն դիմաել տվեց.

— Մենք չենք տեսնում վորեն նշան, վոր ընկերությունը տառապում ե չքավարությունից:

Նախագահը մի սուր հայացք զցեց նրա վրա:

— Ե՞ս, — հարցրեց նա:

— Ասում եմ, — կրկնեց պատգամավորն ավելի բարձրացնելով ձայնը, — թե ով ել վոր հետաքրքրվելու լինի, կարող ե իմանալ, թե այս քաղաքում ինչե՛ր են պատտհում բանվորների հետ. յես զիտեմ, վոր յերեկ մի յերեխա մահացավ քաղցից, բայց յերբեք չեմ կարդում, վոր ընկերության վորեն պաշտոնյա տառապելիս լինի կարիքից:

Կարմրությունը խփեց նախագահի դեմքին:

— Ուզում ես անպայման քո անպատկառությանը ցույց տալ, — բղավեց նա:

— Միտք չունեմ այլպիսի բան անելու, — ասաց պատգամավորը խորը լուսության մեջ. — բայց դուք առանց վարանելու խօսում եք բանվորների շուայլության մասին...

Մը. Ռոբերտ վան Ռենսելլերը ձեռքը խփեց սեղանին:

— Դե՞հ, — բղավեց, — խնդիրն արդեն շատ հեռուն գնաց, և հենց հիմա հարկավոր ե վերջացնել. դուք շատ հեշտ կարող եք թողնել ձեզ հիմարությունը և հասկանալ, վոր Հըն-

գերվիլ գործարանները պատկանում են Ռոբերտ վան Բեն-սելիրին, և վոչ թե ինչ վոր միության կամ վորեմ մի ուրիշի և վոր նրանք պիտի աշխատեն այն ձևով, ինչպես կամենում ե Ռոբերտ վան Բենսելիրը, վոր նրանք աշխատում են նրա շահի համար, վոր վճարումները պիտի լինեն այնպես, ինչպես նա յե վորոշում և վոր ով չի հավանում, բարի ճանապարհ ենք մաղթում, կարող ե գնալ այնտեղ, վորտեղ ձեռնտու յե իրեն, իսկ դուք գնացեք դուրս և հաղորդեցեք այս՝ վորպես իմ պատգամը և անիծված լինեք, յեթե մեկ ել կաք այստեղ, իմ գրասենյակը և ինձ կրկին վիրավորեք:

Ապա կանգ առավ. բարկությունից կարմրատակել եր: Մի կես րոպեյի չափ միության անդամներն աչքերը չուծ նայում եյին նրան և իրարու: Ի վերջո նրանք բարձրացան տեղերից և սենյակից դուրս յեկան, թողնելով նախագահին, վորը փայլատակող աչքերը սեռնել եր նրանց յետեկց փակված դռանը:

## XI

Յերբ վան Բենսելիրը դադարեց սենյակում քայլելուց՝ ստեցավ սեղանին և հրամանագիր գրեց փակել գործարանները: Հետո յերկու հեռագիր ուղարկեց, մեկը նահանգապետին, իսկ մյուսը շերիֆին<sup>6</sup>, վոր բանի գործողություններն սպառնալից են. կոչ եր անում որենքը պարտադրել և հայտարարում, վոր ամբողջ մասն ընկնում ե գավառի վրա: Դրանից հետո նա զանգահարեց իր կասավարչին:

— Մը. Փրայնդեր,—ասաց նա, —յես փակել եմ գործարանները և մտադիր եմ գրանք հանձնել ձեր պատասխանատվության. կվերցնեք յերեք հարյուր մասնավոր դետեկտիվներ (գաղտնի վոստիկան) կամ յերեք հազար, —վորքան անհրաժեշտ ե կույքերի պաշտպանության համար. հե-

տո հավաքել կտաք նոր աշխատող ձեռքեր և մի շաբաթից գործարանները կրկին պետք ե շարունակեն աշխատել մոչ մի ավել-պակաս խոսք թույլ մի տար. ուղում եմ ասել վոր պետք ե ընդմիշտ վերջ տալ այս անհարմարություններին: Դործարանները պետք ե աշխատեն,—և աշխատեն անմիջապես, յեթե նույնիսկ հարկ լինի նահանգի բոլոր զորքերը վոտքի հանել դրա համար: Այսքան. միայն իմացեք, վոր վոչ մի դեպքում միության անդամներին հետ չպիտի վերցնել աշխատանքի, բացի նըանցից, վորոնք կուզեն վորպես անհատ աշխատել: Մազթում եմ ձեզ բարի հետ-կեսոր:

Նա հագավ իր վերարկուն, դուրս յեկավ շենքից և մտավ իր ավտոմոբիլի մեջ: Դրաւմ թեթև անձնե եր մազում: Նա պինդ կոճկեց վերարկուն և նստեց, աչքերը հառելով դեպի տռախ մինչ մինչ սկզբանականութեան վաղացավ կանկարծ կանկարծ առավ. նա սթափվեց իր մտազբազ վիճակից և տեսավ, վոր ճանապարհը խափանված ե մի խուռն ամբոխից:

Նըանք գտնվում եյին մի կործանված տան դիմաց, վորի խղճալի կահ-կարասիները գուրս եյին քերված և տեղավորված ժայթի վրա: Ցերկու սովալլուկ և դողահար մանկիկներ կզել եյին մի հին մահճակալի, վորը դուրս եյին քաշուս դռնից: Իսկ մի կին սողոսկում եր դեպի դուռը տանող ճանապարհով, նըա գրկում յեղած մանկիկը լաց եր լինում հիստերիկ կերպով և խռովու ձայնով:

Հանկարծ չորս կողմը կանգնած մարդիկը նշմարեցին, թե ով և սեքենայի մեջ: Աղմուկ բարձրացավ. «Վան Ռեսսելերն ե, վան Ռենսելելեր»:

Ալիքի պես ամբոխը շրջապատեց նըան. աղմուկն ու շվոցը ողը լցրին. տղամարդիկ թափ եյին տալիս իրենց բռունցքները, կանայք չարախինդ կերպով ճշում, իսկ մեկն ել որ քար ոցեց. նախաղան առաջ թեքվեց դեպի շոփերը: «Քշեր», գոռաց նա, «քշեր»:

Շոփերը վարանեց, յերբ տեսավ, վոր ամբոխը յետեից  
ու առջևից շրջապատել եր իր տիրոջ: «Քշիր» ճշաց նորից  
վերջինու:

Շոփերը վորոքը սեղմեց և նրանք կատաղածի պես առաջ  
սուրացին: Ամբոխից մի քանի հոգի գետին խփվեցին. մնա-  
ցածներն ահարեկված ցիրուցան յեղան:

Իսկ փողոցով սուրում եր մեքենան իր վրա նետվող  
իրերի և անեծքների տարափի տակ:

## XII

Մր. Ռոբերտ վան Ռենսելլերը քշել տվեց զեպի կառա-  
տունը, վորտեղ կեցած եր իր սեփական մեքենան: Քաղաք  
Հասնելուն պես, նաև մի բան խմեց, հետո նըստեց և սկսեց  
**Յիթի և մասմիկ մինչի նասան կառատուն Այսուհետ**  
փողոցից լսեց «Եքստրա», եքստրա» կանչող լրագրավա-  
ճառի ձայնը: Մի լրագիր դնեց, ցատկեց ավտոմոբիլի մեջ  
և «զեղի տուն» խոսքն ասելուց հետո յետ լնկավ հենա-  
ցանին և սկսեց կարդալ նորությունները: Խորհրդակցու-  
թյան ամբողջ պատկերը տրված եր լրագրում, նկարագրու-  
թյունը սովորական ձևով զեղեցկացրված,—և՝ գործադրու-  
անելու վորոշման պատմությունը, և՝ խոռվության սկիզբը:  
Կային նաև մի քանի վայրագ խմբագրականներ,—մի «զե-  
ղին» թերթ եր: Մր. Ռոբերտ վան Ռենսելլերը կարդաց և  
ժպտաց:

Նա հասավ իր քնակարանը, վորը պետք ե ասել, այլև  
մի փոքրիկ հարկաբաժին չեր, այլ մի փառահեղ դղյակ, մի  
քանի հարկ բարձր իր հայրենի տնից: Դեռևս մտածում եր  
գործադրությունների մասին, ուստի ցնցվեց և զգաստացավ այն  
ժամանակ, յերբ մատակարարը դուռը բանալով ասաց.

— Ներեցնք սըր, հյուրասենյակում մի տիկին և սպա-  
սում ե ուզում ե տեսնել ձեզ:

Մը. վան Ռենսելերը լալն բացեց իր աչքերը:  
— Մի տիկին:—  
— Մի տիկին, կարծեմ, ուր, — ասաց մատակարարը:  
— Ինչպես և անունը:  
— Նա վոչ մի անուն չտվեց, ուր, միայն ասաց, վոր  
պետք և տեսնի ձեզ և վոչ մի կերպ չի ուզում, վոր մերժեք  
ընդուներ:

— Հըմ, — ասաց մյուսը: Ինքս կգամ ներս:

Ցեղ անցնելով ներս, նայեց կնոջը, վորը մի թանձր քող  
ուներ դեմքին: Նա վոտքի կանգնեց և մի կողմ գցեց քողը,  
բացելով մեռելագույն մի դեմք, վորից մյուսը յետ քաշվեց:

— Ճանաչում ես ինձ, — հարցրեց նա:

— Ե՞... վոչ, — ասաց մը. վան Ռենսելերը:

— Միթե իրոք չես ճանաչում ինձ, Ռոբրի:

Ցեղ հանկարծ մը. վան Ռենսելերը շնչահեղ բացական  
չեց.

«Դեյղի»:

— Այս, — ասաց մյուսը, — Դեյղին:

Նրանք նստեցին և մի ամբողջ սոպե, անխոս իրար եյին  
նայում: Կինը՝ բաճկոնը հագին լիքը դեմքով, իսկ նա՝ վոր  
պես կմախը:

— Լավ, — ասաց նա հանկարծ, — Ի՞նչ ես ուզում:

— Ուզած շատ բան չե, — պատասխանեց կինը, — մեռնում  
եմ Ռոբրի, գիտես այդ:

— Ի՞նչ ե պատահել, ի՞նչ հիվանդություն ունես:

— Հյուծախտ:

— Վահ. յերկամր ժամանակվա բան և այդ ի՞նչ եյի  
անուել:

— Ապրում եյի հյուսիսում, Ալբանիայում. գիտեմ, վոր  
անունս փոխեցի հենց վոր մեկնեցի Նյու-Յորկից: Մի յե-  
րեխա ունեմ, եռոբրի:

— Ո՞հ, —բացականչեց մյուսը. համոզված եմ, վոր տղա յեւ  
— Վհչ, աղջիկ եւ  
— Հըմ, պետք եւ լինի... կաց ասեմ..., տասներկու տա-  
րեկան:

— Տասներեք, Ռորբին Հենց դրա համար ել յեկել եմ տես-  
նելու քեզ:

— Այդպես ել կարծում եյի: Նա այստեղ, Նյու-Յոր-  
կումն եւ:

— Վհչ, Ալրանիում, մի քանի բարի մարդկանց մոտ:  
Զկարողացա նրան բերել այստեղ, բայց յես... յես...

Կինը կանգ առավ և մի ռոպե նայեց նրա աչքերին. տպա  
արագ-արագ շարունակեց՝ դեպի առաջ մեկնելով իր վտիտ  
բազուկները:

— Մի բան արա նրա համար, չես մերժի, չե՞: Ահա բո-  
լորն, ինչ վոր ուզում եյի. յես յերկար չեմ մնալ այս աշ-  
խարհում և չեմ կարող ոգնել նրան, իսկ դու կարող ես: Յես  
դաժան կյանք եմ վայել, բայց նա գաղափար չունի այդ  
բոլորի մասին. նրան եմ տվել այն մանյակը, վոր դու նվի-  
րել եյիր ինձ, բայց նա տեղյակ չե գաղտնիքին, նույնիսկ  
հոր անունը չգիտե: Յես յերեք չեմ ճանձրացրել քեզ,  
Ռորբի, բայց արա նրան այն բոլորը, ինչ կանեյիր ինձ  
համար:

— Կարծեմ վաղեմի ջենտլմենը բավականին լավություն-  
ներ եւ արել քեզ, չե՞,—ասաց նա, փաստ հաստատելու ձե-  
վով:

— Յես չեմ տրտնջում, ասաց կինը, —միայն խոռը տուր,  
վոր կդանես նրան և խնամք կտանես. դրանով մեծ կո-  
րուստ չես ունենալ... խոստացիր, խոստացիր, խնդրում եմ:

Նրա ձայնը դողդողաց, ապա նա հենվեց աթոռին և ձբդ-  
վեց դեպ առաջ՝ մնալով ցնցվաղ դրության մեջ:

— Խոստանիմ ես, —ասաց կինը շնչահեղձ:

— Այս, խոստանում եմ:

— Եատ բարի, —ասաց կինը, կամենալով վեր կենալ — Բոլորն այդ եր, ինչ վոր ցանկանում եյի: Յերբեք նեղություն չես կը ի նրան գտնելու համար. նրա անունը... նրա անունը...

Հանկարծ նաև յերերաց, յետ ընկավ և կպավ աթոռին: Նրա դեմքը քաթանի պես սպիտակեց, իսկ կոկորդից սարսափելի մի ձայն դուրս յեկավ: Մյուսն առաջ նետվեց և բռնեց նրան. կինն ընկավ նրա զիրկը: Վերջինս ողնության կանչեց, իսկ յերբ մատակարարը ներս մտավ՝ նրան ուղարկեց իսկույն մի քեր<sup>8</sup> բերելու:

— Նրան տարեք փողոցի անկյունում գտնված հիվանդանոցը, —հրամայեց նա:

Հեացող մարմինը դուրս տարան: Իսկ մը. Ռոբերտ վան Ռենսելերը մտախոհ և դանդաղ կերպով գերև բարձրացավ: «Դիվային ձանձրության մտածեց ինքն իրեն, սրանից հետո ինչպես կարող իմ գտնել աղջկան:

Յերբ մատակարարը վերադարձավ՝ նա հիվանդի մասին հարցըն անձկությամբ:

— Նա մեռավ հախքան հիվանդանոց հասնելը, —պատասխանեց նա:

### XIII

«Դեյղիի» մահն ավելի և ավելի վշտառիթ թվաց Ռոբերտ վան Ռենսելերին, ինչքան ավելի մտածեց նա այդ մասին: Նրա նման մի առատաձեռն մարդ չպիտի տատանվեց մի քանի հազար դոլար ուղարկել աղջկան: Բայց դրանից ամեն տեսակի զժվարություններ կարող եր ծագել: Աղջկա նույնությունը հաստատելու վոչ մի տվյալ չկար, իսկ յեթե զիմեր վոստիկանությանը, վորպեսզի գոնեյին հեք կնոջ զավակին, այն ժամանակ ով գլուխ մինչև յերբ

կտեսը այդ սկանդալը, այնքան մարդիկ կան, վորոնք պատրաստ են միշտ չարիք սպասելու հարուստ մարդուց. բացի այդ՝ հարյուրավոր մարդիկ ճանաչում եյին ֆեյզիին: Ճիշտ ե, վերջերս վոչ վոք նրա մասին չեր մատածում, բայց ով գիտե, ինչքան ժամանակ կտեսը, մինչև վոր սկսելին բարասել յերկուսի մասին և ամբողջ քաղաքում շաղակրատության ու աչք-խաղոցի առարկա դարձնելին իրենց: Իսկ յեթե նա գործը հանձներ իր հատուկ դետեկտիվներին՝ միևնույն ե, նա դարձյալ կասկածի տեղի պիտի տար: «Մարդ չի կարող մի բան հայտնել այդպիսի մարդկանց, — ասաց նա ինքն իրեն. — դրանք կարող են հայտնաբերել վողջ պատմությունը, իսկ դրա հետևանքով ամեն ինչ կարող ե պատահել»:

Վոչ մի կերպ հաճելի չե մտածել, վոր քո իսկ մարմինն ու արյունը տառապում ե կարիքից: Սակայն վան Ռենսելիրը մտածեց, թե հավանաբար կգտնվեն մարդիկ, վորոնք ինսամք կտանեն այդ աղջկան: Իսկ վոր նա յերբեք տորիթ չի ունեցել հարստանալու, կնշանակե վոչ մի տարբերություն ել չի զգա: Մյուս կողմից ել, յեթե ինքը վոր ուղարկի նրան - շատ հավանական ե, վոր այդ նրան կծառայի շրայլություն սովորեցնելու և նրան գայթակղեցնելու: Ուստի թվում ե, վոր նրա պարտականությունն ե թողնել ամբողջ ինդիրն ինքն իրեն և մոռացության տալ այդ:

#### XIV

Այս բոլորի մասին նա խորհում եր այն ժամանակ, յերբ սպասափորի ողնությամբ հագնում եր իր վերնազգեստը, վորից հետո նա իջավ ներքե և մտավ ավտոմոբիլը. Կես ժամից նրանք հասան նավամատույցը. արգեն արել մայր եր մտնում, անձրեն ել դադարել եր, իսկ գետը՝ վոսկեզօնվել: Ավտոմոբիլից իջնելով վան Ռենսելիրը ծովի թարմ զերչյուորի մեջ կազդուրվեց և շարժվեց դեպի սպասող «Քիսա-

վորը»: Եռգին դուրս եր հոսում զբոսանավի ձագարներից.  
խակ նավապետը կանգնած եր անցատախտակի վրաւ  
— Ամեն ինչ պատրաստ ե, սը՛ր,—ասաց վերջինս:  
— Բոլորն ել նավի վրա յեն, — հարցըեց նավատերը:  
— Կես ժամից ի վեր, սը՛ր:  
— Եատ լավ, առաջ շարժվինք:

Ապա զանազան հրամաններ տալով, Ռորերտ վան Ռեն-  
աելերը շարժվեց առաջ՝ դիպի նավի հետակողմը, վորաեղ  
մի դյուժին կանաչը և ջենալմեններ բազմել եյին՝ փա-  
թաթված իրենց տաք վերաբերների և շալերի մեջ, և վա-  
յելում ելին հրաշալի տեսարանը: Նրանք ծիծաղելով բարե-  
փեցին և բարի գալուստ մաղթեցին: Ուրախ և զվարթ լի-  
նելու մեծ շարժառիթ ունեյին, վորովենու Ռորերտ վան  
Ռենսելերի նման հյուրընկալ չկար ամբողջ Ամերիկայում:

Հյուրերն ել նրան արժանի մարդիկ եյին. այդտեղ եր  
անդուզական տիկին Դայեմանդըստը, յոթանասուն միլիոնի  
և ամբողջ հասարակության այդ տիրուհին, այդաեղ եր տի-  
կին Մայներ-Գոլդը, վորի անունը հիսուն յոթ ու կես մի-  
լիոնի արժողություն ուներ: Այստեղ եր Վիկտոր դը Վերը,  
վայելչության տիպար և ամենասրամիտ մարդը քաղաքում.  
այդտեղ եյին Պիղջինը մեծ Ստիլ տրեստից և Մերջեմը՝ քա-  
ռասուն յերկու յերկաթուղիների տերը: Այստեղ եր միս Պա-  
րագոնը, „debutante“<sup>9</sup>, վորի համար ամբողջ քաղաքը զըժ-  
վում եր. այստեղ եր և նորին շնորհափայլություն զուքս  
Պետիտեբուրաը, Ֆրանսիայի նշանափոր այցելուն, վորը բա-  
ցականչել եր, թե միսս Պարագոնը „ravissante-un misacle“!  
(հիասքանչ մի հրաշք ե): Պարզապես հանդգնություն ե այս-  
պիսի սի կամպանիա կազմող անձերի անունները. մեկ-մեկ  
տալ նրա վեպում:

— Իսկ ահ, ի միջի այլոց, ինչպես վերջացրիք զործա-  
դուի խնդիրը, — հարցնում ե տիկին Դայեմանդըստը:

— Գործադրությունը — արձագանքում ե մը. Ռոբերտ վան Շենսելլերը (նա կատարելապես մռացել եր), — «Գիսավորի» վրա գործադրուլներ չկան»:

## ХV

Այդ որը յերեկոյան ժամը իննին, զբոսանավի հյուրերը, Սանդի Հոռկից քսան մղոն հեռու ճաշի նստեցին գահնիճում: Մը. Ռոբերտ Շենսելլերի ճաշկերութներն այն տեսակից եյին, վորցնք շուտ չեն մռացվում. այդպես եր նաև նրա ճաշելու դահլիճը:

Ցերկու փառավոր հարկաբաժիններ կային «Գիսավորի» վրա. մեկը, վորի հետ մենք հիմա զործ ունենք, լուսավորված եր եւեկորական փողփողուն լույսով, գտնվում եր բոցափայլ ըյուրեղների և արծաթի մեջ: Պատերից մեկն զբաղեցրված եր մի մեծ քուֆերով, վոր շողում եր միենույն շույսի տակ, իսկ մնացած յերեքը ծածկված եյին բնական մեծություն ունեցող նկարներով, ճոխ գույներով փայլեցրած, վորպիսին միայն մեծ արվեստագետներն են անում: Նյութը կազմում եր Դեկամերոնը, — գեղեցիկ այգիներ՝ վայելչագեղ կանանցով և ժամանակակից շքեղությամբ հագնված ջենտլմեններով, վորոնց վերև սավառնում եյին անմահ կերպարանքներ, վորոնք ճոխացնում եյին նրանց յերազանքները, — ողային հանդես՝ բանաստեղծի վառ յերեակայությամբ հորինված,

Իսկ սեղանը: Մը. Ռոբերտ վան Շենսելլերը լոկ ամերիկյան միլիոնատեր չեր, այլ և գերազանց կուլտուրայի տեր մարդ, նույնպիսի մի ճանապարհորդ և գնահատող — արվեստագետ: Նրա սեղանի ամեն մի ամանեղինի կտոր անհատական, ինքնուրույն բնույթ եր կրում, վորոնցից շատերը հոչակավոր անձանց գործեր եյին: Սեղանի սփռոցը մի հոյակապ ստեղծագործություն եր, արծաթի և վասկու

փայլով — „D'après Meissonier, XV-me sic cle“: Սեղանի ծայրերում կային վոսկյա սակառիկներ՝ աննման գեղեցկության հնդկական որխիդներով (orchid): Յուրաքանչյուր նստելու տեղում զրված եր սաթինի վրա ձեռանկարված մի ճաշացուցակ, վոր խոստանում եր նըբաճաշակ և աննման հացկերույթ:

Մը. Ռոբերտ վան Ռենսելերի գինիները մայրաքաղաքի բարձր հասարակության պըրոբիներից մեկն եր կազմումնա դրանք ստանում եր արտասահմանից, իր սեփական մի անհայտ կալվածքից, — յեթե, իհարկե, սատանայի հետ դաշն կապած լինելու միջոցով չեր ստանում: Բավկական ե ասել, վոր Նյու-Յորկի վորեն մի կին կամ այր ուրախությամբ կդրժեր ուրիշին տված իր խոստումը՝ Հընգերվիլ զործարանների ընկերության նախագահի գինիների համար: Յեկ յերբ նրան վորեն հարց կտրվեր գինու վերաբերյալ, նա սոսկ կժպտար դյութանքով և կասեր „on ne parle pas de cele“ — (զրա մասին չեն խոսում):

Սուպից հետո մատուցվեց մի շիշ հիանալի Մաղեյրա, իսկ հետո, այսպես առած, վորպես նախերգանք, Սիցիլիայի չոր գինի, վորի դադտնիքն իմանալու համար, ինչպես հայտնի յեր, ինչ-վոր բանկի մի նախագահ պարգևատրություն եր խոստացել: Առաջին մատուցումն եր Բուրգունդիի գինի, — *Type côte de tuits*, — մի յուրահատուկ համ ունեցող գինի, վոր յետ չեր մնում Բորդոյի գինուց: հարուստ և կիզիչ մի փոքր ենվելորրէ, բայց գերազանցորեն նուրբ և համեր:

Յերկորդ մատուցումը շամպայն եր խորովածի հետ — վհչ այն տեսակից, վոր մարդ փողով ե գնում, այլ այնպիսին, վոր նրան այցելում ե յերազում: *Entremets-i* («իշնախորտիկ») հետ մատուցվեց Բորդոյի գինին, — *Saint Estephe*: Ապա կար և մի այլ շամպայն. իսկ անուշեղենի հետ պորտվեյն, նոր տեսակի, մուգ ծիրանագույն: Նորին

շնորհափայլություն դուքս դը Պետիտեբուրուը բարձրացէ եց բաժակը և յերկար ժամանակ աչքերը հառած մնացին զինուն. կամպանիան հետաքրքրությամբ լսում եր նրա կարծիքը, վորովիետև նորին շնորհափայլությունը մի հոչակառվոր վորկրամոլ եր՝ „Magnifique<sup>10</sup>... դիտեց նա մտախոհութամբ, cest d'un goût savoureux d'une grande rondeur: corsé, mon Dieu“:

Այսպես եյին գինիները: Մնում ե միայն հիշատակել փոքրիկ նախասենյակը, վորտեղից լավում եր թագնված կվարտետի դյութիչ հանկերզը: Ինչ զերաբերում ե կամպանիային՝ պիտի ասել, վոր աննկարագրելի յեր. մարդ անկարող ե նկարագրել նույնիսկ տիկին Դայեմանդըստի ճաշկերույթի պարեգոտը՝ յեթե անգամ մի հատիկ գլուխ հատկացվի դրան: Գալով խոսակցությանը՝ համախմբեք աշխարհի elite (սիասին) և նրանց հոգիները բոցավառեք յերկնային գինիով, թերեւ լինեն ուրիշ հեղինակներ, վորոնք կարողանան նկարագրել նրանց խոսակցությունը, բայց յես չեմ կարող:

## XVI

Կես գիշերին հյուրերը բարձրացան տախտակամածի վրա: Մի փոքր ցուրտ, բայց յերկնային գիշեր եր. աստղերը պըսպղում եյին աղամահների պես, իւկ ծովը մեղմ որորվում եր. զրոսանավան արագորեն առաջ եր ընթանում, ջւրը մի կողմ նետելով մեղմ, հանդարտ ծփանքով, ինչպես մի շատրվանի միջիք: Ցրտից պաշտպանվելու համար տաք հագուստներ շատ կային, ուստի հյուրերը նստեցին խոսակցելու և գիտելու լայնածավալ ջուրը: Հետո մի քանիսը վեր կենալով զույգեր կազմեցին ու սկսեցին ման զալ տախտակամածի վրա: Մը<sup>11</sup>. Ռոբերտ վան Բենսելերը,—հյուրընկալը,—միսս<sup>12</sup> Պարագոնի հետ եր,— „Ravissante“: ի (սքանչելի). բայց

յերկար չտեղց, յերբ արգեն միսս Պարագոնը մրսել սկսեց, ուստի յերկուսով գնացին ներքէ գլխավոր դահլիճը:

«Դիսավոր-ի» հրաշալի մասերից մեկն եր մեծ դահլիճը, բայց մենք գործ ունենք միմիշայն նրա արևելյան անկյան հետ, վորի սարգավորումը կազմուժ եյին մի քանի դիվան-ներ, թանկագին միտաքսեղեններով և ասվեդործություններով հանդերձ և նուրբ ու մեղմ ցոլքով Լամաշը: Միսս Պարագոնը, մի քաղցրահայաց, թխորակ աղջիկ, յերկար ու սկ արտևանունքներով և հրապուրիչ նայվածքով, հառաչե-ով սուզվեց գահավորակի մեջ: Նա հագած եր ալ կարմիր միահյուս հրաշալի շրջազգեստ, իսկ նրա ձյունաթույր բա-զուկները, կատարելատիպ պարանոցն ու ուսերը միասին նրան դարձնում եյին մի պատկեր, վորին յերկար նայել անկարելի յեր: Մը. Ռոբերտ վան Ռինսկիլերը խոնարհվեց գեպի նա մեղմանուշ խոսակցություն սկսելով հետը և իր ծարավի աչքերը հագեցնելով նրան նայելով: Նա բավական խմել եր իր սեփական հրաշալի գինուց:

Կային այնպիսիները, վորոնք չտեսան այս գործի հով-վերգական կողմը, վորոնք չմտածեցին միսս Պարագոնի մասին, վորպես այդ գողարիկ, քնքշասիրտ, գեռահաս անձի, բայց վորոնք համոզված եյին, թե նա միանգամայն դիտակ-ցում ե, ինչ վոր անում ե: Իհարկե, Ռոբերին փակ աչքերով չեր և առաջուց խնդրի շուրջը խոսել եր իր հոր հետ: Միսս Պարագոնը ֆինանսավես դժվար թե իր աստիճանին հասներ, սակայն այստեղ արդեն Ռոբերին պատճառաբանուժ եր, վոր ինքը հիմա բավականաչափ հարուստ ե, վորպեսզի գեղեց-կությունը մի բանի տնդ հաշվի:

Ուստի նրա ձայնն ավելի և ավելի մեղմացավ, իսկ խոս-քերն առավել մեղրանուշ դարձան: Իսկ միսս Պարագոնը քաղցրահամբույր նայվածքով դիտուժ եր նրան, մինչև վոր սա հանդգնեց բռնել նրա ձեռքը: Նա չընդդիմացավ. իսկ այս

Հպումից վան Բենսելերի արյունն սկսեց խայտալ յերակ-ներում և նա դարձավ շատ պերճախոս։ Նա պատմեց աղջկան, թե վորքան ժամանակ հետեւելիս եւ յեղել նրան և թե վորպիսի հմայիչ եյակ եւ համարուժ նրան։ Իր թեվը կես-շրջան փաթաթած աղջկա շուրջը, մի ծնկի վրա հենված, նա շարունակեց հայտնել այն ամենը, ինչ անկարող եր ծածկել այնա, — վոր նա ամբողջ սրտով սիրում եւ նրան։ Իսկ հենց վոր հրաշագեղ անզուզական միսս Պարագոնն իր ամբողջ հմայիչ գեղեցկությամբ նրան շշնջաց իր պատասխանը, նա բուռն հոգեզմայլությամբ սեղմեց նրան իր սրտին և համբուրեց նրա այտերն ու շրթունքները։

Յերբ ուրախ խումբը ներքեւ իջավ, վան Բենսելերը գինի յեր լցնում մի հուրանից, վոր դրված եր կենտրոնի սեղանի վրա։ Մի քա՞նի բոպե հետո, յերբ բոլորն ել հավաքվել եյին այնտեղ, հյուրընկալը մի կողմ տարավ մը. Դ. Վերին, հոչակավոր պրախոսին, և ինչ-վոր բան ասաց. նրան, վորից սրախոսն սկզբում հարկադրվեց հառած աչքերով նայել նրան, իսկ հետո խփեց իր ազդրին, ապա մի անդիմագրելի ճառ ասաց, վորը ցնցեց ամբողջ կամպանիային։ Յեկ մինչ հյուրընկալը դպրոցական տղայի պես կանգնել եր շիկնած, ծափահարություններից ճնշված, մյուսները բացին մի քանի շիշ շամպայն ես ու մինչեւ ուշ գիշեր խմեցին ապագա միսիս Ռոբերտ վան Բենսելերի կենացը։ Արշալույսը բացվել եր, յերբ վերջապես մեկնեցին նրանք. յերկնակամարը շառագունում եր Մերիլանդի ծովի վրա, վորտեղից «Գիսավոր»-ը արագ թռչում եր դեպի հարավ։

## XVII

Դժանից հետո «Գիսավոր»-ի պտույտը նախապատրաստական մեղրալուսնի ձեն ստացավ. վոչ մի ուրիշ խումբ այսքան ուրախ ու յերջանիկ չեր նավարկել թափալվող

Ջրախորշերի վրայով, վոչ ել աշխարհիս յերեսին կար Ռոբրիք-նման մի յերջանիկ փեսացու։ Ամբողջ որը դիտում եր աղ նվափայլ պատկերը և ինքն իրեն շշնջում, վոր նա իրեն և պատկանում։ Այսպես նրանք նավարկեցին գեղի Ֆլորիդայի ծովափը և վերջապես հասան Պատ Բիչ և ափով բավական առաջ գնացին։ Այնտեղ նրան հանձնեցին մի հեռազեր ստորագրված Հընգերվիլ գործարանների հակիչի կողմից։

Մր. Ռոբերտ վան Ռենսելեր,  
Պատ Բիչ, Ֆլորիդա.

Խոռվությունները վերջացել են, գործադուլը ճնշվել գործադուլի մնաւէերը ծածկված են. գործարաններն ախատում են սովորական կերպով. վարձված են գլխավորապես վոչ միության անդամներ։ Լրագրները թունավորում են մթնոլորտը.

Գրայնդեր.

Մր. Ռոբերտ վան Ռենսելերը հեռազերը ծալեց, դրավ գրպանն ու ժապաց։ «Լրագրների հերն անիծած» ասաց նամատախոհությամբ և սպասավորին ուղարկեց դրանցից մի քանիսը ձեռք բերելու։ Յերբ ստացավ, նստեց նավի տախտակամածին և սկսեց կարդալ մինչ ծովի գով զեփյուռը հովհարում եր նրա ճակատը։

Ինչպես յերեսում ե, Հընգերվիլում բավական վտանգավոր ժամանակ ե յեղել։ Գործադուլավորները ժողովներ են գումարել, ամբողջ քաղաքը հուզման մեջ ե յեղել։ Տարօրինակ ե թվում, վոր մասուլի մի զգալի մասն այդ մարդկանց կողմն եր բոնել։ Բայց վոչ մի գործողություն տեղի չեռնեցել, մինչև վոր այնտեղ ոտարութի դեմքեր են հայտնվել, վորից հետո գործարանից վուսս գտնվող մի քանի հին, լըք ված բեռնատար վագոններ հրզենվել են։ Ապա հինգ հարյուր հոգուց բաղկացած վոստիկանությունն շտապել ե դեպի-

գործարանները, վորտեղ իսկույն կառուցվել ե մի բարձր  
ցանկապատ, հրածերպերով: Յերրորդ որն ընկերությունը  
ուղարկել ե մի վագոն վոչ միության անդամներ, — վորոնք  
մի տարրուց ավել անգործ են յեղել: Գործարանները փակ-  
վելուց՝ Հընդերվել ընկերությունը խոշոր վլաս և կրել: Ան-  
միջապես քաղաքը հուզաւան մեջ ե ընկել և չնայած նախա-  
զգուշացումներին՝ «սկերները» (գործադուլավորներին իրո-  
խարինողներ) ծեծի և քարկոծման են յենթարկվել: Վոստի-  
կանները կը ակ են բացել ամբոխի վրա, սպանելով յերեք  
տղամարդ, մի կիս, յերկու յերեխա և վիրավորելով տաս-  
նյակ մարդկանց: Նույն զիշերը շերիֆը զիմել ե նահան-  
գապետին, վորի վրա պահակազորի առաջին խուժը հա-  
սել ե:

Դրա հետևանքով յերեք որ կատաղի հուզում ե տիբել:  
Բացի վերոհիշյալից՝ զանազան առիթներով զրեթե մի իս-  
կական պատերազմ ե տեղի ունեցել: Յիշլու անգամ դին  
վորները կրակ են բացել ամբոխի վրա, սպանելով մի քանի  
ժամոց: Իսկ պահակազորից մեկը դաշույնահար ե արվել մթի մեջ:  
Սակայն ընկերությունը համառել ե բաց անել զործարան-  
ները: Իսկ զործադուլավորները լինելով առանց փողի, շա-  
տերն ել սովամահության դուռը հասած լինելով — վրեժով  
լցված տեղի յեն տվել: Ի վերջո տեղեկացվում ե, վոր միու-  
թյան վորոշումն ե յեղել թողնել գործադուլը, վորպեսզի  
անդամներից մի քանիսին կարելի լինի տեղավորել ազատ  
հացած քիչ տեղերում.

Ապա մր. Ռոբերտ վան Թենսելիցը կրկին ու կրկին կարգաց իր հեռազիրն ու ժպտաց:

— Ասա ինձ, սիրելիս, — ասաց միսս Պարագոնը, — ի՞նչ  
քարի լուր ունեա:

— Վոր դու շուտով իմն ես լինելու, — պատասխանեց

Հարսանիքը տեղի ունեցավ մոտ չորս ամիս հետո, յերբ  
միսս Պարագոնի փարիզյան ոժիտն աշղեն ապահով տեղ եր  
հասել: Իրոք նկարագրել այդպիսի մի հարսանիք սահմա-  
նափակ եջերում, մի անկարելիություն և, քանի վոր սոսկ  
դրա ուրվագծերը շաբաթներ շաբունակ նկարագրվել են  
ըրագրներում: — նկարագրվել են ամբողջ զարդարանքներն  
ու պատրաստություններն, ինչպես և հարս ու փեսայի ծա-  
դումը, կալվածքները և լրացուցիչ ունեցվածքները: Ասո-  
շիելու Պրեսը հրատարակել եր յերկու տեսակի նկարա-  
գրություն՝ հարսանեկան պարեգոտի մասին, — մինը տեխ-  
նիկական կողմը, տրված մի եքսպերտի կողմից, մյուսը՝  
գեղարվեստականը՝ մեծ համակրանք վայելող սի արտիստ-  
կողմից: Հարսանիքի նախորդ որը, Ֆիֆտ Ավինյուի յեկե-  
ղեցին, — այն յեկեղեցին, ուր Խորբին սովորեցնում եր կի-  
րակնորյա դպրոցում, և յերեսուն տարի լսել եր փերապատ-  
վելի դոկտոր Լետտուս Սպրեյի կրթիչ քարոզները, — այդ  
յեկեղեցին ծաղիկների սքանչելի փնջերով գրչով և մատի-  
տով նկարված եր. իսկ մեծ զեպքից հետո Նյու Յորկի  
բոլոր լրագրների առաջին եջերը հատկացված եյին նորու-  
թյունների ծարավի և լարված հետաքրքրությամբ սպասող  
հասարակությանը հայտնելու համար այդ հարսանիքի վե-  
րաբերմամբ այն ամենն, ինչ հնարավոր եր նկարագրել կան-  
պատկերացներ Այդ ժամանակ, անշուշտ, ուղղիկալ մամուլը  
մոռացել եր իր ամբողջ խոտությունը Հընգերվելի նկատ-  
մամբ, և մը. Ռոբերտ վան Թինսելլերը դարձյալ միեւույն  
համբավավոր ֆինանսիստն եր, սոցիալական յերեկի լուսա-  
տուն, նշանավոր քարդարացին և աննման րազուեսը<sup>13</sup>-ը:  
Յերբ յերջանիկ զույգն ամռանացավ ապահով կերպով, և մի-  
յերկարամեկ մեղրամիս վայելեց «Գիսավոր»-ի վրա ու յեր-

Հանկության լիքը բաժակը խմեց, հիշում եմ, Նյութորկի  
լրագրներում կարդացի մեր Ռոբրիի մի ճառը, վորը նա  
խոսել եր Պոտունկի յերիտասարդ մահմեդականների ասու-  
ցիացիայի առջև, Նյութ ունենալով՝ յեղբայրացումն ար-  
դյունաբերության մեջ և կապիտալի ու աշխատանքի միջև  
շահների ներդաշնակությունը:

## XIX

Իսկ հիմա ընթերցողը բարի կլինի՞ պատկերացնելու,  
վոր չորս կամ հինգ տարի ևս անցել եւ և վոր միսիս Ռոբրոտ  
վան Ռենսելերն արդեն յերկու յերեխայի մալր եւ և մի  
հալարտ ու փառաշուզ սոցիալ թագուհի, մի grande dame,  
վորն անխոռվ կերպով կրում եր բարձր տերերի թագը-  
իսկ մը. վան Ռենսելերն ել ավելի սի զսրավոր ուժ եւ արդեն  
յերկրի ֆինանսական շըջաններում, — մի մարդ, վորը գրչէ  
մի շարժումով կարող եւ շատերին նահանգապետ կամ սենա-  
տոր դարձնել: Նրա գործերն ամենափայլուն հաջողությամբ  
առաջ եյին գնում, հարստությունը դուրս եր ցայտում նրա  
հրամանով այնպես, ինչպես հնդկական կախարդի ձեռքի  
տակ պտղատու ծառերն են դուրս գալիս: Նա իւ ընկերու-  
թյան մրցակիցներից կազմակերպել եր մի խոշոր կորպորա-  
ցիա՝ կասեցնելու համար ավերիչ մրցակցությունը: Նա կա-  
տարել եր զեր այնպիսի բաներ, վորոնցով ահաբեկել եր  
ամբողջ Ուոլ-Ստրիտը:

Յես սաբսափով ձեռնամուխ կլինեյի իմ հերոսի կարիե-  
րայի այս շըջանում հետամտելու նրա գործերին, Ուոլ-  
Ստրիտի լարիերինթոսում նրա զիրքն ապահովաբար բնորո-  
շելու համար, — զգալով հանդերձ իմ կարողության ան-  
ստույդ լինելը. բայց բարեբախտաբար, այդ պատմվել ե-  
այնպիսի եքսպերտների կողմից, վորոնց հեղինակավորու-  
թյան մասին վոչ մի կասկած չի կարող լինել. իսկ յիս ոգտը-

վում եմ հանգամանքից նրանց նկարագրություններից մեջ-  
քերումներ անելով: Ճիշտ ե, նրանց լեզուն ինչ-վոր մաս-  
նագիտական գորություն ունի, բայց մարդկային գիտու-  
թյան ամեն մի ճյուղ իր առանձնահատուկ բառարանը պիտի  
ունենա, իսկ գիտություն վորոնողը պիտք ե տիրապետի  
այդ բառարանին: Վասն Ռենսելլերի ամբողջ կյանքն այս մի  
քանի որվա ընթացքում լիովին Ուոլ-Մարիտի կյանք եր.  
անհրաժեշտ ե ընթերցողին մի փոքր գաղափար տալ, թե  
ինչ ձեմի կյանք եր այդ. Զաբրերգրաբում, «Ֆինանսական  
հերոսները», եջ 1492. կարելի յե կարդալ հետևյալը.—

«Արժեթղթի գինը վորոշ բարձրության վրա պահելու  
խնդրում Ռոբերտ վասն Ռենսելլերի զործադրած միջոցը քա-  
ղաքի զրույցներից մեկն ե տակավին: «Հենց «Ավորա»-ից  
գուրս գալու պահին եր, այն անմոռանալի յերեքշաբթի որը,  
իր կյանքի մրցարշավ—նավարկումը վերջացնելուց հետո,—  
յերբ գրաբերը նրան հանձնեց մի հեռագիր, վորով տեղեկաց-  
վում եր, թե սակարանի վայրախաղացներն, ակներևարար  
թերագնահատելով նրա զբոսանավի արագությունն, սկսել  
են մի նոր, ավելի կատաղի հարձակում կալամազու—ուա-  
նավային արժեթղթերի դեմ: Հասկանալի յե, վոր մի դա-  
վագրություն եր այդ,— արժեթղթի արժույթն ընկնում եր  
արագորեն: Վասն Ռենսելլերն իսկույն հեռագորեց իր միջնորդ-  
ներին վորքան հնարավոր ե ձեռք բերել վաճառողական ոպ-  
ցիոներ<sup>14</sup>, ինչպես նաև գնել շուկայում ճարվող բոլոր ար-  
ժեթղթերը, վորպեսզի Նյու-Յորկ հանսելիս «Կ. Պ.-ի  
գրեթե բոլոր արժեթղթերի սեփականատերը հանդիսանա,  
բացի մի փոքր քանակությունից, վոր վստահ եր, թե գուրս  
չեր բերվի վաճառքի:

«Վասն Ռենսելլերը խիստ զայրացել եր, վորովհետև «Կ. Պ.»  
առեք թե նրա սիրասուն զավակը լիներ: Ամբողջ ճանա-  
պարհին նա մտախոհության մեջ եր, իսկ յերբ հասավ քա-

զաք, նրա գործակալները հրաման ստացան վաճառքի հանել բոլոր արժիթղթերը, այնուևետև վաճառող կողմից գնել կանխիկ դրամով և կը կին հետ վաճառել զնողական ոպցիոնով, մի ամիս ժամանակով. այս խաղի իմաստն այն եր, վոր վայրախաղներն իմանալով, թե վան Մենսելլերն արժեթղթերի գնի պաշտպանողն ե, պիտի յեզրակացնեյին, վոր նա կանխիկ դրամագլուխ չունի, քանի վոր կանխիկ վաճառում ե և նորից դնում, մթերելով ոպցիոններով: Նենգախաղը կտարելապես հաջողվեց: Կանխիկ վաճառքի հանգած արժեթղթերը ձեռք բերվեցին վան Մենսելլերի մարդկանց կողմից և վայրախաղները նորից քաջալիրվելով, արժեթղթերի վրա թափվեցին, իսկ վան Մենսելլերն ոպցիոն եր գնում հինգ, տասը հազարներով, մինչև վոր վայրախաղները կանդ առին՝ համսրյա ուժասպառ լինելով:

«Բայց նա, իհարկե, պատրաստ դրամ ուներ և կուշտու լիաթոք ծիծառում եր իր լարած թակարդի հաջողության համար: Ոպցիոնի ժամկետը լրացավ և ահա շուկայում այլևս չեր ճարվում «Կ. Ո.» արժեթուղթ: Մենավաճառն այն տեսակից եր, վորի մասին մարդ յերազել միայն կարող է: Գինն սկսեց անչափ բարձրանալ, սկսեց 110-ով, իսկ նախ քան շուկայի փակվելն առաջարկվում եր 190,—բայց ի զնւու վաթսուն հազար բաժնետոմսեր պիտի արվեցին վան Մենսելլերին,—վաթսուն հազար բաժնետոմսեր, վորոնք կարճ ժամանակ առաջ վաճառվել եյին 110-ով, իսկ հիմա չեյին ճարվում նույնիսկ 190-ով:

Նրանք յեկան նրա մոտ և գթություն հայցեցին, իսկ նա վեհանձնորեն հայտնեց, վոր նրանք չեն կարող արժեթղթեր ձեռք բերել 190-ով, բայց վոր նրանք կարող են կոմպրոմիս անել, ժամանակ վաստակել, յեթե կվճարեն որական հինգ տոկոս՝ արժեթղթի անվանականի վրա: Նրանք չհասկանալով իրենց գլխին խաղացվող նենգախաղը և կար-

ծելով, զոր շուտով գնի անկում պիտի տեղի ունենա, ուրախությամբ համաձայնվեցին այդ առաջարկությանը: Նրանք վճարեցին տասն որվա տոկոսը, բայց դարձյալ մենավաճառքն ավելի քան կայուն եր: Ի վերջո նրանք վճարեցին նրան 260 դոլար ամեն մի բաժնետոմսին. այսպիսով նա վաթսուն հազար բաժնետոմսերի յուրաքանչյուրից զուտ շահ ունեցավ յերկու հարյուր դոլար, Դրանից հետո վայրախաղացները յերկար ժամանակ այլևս չեյին համարձակում ձեռնամուխ լինել Ռոբերտ Քան Թենսելերի սիրատուն արժեթղթի գործին:

## XX

Այդ հետաքրքիր «կոմպումիսի» որը մեր բարեկամն ու ին զոհերը վիճում եյին մինչև ուշ յերեկո: Խոկ հետո վան Թենսելերը վերցրեց մի քեզ և քշեց դեպի քաղաքի ողասուն մասը: Թարմ ողի և կազդուրման խիստ կարիք զգալով, նա գիտեց իր համար անսովոր մի միջոցի—զուրս յեկավ և դանդաղորեն շարժվեց վերին Բրոդուեյի յերկարությամբ:

Տանն արդեն ճաշի ժամն անցել եր, ուստի նա քայլերն ուղղեց դեպի ակումբը: Մակայն անցնելով աղամանդաշող լույսով վողողված մի ճաշարանի մոտով—վորտեղից մեղմ նվազ եր լսվում,—նա տեղի տվեց մի հանկարծահաս գրդիռի և ներս մտավ:

Այդ մի անսովոր դեպք եր մեր հերոսի համար, վորով հետև այդ մի գոհենիկ ճաշարան եր,—հոլանի կանանցով և ծխող տղամարդկանցով լիքը: Մի ակնարկ դցեց ներկաների վրա և ապա դարձավ ճաշացուցակն ուսումնասիրելու:

Վորքան ել մեծահամբավ եյին նրա ճաշկերույթները, սակայն ինքը՝ վան Թենսելերն անձնապես շատ պարզ ճաշակի մարդ եր: Նրա մոտ ամբողջ շքեղությունը ըղինում եր ուրիշին հաճույք պատճառելու տեսակետից: Առայժմ նա

պատվիրեց մի կոկտեյլ (համեմված ողի) և վայելեց մտախոռնությամբ, մինչ սպասավորը նրա առջև եր դնում փափուկ և ախորժահամ վոստրեներով լիքը ափսեն: Նախ քան դրանց ուտելը նա պատվիրեց յերկրորդը, հորթի վզոն, և կարմրացրած հացի վրա լորամարգի թարմ ծներեկ և հատուկ ձեռվլ պատրաստված կանկաներ: Սպասավորն ուշադրությամբ լսեց պատվերը և նկարագրությունը, թե ճիշտ ընչպես պիտի պատրաստվեն վզոնները, և ծներեկի համար աղցանի ճշգրիտ տեսակը:

— Թերեք ինձ նաև մի պինա<sup>15</sup> chambertin<sup>16</sup>, — ավելացրեց հյուրը, — ձեր ունեցածի ամենաընտիր տեսակի:

Յերբ սպասավորը մեկնեց, մր. Ռոբերտ վան Ռենսելլերը խնամքով ճաշակեց վոստրեները: Յերբ վզոնները բերին տեսավ, վոր ճիշտ իր պատվիրածի նման եյին պատրաստել: Գինին ավելի լավ եր, քան նա ակնկալում եր: Այդպիսով նա իրեն միանդամայն հաճելի վիճակում եր զգում: Ժամանակ առ ժամանակ գաղքարեցնում եր ուտելը շունչ առնելու համար և հայացքը շրջեցնում իր վրա: Դժբախտաբար, նա ավելի և ավելի հաստանում եր, — նա այդ զգում եր մանավանդ իր ճաշերի ժամանակ: Բայց ի վերջո նա ավարտեց ճաշը. լեզվով մաքրեց շրթունքները, հենվեց աթոռին և վառեց գլանակը:

Ռոբերտ վան Ռենսելլերի գլանակները, նրա գործածած բոլոր մնացած պիտույքների նման սեփական ներմուծում եյին դրսից: Նրանք ամբողոսաբույր եյին, ուստի մեր բարեկամն աչքերը կիսով չափ փակած, իսկու յերջանիկ եր զգում իրեն: Գինին բորբոքեցնում եր արյունը, ստամոքսը գոհունակությամբ մրամում եր — սրանից ավելի բնչ կարող եր ցանկանալ քաղաքակրթված մարդը:

Սակայն մր. վան Ռենսելլերը սինյակի չորս կողմը նայելով, հանկարծ մի բան նշմարեց: Նրա աչքերը սևեռված եյին անցուղիի այն կողմը գտնվող մի սեղանի, ուր նստած

Եյին յերկու կին, Նրանցից մեկը խիստ ժարմնեղ կին եր, դեղին մազերով, և բաղնաթիվ գոհարեղեններով զարդարված, իսկ մյուսը... նա մինչ այդ յերբեք չեր տեսել մի այդպիսի բան: Մի դեռատի աղջիկ եր,—տասներկնը տարին գեռ չանցկացրած, հրաշալի, նուրբ դեղեցկությամբ: Նա հագնված եր շատ պարզ, և գունատ եր. իսկ նրա մաշկը նման եր նուրբ, բայց գույն մարմարի: Ինչ վերաբերում ե դեմքին... վան Թենսելլերն ուղղակի չեր կարողանում: իր հայցքը հեռացնել նրա դեմքից:

Հանկարծ կինը նշմարեց նրա նայվածքը և ժպտաց: Վերջինս նկատեց, թե ինչպես կինը մշտեց աղջկան. սա դեմքը վեր բարձրացրեց և նայեց նրան, ապա այտերը ծիրանի գույն ստացան և նա վլուխը խոնարհեց ցած և նայեց իր ափսեյին: Վան Թենսելլերի սիրտն սկսեց արագ կերպով բարախել. նա ավելի հագնեպորեն վերջոցը իր կիսատ թողած սուրճը և մի կողմ գցեց գլանակը: Յերբ նա նկատեց, վոր այդ կանայք պատրաստվում են մեկնելու, կանչեց սպասավորին և նայելով հաշվին, մի հատ քսան դուլարանոց տվեց նրան ու ասաց, վոր մնացորդը պահի իրեն: Ապա վերցրեց վերաբերուն և կամաց դուրս յեկավ ճաշարանից:

Կանայք ճիշտ նրա դեմք եյին գտնվում, ուստի հենց անկյունում միացավ նրանց. նրանք դարձան և քայլերն ուղղեցին գեպի կողքի փողոցը:

— Զեր բարեկամուհին մի փոքր վախկոտ և յերեւում, — ասաց նա ծիծաղելով, հենց վոր տեղ գրավեց աղջկա կողքին և մեղմորեն վերցրեց նրա թեր:

— Հենց մի քիչ, — պատասխանեց կինը, — մի քանի որ և միայն, ինչ Նյու-Յորկումն եւ Միսս Հարրիառն, մը... ըը...

— Մը. Դըին, — լրացրեց խոսակիցը:

— Մը. Դըին, — կըկնեց կինը ժպտալով. — իսկ յես՝ միւսիո Լինչ:

Այսպես հաջող կերպով ծանոթացան իրար հետ:  
— Իսկ ուշը եք գնում հիմա, — հարցրեց մը. Գրին:  
— Մենք ճիշտ առն եյինք գնում, — պատասխանեց մի-  
սիս Լինչը:

Նրանք շարունակում եյին քայլել փողոցով: Մը. Գրինը  
զգում եր, վոր գողարիկ թեր դողդողում եր իր թեր մեջ,  
սակայն աղջիկը վոչինչ չեր ասում, և յերբեք նայվածքը  
չեր բարձրացնուած վեր, յերբ նա խոսում եր իր հետ: Միսիս  
Լինչը խոսակցությունը շարունակեց, մինչեւ վոր նրանք  
հասան մի գորշ քարաշեն տուն: Վարագույրներին իջեցված  
եյին, սակայն շատ հեշտ եր նկատել լույսի շողերը. և հենց  
վոր կանայք գուռը բացին, ներս մտնողների ականջներին  
հասան ուրախ բացականչություններ: Հյուրասենյակի դուռը  
բաց եր, բայց նրանք այնտեղից անցան և գնացին առաջ  
հետնամասում գտնվող մի սենյակ, վոր լուսավորված եր  
լամպի աղոտ լույսով: Նրանք գուռը փակեցին, վորից հետո  
ամեն ինչ խաղաղ եր:

— Յեղեք ինչպես ձեր տանը, — ասաց միսիս Լինչը,  
հանելով իր գլխարկն ու վերնազգեստը՝ նույն արեց մը.  
Գրինը և նստեց բազմոցի վրա: Աղջիկը նույնպես նստեց,  
նա տակավին գունատ եր և դողդոջուն: Բայց միսիս Լինչը  
չնշմարեց այդ՝ իր նոր ծանոթի հետ խոսակցության բռնը-  
գած լինելով: Սակայն նա հանկարծ վոտքի յենելով ասաց.

— Յես մի փոքր գործ ունեմ, ներկցեք ինձ:  
Հեք աղջիկը ցանկացավ մի բան ասել, սակայն միսիս  
Լինչը խոժոռելով դեմքը նրա վրա և լոել տալով նրան,  
անհատացավ, դուռը փակելով իր յետեից:

## XXI

Մի փոքր լուռություն ակրեց. ապա մը, Գրինը մոտեցավ և  
նստեց աղջկա կողքին:

— Ասացեք ինձ, — սկսեց նա, — ի՞նչ ե պատահել ձեզ! —  
Աղջիկը դեմքը ծածկեց ձեռներով և սարսուց:

— Ասացե՛ք ինձ, — կրկնեց նա մեղմ տոնով, — վստահ  
յեղեք ինձ, խնդրում եմ.

Հանկարծ աղջիկը նայեց նրան. արցունքները հոսում  
եյին նրա աչքերից:

— Ո՞հ, խղճացե՛ք ինձ, — աղաչեց նա, — չեմ կարող այդ  
անել... չեմ կարող! Դուք չկիտեք, թե վորքան թշվառ եմ  
յետ:

Մոբրին... մարդ ներքնապես հուզվում ե, յերբ գարծյալ  
«Թորբի» յե կոչում նրան այդպիսի մի ժամանակ, չնայած  
վոր նույնիսկ նրա մազերը մոխրագույն են դարձել — Մոբր-  
բին՝ ասացինք, աչքերը հառել եր նրա կատարելատիպ դեմ-  
քին և մտածում եր, վոր մինչ այդ նա իր կյանքում չեր  
տիսել այսպիսի սի հրաշալի բան:

— Լսեցե՛ք, — ասաց նա շատ մեղմորեն. — դուք վորեն  
պատճառ չունեք ինձանից յերկյուղ կը ելու. ասացեք, ի՞նչ  
ե պատահել ձեզ հետ և ի՞նչպես եք ընկել մի այսպիսի  
վայր:

Աղջիկը նայեց նրան իր յերկյուղալից աչքերով և զսպեց  
հեկեկոցք:

— Միայն միքանի ժամ ե, ինչ յեկել եմ այստեղ, — ասաց  
նա, — բայց չեմ կարող մնալ այլևս, ո՞հ, չեմ կարող:

— Ասացեք ինձ յեղելությունը:

Աղջիկը նատեց, ջղայնորեն ձեռքերն իրար հյուսելով:

— Յես յեկա գավասից, ասաց նա. — այդ հին պատճու-  
թյուն ե... ձեզ չի հետաքրքրելու: Հայրս մեռել եր, մայրս  
ել մեռավ. հետո յես փող չունեյի, ուրիմն պիտի աշխատեյի:  
Հետո... յես սիրեցի մի յերիտասարդի...

Նա հուսահատության մի հանկարծակի շարժում արեց և  
կանգ տռավ:

— Շարունակեցնք, — ասաց մյուսը քնքշաբար:

— Վերջին անգամ նրան տեսա անցյալ շաբթում, իսկ հիմա... յես յերբեք այլևս չեմ տեսնելու նրան: Նա ինձ խնդրել եր զնալ, ապրել իրա հետ, — այդ սկզբներումն եր: Նա շատ հարուստ եր, ուստի և նրա ծնողները չեյին կարող թույլ տալ, վոր նա ամուսնանա ինձ հետ, բայց յես սիրում եյի նրան, ուստի չժտահրդվեցի այդ առթիվ, — յես միմիայն ցանկանում եյի նրա հետ լինել: Այս մի տարի առաջ եր: Իսկ հետո նա թողեց ինձ ու հեռացավ... ասաց, վոր ծնողներն իմացել են մեր հարաբերության մասին: Յես կարծում եյի, վոր նա յեկած կլինի Նյու-Յորկ, ուստի հետեւցի նրան, — ծախսեցի բոլոր ունեցածս, վորպեսզի գամ: Յեվ, իհարկե, չկարողացա գտնել նրան, վոչ ել գործ գտա անելու: Ամբողջ անցյալ և նախանցյալ գիշերները թափառել եմ փողոցներում: Այս բոլորից հետո ինձ մնացել եր միայն այս, — յես համարյա մեռնելու մոտ եյի:

Աղջիկն իր խոսակցության ընթացքում վրդովմունքից շիկնել եր և ել ավելի գեղեցկացել: Խոսակեցը խրախուսեց նրան շարունակել:

Վերջինս պատմեց նրան բոլորը, վորովհետև այս մարդու ձայնն առաջինն եր, վոր նրա ականջին քաղցը եր հնչում: Յեկ Ռոբրին խոսեց նրա հետ, ինչպես նախկին Ռոբրին եր խոսում կանանց հետ, — քնքույշ, գեղեցիկ վոճերով, անսահման տակտով, համակրանքով և շնորհալի կերպով: Նա գեղեցկատեսել և փառավոր մարդ եր, ուստի աղջիկը մոռացավ նախ իր սարսափը, ապա հուսահատությունն ու վիշտը: Վոչ վոք չխանգարեց նրանց. նրանք խոսեցին մի ժամ, յերկու ժամ և միշտ ավելի ու ավելի իրար հասկանալով: Ռոբրիի սիրտն արագ արագ բարախում եր: Նա վոչ միայն գեղեցիկ մի աղջիկ եր, այլև ուներ գեղեցիկ հոգի: — մի գողարիկ և թանկագին մարդարիտ՝ ցեխի մհջ ընկած:

Այսպիս նա խոսեց ու խոսեց, ի հայտ բերելով իր համակրանքը և կորզելով աղջկա ամբողջ սիրտը: Ժամանակն ավելի արագ եր անցնում: Կես զիշեր յեղավ, և այդ ժամանակ Ռոբին համարձակվեց առնել նրա ձեռքը իր բոի մեջ և նստել նրա կողքին՝ բազմոցի վրա: Նա կրկին փոքրիկ տղայի նման դողում եր. նույն Ռոբին եր,—իր ամբողջ ելությունը կրակի վրա դրված Աղջկա դեմքին ել մի նոր կարմրություն տարածվեց:

— Լսեցք,—սկսեց նա մեղմ շշուկով:—դուք չգիտեք, թե ինչպես շարժեցիք իմ սիրտը, վորքան եմ հիանում ձեզանով և ինչպես եմ ուզում ոգնել ձեզ: Դուք այնքան գեղեցիկ եք, —յես այդպիսի գեղեցիկ արարած չեյի տեսել յերբեք—իսկ յես... ահ, մենք կարող ենք բոլորովին խուսափել այս բոլոր արհավիրքներից, և դուք ել պետք չունեք իմանալու կամ լսելու դրա մասին: Յես կհոգած ձեր մասին և կհսկեմ ձեզ. յերջանիկ լինելու բոլոր անհրաժեշտ միջոցները կունենաք, քանի վոր սիրում եմ ձեզ, ոհ, յես չեմ կարող նկարագրել, թե ինչպես եմ սիրում ձեզ: Միանգամայն անվայել ե այս վայրն այս խոսքերի համար. բայց ինչ նշանակություն ունի, թե այս մարդիկ ինչ կասեն: Սրանք չեն կարող ըմբռնել այդ, բայց մեր հոգը չե: Ա՛հ, յես ցանկանում եմ, վոր դուք իմը լինեք, ինչ կերպով ուզում ե լինի, բայց յերբեք թույլ չեմ տալ, վոր դուք վորևե բանից տառապեք: Ո՛, պիտի գիտենաք նաև, վոր յերբեք թույլ չեմ տա, վոր թողնեք ինձ:

Յեվ այսպես շարունակում եր նա արագ, շնչահեղձ, պերճախոսությամբ, նախ հանդգնեց իր բազուկն ողակեք աղջկա շուրջը, ապա համբուրել նրան: Հետո, յերբ տեսավ, վոր նա դողգողում ե, և վոր հույզի արցունքները լճացան նրա աչքերում, նրան սեղմեց իր կրծքին մոլեգին կըքով:

Այսպես անցավ մի ժամ ևս Հետո, յերբ ի վերջո լսվեց դռան բաղխումն, ազջիկը ցնցվեց և նետվեց Ռոբբին գերկը դեմքը գնելով նրա ուսին:

— Իսկ հիմա, — ասաց Ռոբբին միսիս Լինչին, վոր ներս մտավ, — յեկեք, նստեք և թողեք խնդիրը կարգադրենք:

## XXII

Դրանից հետո մերի Հարրիսոնը, — այսպես եր նրա տնունը, — շուտով բնակություն հաստատեց Հարլիմի մի փորքրիկ, սիրուն բնակարանում. իսկ Ռոբբին՝ ելի նույն յերջանիկ և պարզ տղան՝ հաճախ եր յերեւմ այս կողմերը: Ստիպված ենք նյութը փակել այս համառոտ հիշատակությամբ և մեր հերոսի հետ միսին շուպել դեպի յետ, — գեղի Ուոլ-Ստրիտի տաղտկալի գործերը:

Վորովինետև գեղքերն արագ ընթացք եյին ստացել քաղաքի այդ մասում, և դեռ Կալամազու ոդանավի մենագաճառի գործը չկարգավորած, Ռոբերտ վան Ռենսելլերը խիստ զրադիմ եր, ծրագրելու իր կյանքի մնագույն հարգածը, այն եւ Տրանս-Առլանտիկի և Խըրըրբան ընկերության խորտակումը: Անհրաժեշտ ե, վոր ընթերցողն ավելի մանրամասն տեղեկանա այդ կատաղի և պատմական պայքարի մասին:

Ուոլ-Ստրիտում կան մարդիկ — պարզ ու հասարակ խաղամուներ, վորոնք կրաքրացնեն և կիշեցնեն վորևե արժեթղթի գին, յերբ՝ հույս ունեն այս կամ այն ոգուտը քաղել դրանից. կան նաև որինական ձեռնարկություններ անողներ: Արժեթղթերի մի որինական ձեռնարկու, — ինչպես, որինակ՝ Ռոբերտ վան Ռենսելլերը, — մի մարդ ե, վորն ուսումնասիրել ե համաշխարհային ֆինանսական և տնտեսական պայմանները և ձգտում ե բարձրացնել գները մինչև ուր վոր հարկն ե: Յեթե մեկը կարող ե բավականաշատ

խորը դիտել, ուսումնասիրել և իջեցնել միայն վատառողջ վիճակում գտնվող արժեթղթերի և գերաբտագրված ապրանքների գներն, այդպիսին կարող ե համարվել հասարակության ոգտակար ծառաներից մեկը... և պակաս հաճելի չելինել, այդ այն ե, վոր տիեզերքի հավիտենական որենքները կգործակցին այգակախ մեկն՝ նրա բոլոր առևտրական գործերում:

Տրանս-Առլանտիկ և Սըրըբան յերկաթուղային ընկերության մեծ պայքարը,—մեր հերոսի ընդհարումներից ամենաարյունահեղը, գորն յերբեք չեն մոռանալու Ուոլ-Մարիտի մարդիկ, քանի դեռ ապրում են,—այդ պայքարն ընթերցողը նկարագրված կգտնի Զաբրերգրաբում, եջ 1906, հետեւյալ կերպով.—

«Ասում են, վոր պայմանների և խորը շարժումների միևնույն զարմանալի ըմբռնումն եր տիրում: Մի տարուց ավել վան Ռենսելերը հետեւում եր Տ. և Ս.-ին, ինչպես նաև այն մարդկանց, վորոնք ղեկավարում եյին այդ Նա ուսումնասիրել եր այդ պրոբլեմի ամեն մի փուլը, իսկ վերջում նա ծակեց մի պղպջակ, վորը ծիածանային շողշողուն փայլ սփոեց մարդկանց վրա, և վոր կարողացավ խարել՝ յերկրի ասենահուտ տնտեսագետներից շատերին: Նաի՝ Ռոբերտ վան Ռենսելերը չեր վստահում Տ. և Ս.-ի մարդկանց՝ մի քանի ներքին իրադարձություններ լսած լինելով նրանց մասին: Հետո՝ նա ուսումնասիրել եր այդ գծի ապագան, նրա ղեկավարությունը, պլանները. նրա կողմից հսկայական քանակով արժեթղթեր բաց թողնելը, վորոնք ինչպես փսփսում եյին, պետք ե ջուր դառնային,—մնային առանց զբամական հիմքի, մինչդեռ մարդիկ կատաղածի պես գնում եյին դրանք: Յեվ հետո խորհրդակցությունների մասին ունեցած վորոշ գաղտնի տեղեկություններից, վորոնց վերաբերմամբ յենթադրվում եր, թե վոչ վոք վոչինչ չգիտեր,

ինչպես և շուկայի վորոշ կասկածելի շարժումներից վաճ  
թենսելլերը հավաստիացած եր, վոր Տ. և Ս.-ի ֆինանիստները  
նախապատրաստում են մի մեծ բում<sup>17</sup>, արժեթղթերի պա-  
հանջի մեծ ուռեցում և գների բարձրացում։ Նա յել կատա-  
րելապես կամենում եր այդ,—արդեն ինքն ել ոժանդակում  
եր նրանց,—վորովհետև ինչքան ավելի նրանք ուղղնելին  
արդ, այնքան ավելի նա լավ կարող եր կարգավորել այն,  
ինչ ինքն եր մտածում Միայն այն ժամանակ, յերբ նա  
իմացավ, վոր նրանք արդեն սպառվելու մոտ են,—մյուս  
կողմը զուռ տվեց. այսպիսով ել սկսվեց հսկաների ճակա-  
ռամարտը»։

### XXIII

Վոչ վոք չգիտեր, թե վան Թենսելլերն եր այն մար-  
դը, վոր այդքան գլխացագանք և պատճառում Տ. և Ս.-ին,—  
այդպես և վստահեցնում մեզ մեր պատմագիրը։ Նրա ընդու-  
նակություններից մեկն եր գարպետորեն թագնվել. նա ամ-  
փող Ուոլ-Մարիտում միջնորդներ ուներ. իսկ գրանք հա-  
ճախ իրար դեմ գները բարձրացնում եյրն, առանց իրար  
ճանաչելու կողմանակի մարդիկ լոկ տեսնում եյին, վոր Տ. և  
Ս.-ի արժեթղթերի գինն ինչ-ինչ պատճառներով բարձրա-  
նում եր այնպես, վոր արհամարհում եր ամեն զրոյց. հետո  
հանգում եր մի կայուն գնի և հիանալի կերպով աշխուժա-  
նում։ Նրանք զգում եյին, վոր ինչ-վոր մի անձնավորու-  
թյուն պահաս եր վաճառում, իսկ թե մվ եր դա, —միայն  
մոկը կար աշխարհում, վոր իմանում եր այդ։

Այս բաները բարդ և ճանձրալի յեն. բայց դրանք պետք  
ե հասկացվեն, վորովհետև դրանք կազմած են Ռոբերտ վան  
Թենսելլերի կյանքի մեջ տեղի ունեցող մի ճգնաժամի հետէ

Մեր բարեկամն արժեթղթերի հետ խաղացող մեկը չեղ-  
նա վորեւ գործի ձեռնամուխ եր լինում միայն այն ժամա-  
նակ, յերբ վստահ եր, վոր ինքն իրավացի յեւ և այնուհետեւ  
նա գործի մեջ եր մտնում իր ամբողջ արժեքով։ Դեռ շու-  
կան նվազագույն գաղափար անդամ չուներ գալիքի մասին,  
յերբ նա կազմ ու պատրաստ եր Տրանս-Առաջնորդիկի և Սը-  
բըրբանի պաշտպանների հետ մահացու մի կովի մեջ մտնե-  
լու համար։ Թողող ընթերցողը համարձակորեն խորասուղիք  
ներս և ընդունի մեր խոսքը, վոր պատմվածքի անապա-  
տումն ել գոյություն ունի մի շավիղ։

Յերեքշաբթի որվանից եր, վոր վան Ռենսելերն սկսեց  
ձեռք բերել «վաճառողի ոպցիոներ»՝ յերեք որ ժամանակով՝  
վորից մի հսկայական գումար կազմվեց, վոր յերեք որուժ  
ավելի և ավելի ծախելով կարողացավ արժեթղթի գինն  
իջեցնել։ Ավելի ճիշտ կլինի ասեւ, վոր նա մտադիր չեր  
նրանց յերեք որ ժամանակ տալու, նա կարծում եր, վոր  
Տ. և Ս. չորեքշաբթի որն իսկ կխորտակվի, այն ե՝ բուն  
ճակատամարտի իսկ առաջին որը։

Նույն կացությունն եր, ինչ տեղի ունեցավ կ. Ո.-ի մե-  
նավաճառի ժամանակ, միայն այն տարբերությամբ, վոր  
վոչ-վոք չեր մտածում, թե Տ. և Ս.-ի արժութղթերը կարող են  
մենավաճառի առարկա դառնալը Սրա արժեթուղթն ամբողջ  
յերկրում տարսելված եր. միանդամից տասը միլիոն բաց եր  
թողնված, և ինչ վոր վան Ռենսելերը և նրա ախոյանները  
կարող եյին ապահովել՝ համեմատաբար քիչ եր։ Շուկան եր,  
ճակատամարտի հանդիսատեսները, վորոնք վերջին հաշվով  
պիտի սահմանեյին հաղթության մրցանակը։ Յեկ ինչպես  
ասել ենք՝ մեր հերոսն արդեն ուներ, կամ հավատում եր,  
թե «բության հավիտենական որենքներն» իր կողմն են։  
«Խորտակվում ե», — ասաց վան Ռենսելերը խոժոռադեմ, —  
«խորտակվում ե, խորտակվում ե»։

Տ. և Ս.-ի յետևում կանգնած ուժերը ժողով գումարեցին այդ յերեքշաբթի որը ճաշից հետո և մի սինդիկատ կազմեցին։ Համաձայնության յեկան անհապաղ մի լավ դաս տալ այն անծանոթ անձնավորությանը, վորն արժեթղթի գինն իջեցնում եր։ Ապա կարգադրեցին հաջորդ որը գնել հարյուր հիսուն հազար Տ. և Ս. բաժնետոմս ու տեսնել, թե նա կազմել ե տոկալ։

Վահ Թենսելլերը պատրաստ եր դեռ յերկար դիմադրելու։ Յերեքշաբթի որը շուկան յեռուն լիսելով, նա վաճառել եր իրեն պատկանող բոլոր արժեթղթային բաժնետոմսերը, ներքառյալ նույնիսկ Կ. Ո.-ի իր ունեցածները, նիրառյալ նույնիսկ պողպատի մի կորպորացիայից իր ստացած ամբողջ շահը. նույնիսկ ի հաշիվ իր վարկի փոխ եր առել ամեն մի գոլլար, վոր նա կարող եր ունենալ։ Այս ամբողջ կանինիկ զրամն իր միջնորդների ձեռքումն եր գտնվում, իսկ յերբ չորեքշաբթի առավոտ շուկան բացվեց, նա կանգնած եր իր առունձնասենյակում թիքերի<sup>18</sup> մոտ՝ իր հետ ունենալով իր ամենահավատարիմ քարտուղարը, վորը հեռախոսով պիտի տար իր հրամանները։

Պայքարն սկսվեց կամաց կամաց. յերկու տիտանները գոտեմարտում եյին և զգում միմյանց ուժը։ Մինդիկատի միջնորդները բարձրածայն գոչում եյին Տ. և Ս.-ի համար, իսկ վահ Թենսելլերն սպասում և դիտում եր։ Մի քիչ վաճառվել եր, բայց այդ իրենը չեր. սպասում եր տեսնելու, թե արդյոք գներն ել ավելի չեն բարձրանում, վորպեսզի այսպիսով խափուսիկ համարձակություն ներշնչի իր թըշնամիներին, իսկ իրեն ապահովի։ Մոտավորապես ժամը տասն և մեկին սկսվեց։ Տ. և Ս.-ն բացեց 155-ով և աշխույժ տռեստուր արեց. հինգ հազար բաժնետոմս ծախվեց այդ

գնով, վորից հետո զինը բարձրացավ  $1^{\circ}51'$ ,  $156^{\circ}1/2$ : Ապա  
 նորից բարձրացավ մինչև 158 և կանգ առավ: Այներեւաբար  
 այդ այն ասաիճանն եր, ուր թշնամին կամենում եր բարձ-  
 րացնել: Յեվ ահա մի քիչ հետո վան Թենսելերը հրաման-  
 ներն ուղարկեց, — յերկու հաղար բաժնետոմս՝ հինգ տարբեր  
 միջնորդների: Տ. և Ս. տատանվեց. իջավ մինչև  $157^{\circ}1/8$ , ապա  
 նորից կանգ առավ: Վաճառվեց տասն և հինգ հաղար: Մո-  
 բերաը կրկին հրամաններ ուղարկեց. առաջարկները դեռ  
 շարունակվում եյին և նրա գործակալները վերցնում եյին  
 տոմսերը: Առկայանի դահլիճում կարելի յեր տեսնել մի խե-  
 լացնոր խաժամուժ. մարդիկ բղավում, ճշում, տարրորինակ  
 ծամածություններ և շորժումներ եյին անում Տ. և Ս.-ի  
 կայանի շուրջը: Ամիսներից ի վեր այսպիսի առևտուր չեր  
 տեսնվել, — անտարակույս ինչ-վոր մի ճարձրացում» կար:  
 Մարդիկ դեռ չելին ըմբռնել, վոր վայրախաղացի շարժումը  
 պաշտպանողական բնույթ ունի և վայրագ տարածայնու-  
 թյունները տարածվեցին չորս կողմ.— Գուլի և Կաստորիայի  
 շահերը պայքարում են ճանապարհի համար, Մերջեմ ուղում  
 և դիմը հասցնել մինչև Ալյասոկա: Տ. և Ս. մինչև հիմա այս-  
 պիսի կետի չեր հասել. անկասկած, չեր կարող այդ կետում  
 մնալ: Սակայն մնաց, մինչդեռ առաջարկն առաջարկի յետե-  
 ղից գալիս եր: Կեսորից սկսեց իջնել, իսկ մնչ այդ սին-  
 դիկատը գնել եր հարյուր հիսուն հաղար բաժնետոմսը, վո-  
 րից հարյուր յերեսուն հաղարը վան Թոնսելերն եր ծափել  
 նբանց:

Իսկ հիմա արդեն նրա միջնորդներն եյին բղավում, առա-  
 ջարկներ անելով, և գները հետպհետեւ կայուն վիճակ եյին  
 ստանում: Սինդիկատը նորից շտապ խորհրդակցության նըս-  
 տեց: Այս անգամ արդեն ակնհայտ եր, վոր մի զորավոր  
 ախոյան կանգնած ե նրանց դեմ ամբողջ ուժով: Վատանգը  
 նրանց համար մոտալուս եր և մահացու, քանի վոր այն

մոմենտին, յերբ սեղանավորները նկատեցին, զոր գները  
վար խփելիս հարձակում կա, տագնապը պիտի տարածվեր  
ամենուրեք: Իսկ դրանից հետո հազարավորներ պիտի վայ-  
րագ անստուգության մատնվեցին և սպասողական դրու-  
թյան մեջ մնային,—իսկ այնուհետև մի հատիկ կետ կարող  
եր պանիկա ստեղծել. կարող եր հազարավոր կամ հարյուր  
հազարավոր բաժնետոմսեր շպրտել յերերվող հաշվեկշռի մի  
կողմբ: Մի քանի բոպե տեսող վիճաբանությունից հետո սին-  
դիկատը գրավ դրեց յերեք հարյուր հազար եօ:

Շուկան կատաղի վիճակումն եր. Տ. և Ս. բարձրացավ  
մինչև 157<sup>1</sup>/<sub>2</sub> ու կանգ առավ: Մինդիկատի մարդիկը գոռուժ-  
գոչումով թնդացնում եյին առկայանի սրահը: Իսկ վան Ռեն-  
սելիերը՝ խաղաղ ու պատրաստ, ծախեց նրանց վորքան վոր  
ուղեցին, իսկ ամեն անդամ, յերբ նրանք փորձում եյին  
բարձր գնով առաջարկելու, վայրախաղացն սկսվում եր: Հե-  
տևանքն այն եր լինում, վոր արժեքը ճոճվում եր յետ ու  
առաջ, մի անդամ շահելով, մյուս անդամ կորցնելով մի կետ,  
այդ միենույն ժամանակամիջոցում առետուրը պահելով կա-  
տաղի վիճակում: Այս բոլորի իմաստն արագորեն հասկա-  
նալի յեր դառնում—այն ե՛ վոր վորոշ դավադիրներ աշխա-  
տում եյին գցել արժեթղթի գինը, և վոր այդ դավադիրնե-  
րը նույն այդ հսկաներիցն եյին: Այդ որը Ռոբերտ վան  
Ռենսելիերն «արժեր» մոտ քսան և յոթ միլիոն դոլար: Իսկ  
այդ նշանակում եր, վոր արժեթղթի արդի գնով նա կարող  
եր մեկ միլիոն յերկու հարյուր հիսուն հազար բաժնետոմս  
գնել: Արդյոք նրա հակառակորդներն ել կարող եյին այդ-  
քան հեռու գնալ՝ հայտնի չեր նրան: Նա մասյլ տեսքով  
նստել և հսկում եր թիքեղին, մինչդեռ վայրագ ճակատա-  
մարտը ծայրահեղ ցասման բնույթ եր ստանում, և վրդո-  
վահույզ աղմաւկը սեղանավորների փողոցի հեռավոր ծայրից  
մարդկանց ականջին եր հասնում:

Այսպես ժամերն իրար յետելից անցնում եյին,—յերեք  
յերկար ու հոգնեցնող ժամեր ես, վան Ռենսելլերը մեկ առ  
մեկ գործի յեր դնում իր հարվածները, վորոնք վոչ մի ար-  
դյունք չելին տալիս: Նա ջղային մարդ չեր, և չեր զար-  
նում սեղանին, բայց ճակատը մոայլվել եր, և կամացուկ  
հայհոյում եր: Նա իր ամբողջ ունեցածը գրավ եր դնում իր  
հակառակորդների անծանոթ ուժի դեմ, և յեթե նա իր վեր-  
ջին առաջարկով ել չկարողանար խորտակել նրանց, նա  
վերջին դուլարեց զուրկ մարդը կրառնար այս աշխար-  
հում:

Յեվ այսպես մոտենում եյին վերջին մի քանի ահարկու  
րոպեները՝ այդ մոլեգին հավերժահրշատակ որվա: Տասնյակ  
միջնորդներ գոռում եյին նրա հսկա առաջարկները: Ցեղավ  
մի դեպք, յերբ քսան հաղար արժեթուղթ մի անգամից մի  
ձեռքից մյուսն անցավ: Նա դատարկեց իր կապարձը, յերե-  
սուն դարձրեց ամբողջ շուկան. մարդիկ ահարեկումից գու-  
նաթափ յեղան, բայց նրա ամեն մի հրամանը վայրկենա-  
պես դիմադրության եր հանդիպում, և ահա Տ. և Ա. մի  
մատնաչափ անգամ յետ չնահանջեց: Այսպես, զուկան փակ-  
վելու ժամանակը հասավ, և սարսափելի որը վերջացավ:

## XXV

Ռոբերտ վան Ռենսելլերը ձեռքերը յետել գրած ման եր  
գալիս իր գրասենյակում: Նա այլևս փող չուներ, բայց չեր  
վախենում. նա մեծ վստահություն ուներ բնության հավեր-  
ժական որենքների վրա, — բացի այդ՝ դեռ մի-յերկու թուղթ  
ել ուներ խաղալու: Նա մտախոհ կերպով վեր ու վար չափ-  
չփում եր գրասենյակը կիսաձայն խոսելով ինքն իր  
հետ. — Կարծում եմ, վոր յես ամենաընտիր հնարաւու-  
րություններն ունեմ իմ ձեռքում, և իրապես բոլորովին ել  
վնաս չեմ ունենալ, յեթե բոլորն ել գործի դնեմ:

Նա զանգահարեց իր քարտուղարին և կարգադրեց հինգ  
տեղ հեռախոսելու չորսն իր բարեկամների՝ Ուոլ-Ստրիտում  
բախսաղով զբաղվողների հետ եր, վորոնք ընդհանրապես  
աշխատել և կռվել են նրա հետ միասին, իսկ հինգերորդը՝  
մը. Զառւնսի վան Ռինսելլերի հետ:

Մի քանի բոպե հետո արդեն առաջին չորսը նրա գրա-  
մենյակումն եյին, շնչառապու և այլայլված տեսքով:

— Դեհ, — ասաց վան Ռինսելլերն, — ի՞նչ եք մտածում այս  
առթիվ:

— Յերբեք չեյի տեսել այսպիսի բան, — բացականչեց  
նրանցից մեկը, — Երայկը, ցորենի հոչակավոր սպեկուլյան-  
տը, — յերբեք՝ իմ ամբողջ կյանքում: Ի՞նչ եք կարծում, ով  
և այս գործի մեջ, և ի՞նչ ե դուրս գալու դրանից:

— Հենց դրա համար ել կանչեցի ձեզ, — յեղափ վան Ռին-  
սելլերի պատասխանը: — Նստեցեք!

Ապա սկսեց խոսել նրանց հետ:

— Յես գիտեմ ով ե այդ գործում, բայց դեռ իրավունք  
չունեմ ասելու: Սակայն գիտեմ, վոր նրանք կշահեն: Իսկ  
յես վաղն առավոտ մինչև վերջին սենթս գործակրելով պի-  
տի նետվեմ գործի մեջ և ոգնեմ, վոր մի կատարյալ խոր-  
տակում տեղի ունենաւ: Յես գիտեմ ովքեր են կանգնած Տ.  
և Ս.-ի մարդկանց թիկունքում. դրանք են, առանձնապես՝  
Սմիթը և Շարկը: Յես լավ գիտեմ նաև, թե ինչ բանի յեն  
նրանք պիտանի: Շատ լավ եմ ճանաչում նույնպես Տ. և Ս.,  
վոր կախված ե անդունդի յեզրից, դա մի նզովյալ փքու-  
ռուց անպիտան բան ե, — դուք նույնչափ լավ գիտեք այդ: —  
իսկ սեղանավորները պատրաստ են ցատկելու կորցնող կող-  
մի վրա: Մրցարանը, վոր տանում ե այս պայքարը, շատ  
բան կստանա դրանից. բայց յես ել մի բան կստանամ, ե  
յես խնդրում եմ ձեզ այնպես անել, վոր այդ դառնա ապա-  
հով գործ: Մենք միայն պետք ե դնենք դրա վրա մեր ունե-

ցածը, և թող սեղանավորները հանկարծ հայտնաբերեն, վոր  
այդ մենք ենք: Դրանից հետո յերեք վայրկյանում անկումը  
տեղի կունենատ:

Մի քանի ժամ հետո այդ չորս ջենտլմենները դուրս յե-  
կան վան Բենսելերի գրասենյակից: Նրանք խոսեցին տի-  
րող գրության բոլոր փուլերի մասին, Տ. և Ս.-ի յերկաթու-  
ղու բոլոր թույլ կողմերի մասին, ինչպես և այն լուրերի  
մասին, վոր հարկ կլինի բաց թողնել: Խոսեցին այն մասին,  
վոր իրենց չեն կարող թակարդի սեջ ձգելու, — այն իրողու-  
թյան մասին, վոր հազարավոր բաժնետերեր հույս ունեն  
արժեգնի բարձրացման վրա, բայց դողում են սարսափից և  
անստուգությունից, յերբ մտածում են անկման մասին: Խո-  
սեցին Տ. և Ս.-ի ֆինանսիստների և Սմիթի ու Շարկի մի-  
ջոցների մասին, իրենց սեփական միջոցների. և իրենց  
անունների ծանր կշռի մասին: Ի վերջո վորոշում կայաց-  
վեց գնել ամբողջ Տ. և Ս. արժեթղթերը, վեր կառաջարկո-  
վեն առավոտյան՝ և ժամը տասն և մեկին վրա պրծնել ու  
փոշու վերածել այն:

## XXVI

Նրանք մեկնեցին:

Մի քանի ըստելից հետո մեր հերսուը գտնվում եր իր  
ավտոմոբիլում, վորն արագ սլանում եր դեպի քաղաքի վերի  
մասը: Նա մտավ իր ակումբի շենքը և անցավ մի առանձ-  
նասենյակ, ուր կարճ ժամանակից հետո շորորալով ներս  
մտավ հասակն առած, կարմրաքիթ և հոդացավոտ մի հին  
ջենտլմեն, զայրացած հայնոյելով և իր հարցին պատասխան  
պահանջելով.

— Ելի վ՞եր սատանայի համար ինձ այստեղ կանչե-  
ցէ՞ր:

Դա մը. Զառնախ վան Բենսելերն եր:

— Դեհ, — ասաց վորդին, մեծարանքով ողնելով նրան,  
վոր նստի աթոռին, — ի՞նչ եք մտածում դրա մասին:

— Այդ պատասխան չե, տրտնջաց մյուսը, — բայց տեր  
աստված, միայն մի որ ունեմ զրա համար, Ռոբբի, զիտեմ,  
վոր Տ. և Ս. հինգ հաղար բաժնետոմս ունեմ: Ամբողջ որը  
գժվածի պես եյի, սպասում եյի, հա սպասում:

— Հա-հա, — ծիծաղեց Ռոբերտը: Ի՞նչ բանի եյիք սպա-  
սում:

— Ի՞նչ բանի. միթե դու յերբեք չես վերցրել — գոչեց  
մյուսը: Զգիտեմ ովքեր են այդ սինդիկատում:

— Գիտեմ, — ասաց Ռոբբին, Տ. և Ս.-ի հրասակները և  
Սմիթն ու Շարլը, կարծեմ:

— Այն, հենց այդպես ել ե, — ասաց մյուսը, — և նրանք  
հասկանում են իրենց գործը, — կարող եմ քեզ ասել: Դու  
կտեսնես, թե վաղն ինչպես այս արժեթղթի գինը մինչեւ  
200 կրարձրանա: Ի՞նչ ես կարծում, ովքեր են այն հիմար-  
ները, վորոնք կովկի յեն դուրս յեկել դրանց դեմ:

— Չեմ կարծում, այլ զիտեմ, — ասաց Ռոբբին:

— Ցեվ ովքեր են դրանք:

— Այտեղ չկան «դրանք»:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Ուզում եմ ասել, վոր միայն մի մարդ կա:

— Ի՞նչ. և հի ե դա:

— Ռոբերտ վան Ռենսելերը:

Շերունի ջենտլմենը վեր ցատկեց աթոռից, հակառակ իշ-  
հողացավին:

— Աստված իմ, աստված իմ, — բացականչեց նա, — Ռոբ-  
բի, դու խելադարվել ես:

— Վհչ, — ասաց Ռոբբին, — միանդամայն իբողություն  
և այդ:

— Բայց դու կործանված ես:

— Ո՞ւ, վնչ, վնչ, բոլորովին վնչ, կառավարիչ (Ռոբրին միշտ կառավարիչ եր կոչում նրան): Վերջին սհնթս գործածել ես, բայց դեռ չեմ կործանվել, և վաղը, ժամի տասն և մեկից յերկու րոպե անց յես լինելու յեմ ամենահարուստ մարզը Նյու-Յորկ Սիթիում<sup>19</sup>: Պիտի վերցնեմ ամեն մի սհնթ, վոր կառաջաւ կեն կամ փոխ կտան Տ. և Ա.-ի մարդիկ. բացի այդ, վերցնելու յեմ մի քանի հարյուր դառնուկների բանկային հոշիվներն ել, ներառյալ իս ձերուկ և սիրելի հայրիկինը:

Ծերունի և սիրելի հայրիկը հերին շունչ եր քաշում:

— Դու կորած ես, Ռոբրի, — գոչեց նա. — այդ չի կարող լինել: Ինչպես կարող ես այդ անել առանց փողի:

— Յես հենց նոր մի սինդիկատ եմ կազմել — ասաց Ռոբրին ծիծաղելով:

— Բայց առանց փողի:

— Նրանք չգիտեն, վոր յես փող չունեմ, — ասաց նա զվարթ կերպով. — Բայց մի քիչ ձեղնից պիտի վերցնեմ, հենց այնպես, ապահովության համար:

— Հըմ, — արեց մը. Զառնոսի վան Ռենսելերը լակոնական վոճով:

— Նախ և առաջ, — ասաց մյուսը, — դուք այդ բաժնեառուսերը կծախեք վաղը ժամի տասին. յերկրորդ՝ Տ. և Ա.-ից վերցրած բաժնեառուսերը կծախեք պակաս գնով, կծախեք բոլոր գնորդներին, ովքեր պատահեն, իսկ մոտավորապես ժամի տասն և մեկին՝ կտեսնեք, վոր յերկինքը փուլ կդա և կրագիտի յերկրին:

— Իսկ ի՞նչ կառաջանա դրանից:

— Մի բան. դուք այնտեղ կինեք վորպես պակաս գնով ժախող: Դուք Ռուլ-Ստրիտի շուրջը պտտող հներդ նմանվում եք դիակը շրջապատող անգղներին. բավական ե, վոր մարդիկ տիսնեն ձեզ կաղեկաղ շտապելիս դեպի քաղաքի առևտուրական մասը, վորպեսզի յենթադրեն, վոր խորտակումը հաս-

նելու վրա յե, և յեթե դուք փսփսաք, վոր դուք ծախում  
եք Տ. և Ս.-ի բա ժնետոմսերը, խորտակումն ել ավելի վորո-  
շակի կրիսի:

— Մի ինչ վոր բան կա այդտեղ, — ասաց ծերունի-  
ջենտմենը, մի փոքր տարակուսանքից հետո:

— Բայց դրա համար չեր վոր յես ուզեցի ձեղ տեսնել, —  
ծիծաղեց Ռոբբին: — Գլխավոր ինսդիրը գեռ մնում ե: Այդ  
այն ե, վոր դուք հենց հիմա մի նվեր կտաք ինձ — մի յեր-  
կու միլիոն դոլար:

Մր. Զառւսի վան Ռենսելերը թեթևակի վեր ցատկեց  
իր աթոռից, իսկ աչքերը լայն բացվեցին:

— Յերկու միլիոն առնվազն, — կրկնեց Ռոբբին, տեսնե-  
լով, վոր նա անխոս ե մնում: — Այն ել պիտի նվարեք այդ և  
վոչ թե փոխ տաք: Եթե ձեզ ինչորեյի փոխ տալ, յես  
ստիպված կլինեյի մի շարք բացատրությունների մեջ մտնել  
և չեյի կարող այնպես անել, վոր դուք իրերի վիճակը հաս-  
կանայիք այնպես, ինչպես յես եմ հասկանում: Իմ ամրող  
ասածն այն ե, վոր յես լավ տղա յեմ յեղել և տասներեք  
տարի ապավինել եմ ինքս ինձ՝ առանց յերբեկց մի  
սննթի մնաս հասցնելու իմ ծեր հայրիկին. իսկ հիսա յես  
դրան պետք ունեմ և խիստ անհրաժեշտ պետք ունեմ: Դուք  
կմեռնեք մի որ, վորից հետո բոլորը կթողնեց ինձ, իսկ այդ  
ժամանակ մազաշափ ոգուտ չի տալ ինձ այդ հարստությունը,  
վորովհետեւ այս ընդհարման մեջ յեթե յես պարտվեմ, այդ  
հարստությունը շատ քիչ բան կլինի կորցրածի դիմաց,  
իսկ յեթե հօջողվեմ, ամեն ինչ կարգին կլինի: Ուստի ուզում  
եմ, վոր հենց հիւա տաք ինձ այդ գումարը:

Մր. Զառւսի վան Ռենսելերը խոչ ու յերկար շունչ  
քաշեց, ապա նստեց և ձգվեց դեպի սեղանը:

— Ռոբբի, ասաց նա, — պատմիր ինձ այս առևտրի մա-  
սին, ասա բոլորը:

— Ետի յես կամենում եմ յերկու միլիոնն ունենալ  
— Անպիտան, — նկատեց հայրը, — միթե չգիտես, վոր  
յեթե պետք ունես, կստանաս: Իսկ հիմա սկսիր պատմիլ ինձ  
այդ գործի մասին, և հիմար մի լինիլ:

Մուբեկն պատմեց նրան բոլորը. և վերջացնելուց առաջ  
տարիքավոր ջենտլմենը ձեռքերը շփում եր: Հետո յերերա-  
լով դուրս յեկավ և մի տոմս ուղարկեց իր միջնորդներին,  
պատվիրելով, վոր իր Տ. և Ս. բաժնետոմանը ծախեն հենց  
բացման գնով, առանց սպասելու: Նա զբեց նաև իր բան-  
կիրներին, վոր մը. Ռոբերտ վան Ռենսելերը լիազորված և  
ստանալու յերեք միլիոն դոլլար:

Իսկ մինչ այդ պահին մը. Ռոբերտ վան Ռենսելերը տա-  
կամին յետ ու առաջ եր քայլում իր սենյակում՝ ձեռները  
մեջքին դրած: Մի շատ քաղցր՝ ժողիտ եր խաղում նրա  
զվարթ գեմքի վրա: Անտարակույս նա այդ մոմենտում ամե-  
նայերջանիկ և գոհունակ մարդն եր Նյու-Յորկում: այդպիս  
եր նա ինքն իրեն մտածում, յերբ հանկարծակի դուռը բաղ-  
խեցին, և մի սպասավոր ներս մտավ:

— Զեղ մի տօմս, սըր, վորի վրա գրված ե՞ «Հույժ  
շատապ», — ասաց յեկողը:

Մեր բարեկամը վերցրեց տոմսը, սպասեց, մինչև վոր  
մարդը գնաց դուրս, ապա բացեց և կարդաց հետեւալը.

«Մը. Ռոբերտ վան Ռենսելեր.

Հարգելի պարոն,—

Բարի կրինեյիք խնդրելու մեր բարեկամ մը. Դրինին,  
ոյս յերեկոյան գալու իր վաղեմի բարեկամ միսիս  
Լենչի տունն այնպիսի մի խնդրի համար, վորը ծայ-  
բաստիճան ստիպողական բնույթ ունի նրա հա-  
մարձ:

Անողուա և նկարագրել Ռոբերտ վան Թենսելերի ականարկությունները, վոր արեց նա կարդալիու Հավանաբար ընթերցողն արդին յենթագրում եւ, վոր նա ամեն հաշիվ վերջացրել եւ միսիս Լինչի հետ Համենայն դեպս մը. վան Թենսելերն այդպես եր յենթագրում Բայց կյանքի բազմաթիվ համելի յերեւյթների անհանելի կողմն այն փաստն եւ, վոր յերբ մենք ցանկանում ենք դրանք մոռանալ, հաճախ դրանք չեն կամենում մեզ մոռանալ:

Ո՞վ եր գրել նամակը և ինչ եր նրա նպատակը, այս մի պրոբլեմ եր, վորը կը պատառում եր մեր հերոսը ժամերով.—Ժամեր, վոր նա անցկացրեց կամ սենյակը չափչիւով, կամ անշարժ ընկած պթուին, ձեռներն իրար հյուսած և հայացքը դատարկության սկեռած:

Եերբ, վերջապես, նա մի վորոշ ժամանակ ման յեկավ, ակեներեաբար այդ հուսահատ մի վորոշում եր, վորովհետև նրա ձակատը մոայլ եր, իսկ աչքերը փայլում եյին: Նա զուրուեակացեց և միշերկու ըովե հետո մի քեր նստած՝ սուրում եր դեպի քաղաքի վերին մասը: Շատ չանցած նա դուրս յեկավ ու քայլեց, իսկ յերբ քերն աներեւութացավ, նա կանչեց մի ուրիշը և նստելով քշիլ տվեց դեպի մերի Հարրիսոնի բնակարանը:

Վերջինս հագած եր վարդագույն մետաքսյա շրջազգեստ, յերջանկությունից նրա այտերը բոսրագույն եյին դարձել: Ասեն բանով նա այնքան հրաշալի յեր, վոր անկախ իրենից Ռոբերտ վան Թենսելերի մոայլ դեմքը կիսով չափուելի տվեց մեղմ արտահայտության՝ հենց վոր ներս մտավ սենյակը: Բայց և այնպես դեմքի խստությունն ու արդությունն չչքացավ, վորպեսզի աղջիկը չկարողանար նկատել =յդ:

— Ի՞նչ ե պատահել, — բացականչեց վերջինու: — Խոսակցիք գեմքը նույն խոժոռ տեսքն ստացավ:

— Մերի, — ասաց նա հանկարծակի, — մենք պետք ե իրարից բաժանվենք: — Աղջիկը ցնցվեց:

— Ի՞նչ ես ուզում ասել, — գոչեց նա:

— Այն, ինչ վոր ասացի. պետք ե իրարից բաժանվենք:

Աղա տեսնելով աղջկա մեռելային դժգունությունը, դեպի իրեն քաշեց նրան, գայլեց և յերկուսով նստեցին բազմոցի վրա:

— Լսիր, Մերի, — ասաց նա ավելի մեղմ տոնով, — դու մի լավ, խելոք աղջիկ ես, ուստի չեմ վախենում հայտնել քեզ ամրող ճշմարտությունը. գիտեմ, վոր դու վոչ մի միղք չունես այդ բանում, բայց յես ընկել եմ լուրջ դժվարության մեջ. իսկ դրանից ինքս ինձ փրկելու միայն մի միջոց կա աշխարհում:

— Ի՞նչ ես ուզում ասել, Զիմ, — հառաչեց նա (նրան սովորեցրել ելին Զիմ կոչել նրան):

— Մերի, գիտես, վոր ամուսնացած եմ, չե՞:

— Այո, — ասաց նա, — բայց ինչ...

— Ցեվ վոր յես շատ հարուստ եմ. լնվ, միսիս Լինչն աշխատում ե ինձ սկաշորթել<sup>20</sup>: — Աղջիկը յետ ընկրկեց:

— Դու... ի՞նչ... — հառաչեց նա:

— Ճշմարիտ ե, — ասաց մյուսն. — արդեն մի քանի հաշար դոլար վճարելիք ունեմ նրան:

— Բարի աստված, չի կարող պատահել, — բացականչեց աղջիկը:

— Այդպես ե, — պատասխանեց մյուսը, — իսկ այդ նշանտկում ե միայն մի բան — վոր պետք ե հավիտյանս բաժանվենք իրարից:

### XXVIII

Մերի Հարրիսոնը հարբածի պես յերերվում եր կանգնած  
ուեղում, նա հենվից մի աթոռի:

— Զի՞ս, — ասաց նա շնչառպառ, — Բնչ պիտի լինեմ  
յես:

— Վստահ յեղիր, վոր յես միշտ կհետևմ, վորպեսզի  
լավ խնամք տարվի քեզ:

— Վնչ, վոչ, յես այդ չեմ ուզում ասեմ, — գոչեց աղ-  
ջիկը: — Բայց, ո՞չ... յես քեզ սիրում եմ... չեմ կարող ապ-  
րել առանց քեզ... Հանուն յերկնքի, մւր պիտի պնամ յես: —  
Այս ասելով նետվեց նրա զիրկը սաստիկ հեծկլտանքով: —  
Ի՞նչ պիտի անեմ յես, — շարունակում եր հեծկլտալ կրկն  
և կրկն. — Բնչպես յես կարող եմ տոկալ դրան:

Նա աշխատում եր հանգստացնել աղջկան:

— Լսիր, — շնչաց նա. — Քեզ մի տանջիր այդքան,  
դուցե կարողանաս մռանալ ինձ, խնդրում եմ այդ կերպ  
մի վարփիր:

— Վնչ, վոչ, այդ միտքը կարող ե սպանել ինձ, կարող  
ե սպանել:

Ապա հանկարծ նա ցատկեց վոտքի և աչքերն արտա-  
կարգ փայլ ստացան:

— Յես կսպանեմ այդ կնոջը, — ասաց նա հեվալով: —  
Ո՞ւս թի ինչ կանեմ:

Նա աղջկան նորից դեպի իրեն քաշեց, ջանալով հանգս-  
տացնել նրան:

— Վոչ, վնչ, Մերի, — ասաց նա — այդ ավելի կծանրացնի  
իմ վիճակը: Յեթի ինձ սիրում ես, պիտի թողնես ինձ.  
այս և միակ յելքը: — Աղջիկը նստեց նրա կողքին դռւնատ  
ու դողդոջուն և արտասվում եր անմխիթար: Նա ճակատի  
զրա թափված գեղեցիկ մազերը յետ քաշեց, հարդարեց, և

նստելով աչքը սևեռեց իր դիմաց մի կետի, հուսահառ ար-  
տահայտությամբ:

— Թողնել քեզ,—շնչաց նա հեղձամդուկ.—թողնել քեզ:

Նրա խոսակիցը չափազանց անմիտթար վիճակումն եր: Բնականաբար բարեսիրտ մարդը չի կամենալ վիշտ պատ-  
ճառել մի կնոջ, մանավանդ այնպիսի սեկին, վորին դիռ  
սիրում ե: Սակայն նա արդեն կայացրել եր իր վորոշումը,  
և միտք ուներ գործադրել այդ: Նա թույլ տվեց, վոր աղ-  
ջիկը հենվի իր կրծքին և վողբա իր ծանր վիշտը:

— Իսկ յես յերբեք չեմ տեսնի քեզ, թեկուզ կարճ ժա-  
մանակով,—հեկեկում եղ նա:

— Վոչ,—պատասխանեց նա դրականապես:—Մերի, միթե  
չես տեսնում, վոր աշխարհում վոչ մի տեղ չունեմ քեզ պահելու,  
այնպիսի մի տեղ, վոր այդ կինը չկարողանա գտնել հետքը:  
Նա արդեն գտել ե իմ հետքը, նա կարող ե կործանել ինձ,  
Մերի, նա կստիպի ինձ անձնասպան լինել:

Մերին սարսուաց:

— Վոչ,—ասաց նա, — դու չպետք ե այդպիսի բան  
անես: Դու իրավունք ունես, յես պետք ե անեմ դոհողու-  
թյունը, յես կգնամ, կարծում եմ... Կարող եմ տանել մի  
կերպ: Բայց ո՞հ, Զիմ, յես վոչ վոքի այնպես չեմ սիրել  
ինչպես քեզ, և չեմ ել սիրելու:

— Յես յերբեք չեմ մոռանալու քեզ, — ասաց նա, — և  
կտամ քեզ ամին բան, ինչի պետք ունես: Մերի... փողի հա-  
մար չմտածես:

Բայց աղջիկը հապիվ թե լսեց նրա ասածը: Նա փողի  
համար չեր մտածում:

— Իսկ մեր ես գնալու, — վերջապես հարցրեց նա աղջկան:

— Զգիտեմ, — ասաց նա, — տուն չունեմ, մեր պիտի  
գնամ, թերևս ելի յետ գնամ այնտեղ, վորտեղից յեկել եմ,  
դեպի Ալբէնի:

Թորենը վաճ թենսելլերը նայեց նրա գեմքին: Ալբընի  
անունը մի հանկարծահաս վերհիշում պատճառեց նրան:

— Բայց դու չեյիր ասել, վոր յեկել ես Ալբընիից:

Նա մի բոպե տարակուսեց, ապա շարունակեց:

— Գուցե... կարող ե պատահել... դու կճանաչես այն-  
տեղ մի աղջկա... բայց յես նրա անունը չգիտեմ, — ավե-  
լացրեց նա մեղմ ժպիտով:

— Այդ զեպքում վախենում եմ, վոր չպիտի կարողա-  
նամ վորևե տեղեկություն տալ, քեզ, — ասաց մյուսը, պա-  
տասխանելով նրա ժպիտին: — Ասենք յես շատ քիչ մարդ-  
կանց եմ ճանաչում այնտեղ. առհասարակ վոչ-վոքի չեյի  
ճանաչում, մինչև վոր սրանից մի քանի տարի առաջ մայրս  
հեռացավ ինձանից.

— Հեռացմավ, — հարցրեց մյուսը, — կարծեմ ասում եյիր,  
թե մեռել ե:

— Պետք ե վոր մեռած լինի, — ասաց աղջիկը. — քանի  
վոր այնքան հիվանդ եր. բայց չգիտեմ ինչ պատահեց  
նրան. — Նա ել չվերադարձավ:

Նա նայում եր աղջկան խիստ զարմացած. — Ճել չվե-  
րադարցմավ... արձագանքեց նա, ապա ավելացրեց.

— Ի՞նչ եր մորդ անունը:

— Հելեն, — ասաց աղջիկը

Խօսակիցը յետ ընկրկեց:

— Ա՛հ, այդ սարսափելի յեր, — շարունակեց աղջիկը  
դողոջուն ձայնով: — Իմ խեղճ, սիրելի մայրիկ. վորքան եր  
չարչարգում ինձ խնամելու համար, և վորքան բարի յեր  
նա: Նա այնքան աշխատեց և չարչարվեց, վոր մահվան  
դուռը հասավ: Զիմ, իրողություն ե այդ:

— Ի՞նչ հիվանդություն ունիր:

— Հյուծախտ, — ասաց աղջիկը. — և տեսավ, թե ինչպես  
դիմացինը ցնցվեց: — Ի՞նչ պատահեց, — հարցրեց նրան:

— Վոչի՞նչ—ասաց նա. այդ... այդ մի այլանդակ գու-  
ղաղիպություն եւ իսկ ի՞նչ եր հորդ անունը:

— Ես յերբեք վորեե բան չեմ իմացել հորս մասին։  
մայրս յերբեք չի խոսել նրա մասին։ Սակայն յես միշտ  
կասկածել եմ, վոր նա ամռանացած չի յեղել մօրս հետ...  
այսինքն...

Նա կրկին կանգ առավ, վորովհետեւ դիմացինի շարժ ու-  
ձևերը տարորինակ երին. ինչեւ: Նա շարունակեց պատմել.

— Կարծեմ հայրս հարուստ ե յեղել, գեղեցիկ և բարի։  
Մայրս մի մանյակ տվեց ինձ, վոր հորս նկարն եր պարու-  
նակում, և ասաց ինձ, վոր մենակ հայրս ունի դրա բանա-  
լին. նա կորցրել եր իրենը, վոր գարձյալ հայրս եր  
տվել:

Աղջիկը նորից կանգ առավ: Մեռելային գույն եր առել  
մորերտ վան թենուելլերի դեմքը: Նա սերտորեն հենվեց  
նրան. նրա աչքերը, նրա ամբողջ դեմքը պատաժ եր սոս-  
կումով: Նրա ձեռքը, աշնան տերեկ նման, դողում եր, յերք  
մեկնեց աղջկան։

— Մի մանյակ, մի մանյակ, — հեռում եր նա շնչառապառ  
Ասոված իմ: Քեզ մնա ե այդ:

— Այս, գոչեց աղջիկը զարմանքով և վազեց գեպի պա-  
հարանը: Աղջիկը բռնից մանյակը նրա դիմաց, և վերջինս  
վազելով դեպի նա, մի ակնարկ զցեց գոհարեղենի վրա ու  
յերերալով յետ մզվեց, — նման մի մարդու, վոր՝ դանակի  
հարված ե դգում իր սրտի մեջ. նա մի վայրագ և աճուրի  
ճիչ արձակեց, ձեռքերով գլխին խփեց ու յերերաց այն-  
պես, վոր ասիս անսիջապես պիտի ընկնի:

Իսկ Մերին ահարեցված նետվեց դեպի նա:

— Զիմ, Զիմ, — ճչաց նս, ի՞նչ պատահեց քեզ: — Աղջիկն  
ուղում եր բռնել նրան, բայց սա խռոսափեց նրա ճնշումից  
ի՞նչպես մի վայրենի գազանից:

— Վճչ, վճչ,—գոռաց նա և սողաց դեպի անկյունը  
ցերկյուղից սառած աչքերով. վճչ, մի մոտենար ինձ:

— Բայց Զիմ,—ճշաց կրկին աղջիկը,—ի՞նչ բան և այս,  
քնչ պատահեց քեզ:

Վերջինս ծնկների վրա չոքած ջղաճգորեն ցնցվում եր:

— Ո՞հ, աստված իմ,—աղաղակում եր նա շնչակտուր,—  
աստված իմ:—Մերին գարձյալ նետվեց դեպի նա և պինդ  
փարվեց նրան:

— Զիմ, Զիմ,—բզավում եր նա հիստերիկորեն.—պետք ե  
ասես ինձ յեղելությունը, պետք ե ասես, պարտավոր ես:  
Դու զիտե՞ս, թե ով եր իմ հայրը:

— Այս, —ասաց նա հազիվ շունչ քաշելով և գլուխը  
խոնարհեցնելով. ճանաչում եմ... ճանաչում եմ...

— Իսկ ով եր նա: Ո՞վ—ասա ինձ:

Նրա շունչը կրկին խեղդվեց կոկորդում և չկարողացավ  
վորեն խոսք արտասանել: Յերբ նա զգաց աղջկա ջերմ  
շունչը և նրա բազուկների ճնշումն իր շուրջը, մի հանկար-  
ծահաս սարսուռ անցավ նրա ամբողջ մարմնով, և նա այն-  
պիսի մի ուժով դեն հրեց նրան, վոր նա յերերալով ընկալ  
հատակի վրա: Ապա նա դողդողացող վոտներով և հեկեկա-  
զով շտապից դեպի դուռը. մի վերջին հայացք գցելով աղջ-  
կա դեմքին, նա խելահեղորեն ցած թռավ սանդուղներից:  
Դրսում սպասում եր նրա քերը: Նա չնկատեց այդ և սկսեց  
քայլել. բայց կառապանը ձայն տվեց, վորի վրա վան թեն-  
սելիքը մի բոպէ ինքն իրեն ժողովեց և իսկույն կառք մատվ:

— Քշիր, քշիր, — ասաց նա շնչահեղձ:

— Դեպի մւը, — հարցրեց կառապանը:

— Քշիր, դեպի վորեն տեղ, — գոռաց նա: — Քշիր:

Ցեղ ալպես նրանք արագորեն անցան փողոցից: Վան  
Քենսելլերը կուչ եր յեկել մի անկյունում և ձեռքերն իրաբ  
հյուսած ամբողջ մարմնով գալարվում եր:

Միայն մի միտք եր համակում նրան ամեն բռպի, վորուպես ստնդանք, ցնցելով և հարկագրելով հեկեկալ: Յերկար նա չեր կարող տանել այդ դրությունը, նա ձայն տվեց կառապանին, վոր կանգնի և նրան փող ձգելով, կառքից դուրս նետվեց: Նրանք գտնվում եյին քաղաքային այդու ամենախուլ վայրերից մեկում, Վան Բենսելերը շուռ յեկավ և անհայտացավ մթության մեջ:

## XXIX

Նույն պահին Մերին մնացել եր մեն-մենակ՝ սենյակի մեռելային մթության մեջ: Նա կծկվել եր մի անկյունում վիրավոր կենդանու պես: Դեմքը մոխրի գույն եր ստացել, իսկ աչքերն ուռել եյին: Նա իր գողահար ձեռներում պինդ բռնել եր մանյակը:

Նա նայում ու նայում եր դրան, ահից սարսափահար և անկարող՝ տեղից շարժվելու: Ցանկանում եր բանալ այդ բայց առնվազն տասը ըոպե անցավ, մինչեւ վոր նա կարողացավ վոտքի կանգնել և խարխափելով սենյակի մյուս կողմեանցնել: Նա մի դուր գտավ, ծնկաչոք հատակի վրա ընկավ և առ ու դողով ջանք թափեց բացել այդ: Նրա ձեռները նման եյին գլնեմոլի ձեռների և նրա շարունակ իր մատները վիրավորում եր: Հանկարծ կափարիչը մի կողմ թռավ և նա հարձակվեց դրա վրա:

Մի ակնարկ դցեց դրան, վորը նրա թույլ ու անոգնական ձեռքից գետին ընկավ: Նա բուռն հեկեկանքով յետ մղվեց գեղի պատը, մի պահ որորվում եր կանգնած տեղում: Ապա դարձավ և կայծակի արագությամբ կտրեց անցավ սենյակը, Մի ըոպե խարխափելով ինչ վոր բան եր փընտում սեղանի դարակում, հետո մի ատրճանակի պայմանական լսվեց և աղջիկը վորպես մի դողդոջուն շեղջ գետին փռվեց: Նրա ուղեղը ցըվել եր գորգի վրա:

Հինգշարթի որը, առավոտյան ժամի իննից առաջ, աղքահույզ, իրար բոթող մարդկանցով բռնված եր Ուոլ-Ստրիտը։ Սակարանի նրբանցքում քայլ փոխելու տեղ չկարդրսում, արգելաշղթայի մոտ բազմությունն իրար եր իրունված, Բոլորն ել խոսում եյին դնացուցակների մասին, իսկ տարակուսանքն ու սարսափը նկարված եր յուրաքանչյուրի դեմքին։ Բոլորն ել գիտեյին, վոր կովի ճգնաժամը համել և և վոր շուտով այս կամ այն կերպ ամեն ինչ հայտնի կլինի։

Այս խառնիճաղանձ ամբոխի միջից Ռոքերոտ վան Ռենսելերը ճանապարհ բացեց իրեն։ Վոչ վոք ուշադրություն չդարձրեց և վոչ վոք ճանաչեց նրան։ Հագուստը ցնիսի ու մրի մեջ կորած, զլիսարկը տրորված և աչքերի վրա քաշ ընկած։ Նրա դեմքը բորբոքված եր, աչքերն արնակոխ, և նա որորվում և ամեն անգամ քայլը փոխելիս խարխափում եր չորս բոլորը։ Նա հարբած եր։

Քայլերն ուղղելով դեպի իր գրասենյակը, ներս ընկալ և սուզվեց աթոռի մեջ։

— Մի քիչ ուխսկի բերեք ինձ, — հրամայեց նա իր քարտուղարին, Շուտ։

Վերջինս ապշած նայում եր նրան։

— Մի քիչ ուխսի՛, — գոռաց նա նորից, ԶԵՐ լսում, և դուռը փակեք ու վոչ վոքի մի թողնեք ներս, Արագ։

Մարդը շուռ յեկավ և անհետացավ։ Իսկ վան Ռենսելերը նստեց աթոռին և վայրագ աշքերը հառեց իր առջեւ մի կետի։ Քաղաքի առեւտրական մասն անցնելիս, նա ամբողջ ճանապարհին յերազի մեջ գտնվող մարդու պես եր։ Միայն մի միտք եր տիրել նրա եյությանը և նրան առաջ մղել, մի միտք, մի խոռք, վորը քրթմնջում եր նա քայլելու ժամանակ, — «Ուոլ-Ստրիտ, Ուոլ-Ստրիտ, Ժամը 10-ին»։

Հանկարծ նա շուռ յեկավ և նայեց թիքերին, հետո կանգնեց, շորորալով մոտեցավ նրան և հենվեց նրա պատվանդանին՝ տարուբերվիլով։ Կարդաց վաղ առավոտյան տեղեկությունները և մի ակնարկ գցեց ժամացույցին։ Ժամը տասից տասը ըոպե յեր պակաս։

— Ա՛հ, հառաչեց նաև Փրկված եմ։

Քարտուղարը վերադարձավ, մյուսն խկույն կորզեց նրա քերած շիշը և խմեց։ Հետո դարձավ նրան։

— Յերեկ զրեցի Զօնս և ընկ. վոր յերեք միլիոն դոլար փոխանցեն սիջնորդներիս. տեսնք, թե կատարվել ե այդ Ասացեք միջնորդներին, վոր ծախսեն Տ. և Ս. վորքան կարելի յե շուտ, և մինչև վոր վերջին ենթը գնացած կլինի Հետո դուք վերադարձեք այստեղ ! վոչ վոքի մի թողնեք մուտք գործի այս սենյակը, վէճ մի հոգու, լավ հասկացեք, վոչ մի հոգու։ Հասկացմք։

— Հասկացա, — ասաց քարտուղարը և հեռացավ՝ հետաքրքրությունից ապշած։ Առաջին դործը, վոր նա կատարեց, այն եր, վոր պատվիրեց իր հատուկ միջնորդին պահել մի քիչ Տ. և Ս. իր ունեցածից։ Քարտուղարը յերբեք չեր տեսել վան Բենսելերին այսպես խելակորույս վիճակում։

Նույն պահին վան Բենսելերը ձեռքերը կոտրտելով քրթմնջում եր՝ աչքերը հառած զանդաղաշարժ ժամացույցին, հեղուկի շիշը սեղանի վրա, իր կողքին պահած։ Այսպիս անցան ըոպեները, իսկ սլաքները կանդ առին տասի վրա և ժամացույցը տասն անգամ զարկեց։

### XXXI

Արժեր այդ մոմենտին մտնել սակարանի դահիճը և տեսնել խաժամուժ ամբոխը. հաղարավոր մարդիկ տարուբեր վուժ եյին մի կետի շուրջը, իսկ հենց վոր ժամը տասը զարկեց, աղաղակների մի ամբողջ խլացույցիչ խմբերդ դուրս ժայթքեց։

«Տրանսառլանտիկ» և Սըբըրբան. Տրանսառլանտիկ» և  
Սըբըրբան»:

Ելուրիշ արժեթղթի մասին մտածող չկար այդ որը:  
Փոքր ֆերմաներից շատերը փակել եյին իրենց գուները՝  
չհամարձակվելով առևտուր անել մի այդպիսի շուկայում:  
Իսկ նրանք, ովքեր նայում եյին թիքնորին, ուրիշ վոչինչ  
եյին կորդում, բացի՝ Տ. և Ս. 157<sup>1/4</sup>, 157<sup>1/2</sup>, 157<sup>3/8</sup>  
և այլն և այլն: Տ. և Ս.-ի յելեզքը տարուրերում եր այն  
յերկու հրեշների, վորոնք մի մահացու գոտեմարտի մեջ եյին:  
Իսկ վան Ռենսելերն աչքը սնուցանում եր այդ տեսարա-  
նով, մի անգամ ևս ազատ շունչ քաշեց: Սարսափն այլես  
չեր պաշարում նրան: Հուզմունքը վանեց նրա ուղեղից հե-  
ղուկի գորորշին: Նա լդարձյալ հարբած եր, — բայց կովի  
եքստազով: Նրա համար յուրաքանչյուր մի թիվ մի հարված  
ևր նշանակում, կացնի հարված՝ իր թշնամիների գլխին: Նա  
կարող եր արդեն պարզ պատկերացնել, վոր այս հարված-  
ներն իջնուած են հորը կողմից, իր կողմից, Երայկի կողմից  
և այլն: Նա իր ձեռները ծալեց և վորպես կովի յելքին  
սպասող մեկը՝ արագորեն գոչեց: «Տիեզ դրանց, թող կոր-  
չեն, թող կորչեն»: Իսկ միենույն պահին թիքերը շարժվեց.  
Տ. և Ս. 100-ը՝ 157<sup>1/2</sup>-ով, Տ. և Ս. 500-ը՝ 157<sup>5/8</sup>-ով, Տ.  
և Ս. 3000-ը՝ 157<sup>3/8</sup>-ով, Տ. և Ս. 10000-ը՝ 157<sup>1/4</sup>-ով, և  
այսպես զրեթե անդադար: Վարը, փողոցի ներքեւմ, խե-  
լահեղ ամրոխն եր մռնչում, ասեք թե գալարվող մարմին-  
ների մի վիթխարի կույտ եր ձեր առջեւ:

Այսպես անցավ կես ժամ, իսկ Տ. և Ս. մառն եր հար-  
ձակողական դիրքում: Վան Ռենսելերը ոգնություն եր  
ստացել, բայց ըստ յերեսոյթին ոգնություն եր ստացել և  
օբնողիկատը թվում եր, թե ամբողջ Ուոլ-Մարիտը բաժան-  
ված եր յերկու բանակների, վորոնք յերդվել եյին չինա-  
յել պարտվաղին: Յեվ պայքարը շարունակվում եր. Ժամը

յեղավ 10<sup>45</sup>: Տ. և Ս. շարժվեց, վերջապես յեղավ 157 <sup>3/4</sup>, — այսինքն որվա ամենաբարձր դինը: Վան Իենսելիրը մի մեծ ուժով ևս ընդունեց հեղուկից և հենչեցրեց իր գանգակը:

— Լսեցք, — ասաց նա շնչառպառ քարտուղարին խիստ արագախոսությամբ: — Ճգնաժամը հասել ե, վորքան կարող եք արագ վազեք զուրս և հենդ առաջին հանդիպողին ասեք, վոր Արկանսազի որենսդրությունը կըկնապատկել ե Տ. և Ս. յերկաթուղու փոխազդրական տարիքը. տասնյակներով մարդիկ նույնը կծանուցանեն. ապա սպասեցեք այստեղ հինգ րոպե, — վոչ մի վայրկյան ավելի, լսնմ եք և այնպիսի լուր տարածեցեք, թե յես խորտակում եմ Տ. և Ս. և վոր ինձ հետ են նաև նահանգապետը, Շրայկը և բոլոր մյոււները:

Քարտուղարը գլուխը խոնարհեց և անհետացավ. իսկ վան Իենսելիրը մի անգամ ևս շուռ յեկալ դեպի թիքերը: Մի բոպե դադար, ապա գնաց դեպի պատուհանը և դուրս նայեց: Նորից սկսվեց, — Տ. և Ս. դեռ կանգուն եր. վան Իենսելիրին հայտնի յեր, վոր թիքերը մի քանի բոպե ուշ և հայտնում շուկայի վիճակը, դրա համար ել հայնոյում եր անհամբերությամբ, ուստի վերցրեց մի մատիտ և ինքն սկսեց զբել թվերը, վորքան կարող եր դողդողացող մատներով:

Նա քսան և յոթ միլիոն դոլար եր հատկացրել այս գործին: Գնել եր մոտ մի միլիոն յոթ հարյուր հիսուն հազար բաժնետոմսեր: Այդ ուրիշն ավելին եր, քան իրոք գոյություն ուներ: Բայց Ուոլ-Մարտի սպեկուլյացիայի սիստեմերով՝ իրերի բավական սովորական մի դրություն եր: Նրա վրա ամենից շատ ազդող իրողությունն այն եր, վոր յուրաքանչյուր կերպով Տ. և Ս.-ի անկումը նրան տալիս եր մի միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դոլար

շատ այն մարդկանցից, վորոնց դեմ նա կռվի յեր դուրս  
յեկել, իսկ ընդհակառակը, յեթե բարձրանար և կանգ տռնիր  
այդ կետում մինչեւ սահմանված ժամը — ինքը պարտք  
կմնար սիենույն գումարը: Յեվ հանկարծ թիքերը «թը՝ կ»  
արեց կըկին. ժամը տասնմեկին հինգ րոպե յեր ուղում, իսկ  
Տ. և Ա. դեռ կայուն եր, — 157<sup>5</sup>/<sub>9</sub>, 157<sup>3</sup>/<sub>8</sub>, 157<sup>1</sup>/<sub>2</sub>,

Այս չեր կարելի հանդուրժել:

Եիշը մինչեւ մրուրը քամեց և զուրս նետվեց դռնից: Մէ-  
քանի րոպեիցից նա փողոցում եր արդեն:

### XXXII

Հաղարավոր մարդիկ վայրենի հայացքով և ճիշերով դեպի  
այդ կողման եյին վազում: Վան Ռենսելերն ամեն տեղ մի  
խոսք եր լուսմ միայն, «փոխաւրական տարի» ֆը, փոխա-  
րական տարի» ֆը... կործանվեցին նրանք, վան Ռենսել-  
երը... Շրայկը: Իսկ նույն ժամին նա շտապում եր գեղի  
սակարանը: Նա անդամ եր և թույլատրվեց մանելու այդ  
հիմարանոցը, մարդկանց այդ գալարվող, ջղագրգիռ բազ-  
մության մեջ, ուր նրանք իրար եյին ճգմում, ջունչ սպա-  
ռում և ջանք թափում, վորպեսզի հասնեն առևտրի կենտ-  
րոնավայրը: Վան Ռենսելերը հայացքը հառեց արժեթղթերի  
գնին — 157 եր: Այսաեղ ել նա լսեց նույն բացականչու-  
թյուններն, ինչ զրսում: «Փոխարական տարի» ֆը... վան  
Ռենսելերները և մնացած բոլորը: Յեվ հանկարծ նա տե-  
սափ իր մոտ մի վիթխարի, յեզանման մարդու, վոր մի ձեռ-  
քին թափահարում եր թղթի մի կտոր և բառաշում այնպիսի  
ձայնով, վոր նսիմացնում եր ընդհանուր աղմուկը: Վան  
Ռենսելերի սիջնորդներից մեկն եր նա, լավագույնը նրան-  
ցից: Յերբ վան Ռենսելերը լսեց նրան, սիրու մի բոպե  
կանգ առավ:

Մոմենտը հասել եր:

— Առաջարկում եմ քսան հազար, վաճառողի յեռորյա սպցիոն... քսան հազար Տ. և Ս., հարյուր հիսունը յոթ... հարյուր հիսունը յոթ Քսան հազար, վաճառողի յեռորյա սպցիոն, հարյուր հիսունվեց ու մեկ յոթ ութերորդ... հարյուր հիսուն վեց ու յերեք քառորդ:

Ապա նորից վորոտագին աղմուկն ուռնացավ և խափանեց նրա ձայնը: Հարյուրավոր տեղերից մարդիկ բղավում ելին: — «Հազարը» հարյուր հիսունվեց ու կեսնվէ Յերեք հազար հինգ հարյուրը՝ հարյուր հիսուն վեցնվէ, հարյուր հիսուն վեց, հարյուր հիսուն հինգ և կես»:

Իսկ վան Մենսելերը խելանեղ, հարբած և կրքից կուրացած, ձեռներն ողում թափահարելով, բղավում եր զայրույթով: «Կորչեն», կորչեն նրանք, կորչեն: Վրա տվեք դրանց: Զախջախեցք: Նարունակեցե՛ք, ուրունակեցե՛ք: Այժմ նա գիտեր, վոր հաղթությունը տարված ե. նա կարող եր նույնիսկ ողում նշանաբեր այդ պանիկան, այդ վայրապ, ցանկու, կատաղի թաթառը, վոր իր ճանապարհին զտնվող ամեն ինչ արմատախիլ ե անում: Այդ ոկսվել եր... սկսվել եր: Վոչ մի գնորդ չկար այս, թշնամին նահանջում եր, խորտակումը մոտ եր: Այսպես, նա ճշում և ծիծաղում եր ցնորվածի պես, իսկ ամրոխն իրար բողելով սերտորեն սեղմվում եր առևտրավայրի մոտ, նույնպես կատաղածի պես, ահաբեկված կամ ցնծության մեջ, նայած հանգամանքին: Կային մարդիկ, վորոնք յուրաքանչյուր կետում միլիոններ եյին կորցնում, — միլիոններ, վոր վան Մենսելերն եր շահում: Յեզ նրանք տեսնում եյին, թե ինչպես պարտությունն ու խորտակումը սարսափահար աչքերով իրենց են նայում: Ուստի նրանք մոլեգնորեն ճշում եյին, վորպեսզի մեկն ու մեկը գներ Տ. և Ս., գներ թեկուզ հարյուր հիսուն և հինգով, հարյուր հիսուն և յերեքնվէ Բայց շուտով այլև վոչ վոք չկար, վոր վորեւ գնով գներ:

Այսպիս եր, վոր մըրիկը պայթեց իր հուժկու թափով։ Այս պանիկա չեր, այլ քառս և սանձարձակ ավերում։ Արժեթուղթը վերջապես «շուր յեկավ», նրա պաշտպանները բրածեծ յեղան, իսկ հասարակությունը, ահաբեկված բազմությունը ցատկեց պանիկան հաղթահարելու նպատակով։ Այլևս գինը չեր շարժվում կոտորակով կամ նույնիսկ առանձին կետերով, այլ միանդամբ յերեք, հինգ, տասը կետերով։ Նրա արագընթացությունը վոչնչով չեր կանոնավորվում։ Պանիկան ելեկտրական արագությամբ տարածվեց ամբողջ յերկրի վրա։ միջնորդները հրահանգ ստացան ծախելու վորնե գնով, վոր կպահանջմի։ Նույն պահին, իհարկեց կանգնած եր վան Ռենսելլերի ցլածայն գործակալը, միանդամից վար խփելով գները հինգ, տասը կետով և քառն հազար բաժնետումս ձեռքին բռնած ծախելու համար։

Բուռն կատաղությունը շարունակվում եր, մինչև վոր վան Ռենսելլերն անհանդուրժելի համարելով այդ լարվածությունը, հրմշտելով գուրս յեկավ ամբոխի միջից, նստեց և սկսեց ծիծագել, հեկեկալ, վորպես մի շարչըկված յերեխաւ։ Միայն կես ժամ հետո նա կրկին կարողացավ իշխել իր վրա։ Այդ ժամանակ Տ. և Ս. յոթանասուն և վեցումն եր,— և գտնում եր, վերջապես, գնորդներ, այդ նշանակում ե, վոր «պակասները ծածկվում եյին» յեթե գներին նրանց պետք յեղած արժեթուղթը—և դեռ ոգուտ ել կանեյին։ Այս պիսով սոսկալի պանիկան իր վերջն եր գտնում։ Վան Ռենսելլերը Տ. և Ս..ի ճիշտ արժեքը գնահատեց իննսուն և գտնելով իր միջնորդներին, պատվիրեց կնել բուրը, ինչ կարելի յեր ունենալ։

### XXXIII

Մեր հերոսը դուրս յեկավ խռնված բազմության միջից՝ հրմշտկելով անցնող մարդկանց, վորոնք լաց ու կոծ եյին

բարձրացնում, մարդկանց, վորոնք անիծում եյին, մարդկանց, վորոնք իրենց սագերն եյին փետում և մարդկանց, վորոնք բռունք եյին թափ տալիս զեպի յերկինք,—մի խոսքով մարդկանց, վորոնք կորցրել եյին այն ամենը, ինչ ունեցին աշխարհում, և տեսնում եյին սովոր ու ավերն իրենց դեմ ծառացած։ Այդ սի ահոելի և դժոխային տեսարան եր բայց վան Ռենսելլերն ուշադրության չառավ այդ. նա արդեն ուներ իր անչափ հույզերն ու վշտերը։ Դրանք այնպիսի հույզեր եյին, վոր հեշտ չե նկարագրել.՝ հույզեր մի մարդու, վոր մեկ կամ յերկու միլիոն քածնետումներից յուրաքանչյուրի վրա յոթանասուն կամ ութսուն զոլար շահ եր ունեցել. և վորը կես ժամմատ ընթացքում դարձել եր Նյու-Յորկի ամենահարուստ մարդը։ Մի քանի ըովե հետո գրասենյակ ընկավ ավագ վան Ռինսելլերը և փաթաթվեց վորդուն։

— Ռոբբի, Ռոբբի, — բացականչեց նա հելալով ու չեր կարողանում ավելի մի բառ ասել, վորովհետեւ խեղզվում եր ուրախությունից։ Երայկն ու մյուս յերեք անձինք կրնկակութ քայլում եյին նրա յետեկոց և այս հինգ ջենտլմենները ցնծությամբ արբշիռ՝ յերգում, ծիծաղում, պարում և փարվում եյին միմյանց վզին։

Ասում եմ հինգ, վորովհետեւ յերիտասարդ վան Ռենսելլերը, — տարրորինակ և ասել, — շատ քիչ եր մասնակցում նրանց արածներին։ Նա նստեց և յետ ընկավ աթոռին և մի ներվային քրքիջ արձակեց, — սինչ հայրը խոսում եր այն աներեւակայելի գումարի մասին, վոր շահել եր իր վորդին և ցնծությունից սիրու տրոփում եր։ Բայց հետո, մի քանի ըովե անց, նու նստեց աթոռին, աչքերը հառելով իր զեմուղեմը, զողղոջ ձեռներն աննպատակ շարժելով ողում։

— Հեք Ռոբբի, — ասաց հայրը կաթողին, — հեշտ և տեսնել միայն վերջավորությունը, ահա, վերցըու սրանից մի

կաթիլու—նա դարձացավ, յերբ տեսավ, վոր Ռոբբին մի  
ումպով կուլ տվեց շշի ամբողջ ըովանդակությունը:

Հիմա, յերբ սոսկալի ճնշումը վերացել և լարվածու-  
թյունը չքացել եր, Ռոբերտ վան Ռենսելերի ջղայնությունը  
հանկարծ վերսկսեց: Մինչդեռ մյուսներն այն վիճակումն  
եյին, վոր կարող եյին իրար գրկախառնվել, նա վռաքի  
կանգնեց, ներողություն խնդրեց և զուրո յեկավ:

Նա անցավ փողոցով, ուր տակավին մարդիկ բարձոս-  
այն վողում եյին իրենց վիշտը, և քայլամոլոր ճանա-  
պարհը շարունակեց: Գնում եր անսպատակ, հոնքերը կախ,  
ձեռքերն իրար սեղմած, և հոգու խորքում պայքարում  
եր իր ժառքում պատկերացնելու այն փաստը, վոր ինքն  
ամենահարուստ մարդն եր Նյու-Յորկում.—բայց չեր հա-  
ջողվուժ: Յեվ հանկարծ նա մի վայրագ ու հուսահատ  
վճռականությամբ նետվեց մի քերի մեջ և ինչ-վոր հասցե  
գոռաց:

Մի քանի ըսպեյից արդեն գետափումն եր, վորանց  
զանվում եր «Գիսավորը»: Այդ որն ահոելի յեղանակ եր  
գետի վրա: Սաստկահովը շառաչում եր, իսկ ալիքները ծո-  
վախորշեց ել բարձր եյին: Բայց Ռոբերտ վան Ռենսելերն  
առ վոչինչ համարեց այս բոլորը և շտապելով գեպի նավի  
տախտակամածը, կանչիլ տվեց կապիտանին:

— Նավարկեցեք,—գոչեց նա, — նավարկեցեք վարքան  
շուտ վոր կարող եք:

Կապիտանը զարհուրանքով նայեց նրան:

— Ո՞ւզ գնալու համար, — բացականչեց նա:

— Ծովը մտնելու համար, — պատասխանեց մյուսը:

— Իսկ փոթորկը: Անկասկած...

— Նզնվք փոթորիկի հետ, — բղավեց նա: — Դեպի ծովը,  
առում եմ ձեզ. հեռացրեք ինձ այս քաղաքից, հասկանմամ  
եք: Ինչու չեք սկսում նավարկել:

— Բայց նավաստիների կեռը բացակայում է, մը. վաճ  
թենսելիք. և պաշարն ել...

— Յես ձեզ ասացի պատրաստվել,—գոռաց Ռոբբին.—  
պատրաստեցեք, Արեք, ինչ ձեզ ասում եմ և մի վիճեք ինձ  
հետ: Վերցրեք նավի վրա ինչ վոր կարող եք, սիայն թե  
հեռանանք այստեղից, հենց վոր նավնիվիճակի կլինի շարժո  
վելու: Դեհ, սկսեք հիմա:

Ապա նա շուռ յեկավ և դեգերելով մտավ խուցը: Մինչ  
մարդիկ հապճեպորեն տնց ու դարձն սկսեցին նավամտ-  
տուցի վրա և կրակը բոցավառվեց ներքեռմ, նա նստեց  
մի շիշ խմիչք ևս առաջը դնելով: Յեզ վերջապես յերբ  
«Թիսավոր»-ը նավամտուցից սահեց անցավ հեռու, նա  
հենվեց սեղանին համրած թմբության մեջ:

#### XXXIV

Յեզ տյդ վիճակումն ել մնաց նա, ընկած՝ առանց մի  
բան իմանալու, մինչ շոգեմեքենան վորստում եր, և  
նավը ջրերն ակոսելով անցնում եր ալեկոծ ծովախորշից:  
Այն ժամանակ միայն նա վեր նայեց և ինքն ուշի յեկավ,  
յերբ նավը մտնելով բաց ծովը, հանձնվեց վիթխարի ալիք-  
ներին, վորոնք հարվածելով նրան չորս կողմից, սարսա-  
փելի ցնցումներ ելին պատճառում, վորի հետևանքով և  
անգամ վան թենսելիքը շպրտեց հատակի վրա: Նա վոտքի  
կանգնեց յերերալով, փարելով սեղանին: Ամեն ինչ պտույտ  
եր գալիս նրա շուրջը: Զբոսանավը գրեթե կողքի վրա  
ընկած մագլցում եր լեռնացած ալիքների վրայով: Ծովի  
շառաչն աննկարագրելիորեն խլացուցիչ եր: Մի ըովե նա  
այլևս չգիտեր, թե վորտեղ և գտնվում:

Ապա ներս մտավ կապիտանը:

— Արգեն բավական հեռացել ենք, սըր, — առաց նա  
խոժողություն, — մեր եք կամենում գնալ:

— Հոգ չե թե ուր,—պատասխանեց մյուսը—գնացեք,  
ուր վոր ուզում եք. միայն ինձ մենակ թողեք:

— Շատ բարի, սըր,—ասաց կապիտանը.—ուզդությունը  
կպահենք դեպի հյուսիս-արևելք, մըրկին դիմադրելու հա-  
մար ամենաապահով ուղղությունն ե այդ: Ծովաթմբերից  
հեռացած կինենք վազը առավոտյան:

Այդ խոսքերն ասելով, նա շուռ յերկավ և հեռացավ  
պլուխն որորելով: Նա լսել եր, վոր «Թիսավոր»-ի տերնայդ  
որը միլիոններ եր շահել Աւոլ Ստրիտում, բայց նա այն-  
պես եր յերեւաւ, վոր ասեցն թե Կորցրած լիներ այդքան:  
Նույն պահին վան Տեսնելերն իր ներքին արհավիրքի հետ  
մեն-մենակ, կծկվել եր ռեկանի մոտ: Որն անցավ, արեւ  
մայր մտավ, մութը վրա հասավ և դրա հետ միասին փոթո-  
քիկը նոր մոլեգնություն ստացավ: Այդ աճբողջ ժամանա-  
կամիջոցում նո կամ կծկված մի աթոռի վրա դողդողում եր  
կամ թմրած թավալվում խցիկի հատակին: Ամրողջ գիշերը  
նա վոչինչ չիմացավ, թե ինչ և կատարվում, վոչինչ չիմա-  
ցավ այն յիռացող կոհակների մասին, վորոնք քշում անց-  
նում եյին նավի կողքեց և այն բարձրացնում իրենց լին-  
աբարձ գաղաթների վրա, և կամ կորստարեր հարվածով  
ցած խփում այն՝ իր ցուռկի վրա: Վոչինչ չիմացավ կապի-  
տանի հսկողության և յերկուզի մասին, այն չորս մարդ-  
կանց մասին, վորոնք անվի կողքին: Կեցած հօկայտկան  
ջանք եյին գործ զնում զբոսանավի ցուռկը պահել մըրկի  
դիմ: Նա այդ բալրից վոչինչ չնկատեց, մինչև տեղի ունե-  
ցավ մի միահամուռ բաղխում, լսվեց ինչ-վոր բանի փշրվելու  
ձայն, վոր սաստկությամբ անցավ նավի միջով: Նա ապշա-  
հար վեր նայեց, զգաց վոր նավի ընթացքը փոխվել ե, վոր  
նա որորվում և մի կողքից մյուսը, վոր ալիքների հարված-  
ներն ել ավելի բուռն թափ եյին ստացել: Ապա հանկարծ  
խուցի դուռը բուռն շառաչումով բացվեց և կապիտանը  
ներս սուրաց:

— Մեքենայի գլխավոր գլանակը կոտրվել եւ, — ասաց նա  
հեղալով. — մեքենաներն ավերվել են:

Գան Ռենսելերը նայեց նրան բութ հայացքով:  
— Ի՞նչ, — հարցրեց նա:

— Մեքենայի գլանակը կոտրվել եւ, — վորոտաց կապի-  
տանը, փոթորկի ձայնը խլացնելով:

— Լավ, դրանից ի՞նչ, — պատասխանեց գան Ռենսելերը: —  
Իս ի՞նչ հոգն եւ:

— Մնացել ենք անոգնական, — զռուց կապիտանը: — Ան-  
ոգնակամ, չե՞ք հասկանում, բոլորովին հանձնվել ենք ալիք-  
ներին, շուտով կզարնվենք ժայռին:

Գան Ռենսելերը կանգնել եր սեղանին կառչած, և նա-  
յուա եր քարացած հայացքով. նա ինքնիրեն կիսաձայն  
կրկնում եր նրա խոսքերը, վորպես թե նրանց նշանակու-  
թյունը չեր հասկանում, պարզ չեր իր մշուշապատ ուղեղի  
համար... «Անոգնական... ալիքներին հանձնված, կզարնվենք  
ժայռերին»:

Եեվ հանկարծ նշմարելով կապիտանի աչքերում ցոլա-  
ցող կատաղությունը, ցատկեց նրա վրա ճշալով.

— Մենք չենք ուզում ժայռերին զարնվել: Վո՞չ, դուք  
խելագարվել եք: Մի բան արեք, կանգնեցրեք նավը:

Մյուսը տեսավ, վոր նա հարբած եւ սակայն յերկյուղն  
արագ կերպով զգաստացրեց վան Ռենսելերին, — ինչուս մի  
անգամ հուզմունքը նույն դերն եր կատալել:

— Վմբռտեղ ենք, — զռուց նա, — վմբռտեղ ենք մենք:  
Մի աճարկու հարված ցնցեց նավը, վերջինս ուժգին  
կերպով յերերաց և կողքին վեր ընկալ: Յերկուսն ել սպա-  
սում եյին սարսափահար: Ապա յերբ նավը մի փոքր ուղղ-  
վեց՝ կապիտանը պատասխանեց.

— Մեյնի յեղերքից մոտավորապես հիսուն մղոն հեռու  
յենք: Բայց քշվում ենք, հոսանքը տանում է մեզ, իսկ մենք

միանգամայն անկարող ենք վորեե բան անելու։ Յեթէ մի տեղից ոգնություն հասնի՝ կորած ենք։

— Ոգնություն պետք ե վոր հասնի, — զոռաց վան Շեն-սելլերը։ Ի վերջո վորոշապես հասկացավ յեղելությունը։

— Դուք հիմար եք, չի կարող պատահել։

Յեվ սկսեց քայլել դեպի նավամատույցի սանդուխը, կապիտանի հետ սիամին։ Փորձեց դուռը բացել, սակայն կանգ առավ, սարսափած դիշերվա կատաղի տեսքից։ Սև ու մուայլ եր դուրսը, իսկ քամին, այդ կատաղի տարերքը, և ցաք ու ցրիվ յեղող ջրի կաթիլները կարկուտի ողես զար-նում եր նրա դեմքին։ Վան Շենսելլերը հազիվ կարողացավ նայել դուրս, — այնքան, վոր տեսավ նավի հետնամասից արձակվող հրթիռը, վորը ճեղքելով ողը, բարձրանում եր դե-պի յերկինք, ապա շուր յեկավ և մտավ խուցը։

Նա հիմա գիտակցում եր իր կացությունը։ Այլևս ամեն հույզ չքացել եր նրանում, տեղի տալով սարսափին։ Նա դեգերում եր և շպրտվում այս ու այն կողմ՝ զրոսանավի պոտոյտների համաձայն։ Նա ձեռքերը վեր պարզած բղավում եր բուռն յերկյուղով, — «Աստված իմ, աստված իմ, չի կարող պտտահել սուտ եւ Փրկիր մեզ, Ի՞նչ պիտի անենք» և այլն, — ինչեւ վոր կապիտանն ուղղակի զզվանք զգալով, դուրս-յեկավ ու գնաց դեպի տախտակամածը և դեպի իր պարտա-կանությունը։

Բայց վան Շենսելլերը նույնիսկ չիմացավ այդ. նա վա-ղում եր յետ ու առաջ, հիմարացել ու զառանցում եր։ Ամեն ինչ մեռած եր նրա մեջ՝ բացի վայրի գաղանից, — յեթե իրոք, նրանում կենդանի յե յեղել այլ բան։ Նա ապրել եր ուպում, ուզում եր ցամաք դուրս գտլ, նա հարյուր միկոնի արժո-ղություն ուներ. նա... նա... Յեվ միթե նա ջրասույզ պիտի լիներ, ինչպես թակարդի մեջ արգելափակված մի մով։ Նրա կանչերն ավելի բարձր ելին, քան փոթորիկը շառաչը։ Կան-

չում եր հանուն աստծո... սարսափում եր... աղոթում... անիւ-  
ծում, իսկ այդ աւբողջ ժամանակամիջոցում կատաղի փո-  
թորիկը վորոտում, վոռնում եր գրսում ինչպես մի վայրի  
պազան, վոր կոփիվ եր մզում նրան ձեռք բերելու համար, և  
փոքրիկ նամակ առաջ քշում՝ դեպի նրա խորտակումը, Վոչ  
վոր չկար նրան լսող, նրան, թակարդում փակված մկանը—  
թեև կատաղությունից նրա բերանը փրփրակալել եր:

### XXXV

Այսպես անցավ մի յերկու ժամ, մինչեւ վոր արշալույսը  
բայց կեզ և ցերեկը վրա հասավ: Վան Ռենսելերը դեռ վոռ-  
նում եր,—թեև նա այնքան եր տկարացեց վոր հաղիվ եր  
շարժվում,—յերբ խցիկի դուռը երկին լայն բացվեց, և կա-  
ռիտանը բոլորովին գունատված և շրթները կախ՝ ներս մտավ:  
— Ամեն ինչ վերջացավ, սրբ: Մենք կորած ենք:— Նա-  
վատիրոջ աչքերը խենթեցածի պես շողջողում եւին:  
— Ի՞նչ եք ուզում ասել, — բղավեց նա:  
— Ցեկը վեր և տեսեք, — յեղավ պատասխանը:

Ցեվ գան Ռենսելերը կուրորին շտապեց դեպի տախտա-  
կամածը: Կառչելով նավախուցի ստնդուխքին, նա դիտեց  
իր շուրջը, շամեց մի ըոպե, բայց իր սեփական անուղղողից  
բացի վոչինչ չգիտակցեց: Մի կատաղի քառս շրջապատել  
եր նրան: Զբոսանավը փրփուրի պես ծփծփում եր ծովի  
ամենի հորձանքների վրա: Ալիքները, լեռների պես, շրջա-  
պատել եյին նավը: Այն սուզվեց ներքեւ, խորը բացված  
ջրային ձորում, ներքեւ, ներքեւ խորանալով, իսկ վան Ռան-  
սելերը յերկյուղից շնչահեղձ եր լինում: Ապա մի հսկա ջրա-  
լիս թավալգլոր յեկավ անցավ նավի վրայից, բարձրացը եց  
նրան... բարձր... և բարձր... ամենավերին գտնաթը և ճեպըն-  
թացի արագությամբ քշեց այն, թողնելով, վոր մոլեգնած  
ջրերը յեռան, շառաչեն, սուզեն և վորոտան նրա շուրջը:

Այդ լեռան գագաթից վան Ռենսելերը՝ դիտեց շուրջը...  
և ճիշը լսեղզվեց նրա կոկորդում։ Կես մղոնից վոչ հեռու։  
ուղիղ նրանցից վերև, ըստ յերեսոյթին, գտնվում եր կա-  
տաղի, մեկուսի, ահազդու յեղերքը, սրածայր ժայռերով և  
անողորմ յերկաթյա խարտկներով։ Իսկ նավի խորտակումը  
մոտալուտ և անխուսափելի յեր։ Տեսարանը խեց վան Ռեն-  
սելերի հոդու վերջին մասնիկը։ Նա վողք ու կոծ եր անում,  
կարող եր ընկնել տախտակամածի վրա և թափլտկել դեպի  
ներքե, բայց բնազդն ատիպեց նրան կառչել հենարանին։ Կան-  
դնել այստեղ վողջ ու ապահով և այդպես քայլ առ քայլ քայլ  
դեպի մահը... լինել անոկնական այդ դաժան, անողոք ուժե-  
րի ծիրաններում... Ո՞հ, այդ չափազնց եր, այդ չափազնց  
եր։ Այդ նրան հիստերիկ վիճակի հասցրեց, գազան դարձ-  
րեց, խենթացրեց նրան։ Նա բղավում եր, ծիծաղում, հեծում,  
բայց նրա արտասանած լուսքերն այլևս զուրկ եյին իմաստից։

Նա իր աչքերը հառել եր առջել գտնված սև ժայռերին.  
վորքան ավելի մոտենում եյին դրանք, այնքան պարզորոց  
լսվում եր լեռնանման ալիքների ձայնը, վորոնք բաղնիքում  
եյին այդ ժայռերին—մի ձայն, վոր հասնում եր հեռուն,  
թափանցում ամենուրեք,—տարերային, տիեզերական։

Միայն մի անգամ նա դարձավ այլ կողմ և տեսնելով,  
վոր նավաստիները, վորոնք մի վերջին, զուր փորձն եյին  
անում խարիսխ գցելու, տեսավ թե ինչպես զբոսանամա-  
քագործն ալտույտ ե գալիս ալիքների քայլքով. տեսավ,  
վոր ալիքները նավը հանում եյին դեպի վեր և քշում, տա-  
նում առաջ, բրդում պարանները թելերի նման։ Հետո նո-  
նկատեց նաև, վոր նավաստիներն աշխատում են նավակ-  
ներից մեկը դուրս բերել իսկ ինքն անշարժ կանգնած եր  
իր տեղը և սպասում եր։ Բայց նա ակամայից կառչեց խա-  
րըսխամբարձին և հենց վոր նավակը ջրին կպավ, նա ճա-  
նապարհը կտրող մեկին զարնելով և մի կողմ նետելով։

ցատկեց նավակի մեջ։ Մի քանիսն ել հետևեցին նրան, մինչև վոր մի ձայն զոչեց քրավական հօ։ Նրանք նավակը մղեցին մի կողմ և հեռացան զրուանավից։ Քիչ հետո մի դոռ ալիք հանկարծահաս մի հարված խփեց նրանց և նրանք շուռ յեկան։

Վան Ռենսելերը դուրս յեկավ մակերես, յերկյուղից շնչասպառ յեղած։ Նավակը տակավին նրան մոտիկ եր. նա մի հարված տվեց ջրին և բռնեց նավակից։ Նրան շատ մոտ կար մի ուրիշ մարդ ես, մի նավաստի, վորը ձեռքերը պարզել եր առաջ՝ դեպի նա։ Հենց վոր ալիքները վերգար որոբեցին նրանց՝ նա բաղխվեց վան Ռենսելերի վոտքին և պինդ բռնեց այն։ Վերջինս կատաղի կերպով վոտնահարեց նրան, մոլեգին զայրույթով աքացի տվեց և նրան ցած գլորեց ջրի մեջ։ Այդպես նա մենակ կառչեց ալիքների ձեռքին խաղալիք գարձած փրկանավին։

Մի ահոելի պայքար եր այդ. ալիքները դիզվում եյին նրա վրա, անզգայացնում, կիսով չափ ջրահեղձ անում։ Բայց նա խելազարի պես կախ եր ընկնել և կովում եր ալիքների դճմ՝ գլուխը ջրի յերեսին պահելու համար. մինչդեռ ծովը քշում, ավելի և ավելի յեր մոտեցնում նրան սրաժայու յեզերքին։ Նա վայրի հայացքով նայում եր դրան, այդ հրեշային թշնամուն, վոր յերախը լայն բացած և վիթխարի, ցից ատամներով ուզում եր կլանել նրան։ Այժմ դրանք ազում կերպով յերեւմ եյին նրանից վերե, խորտակվող ալիքների շառաչը թնդում եր նրան ականջում, նրա հոգու մեջ, շլացնում նրան, զարհուրանքի մատնում նրան, — կյանքի հեք գողդոջ մի մասնիկը, վորպիսին նա այժմ ներկայացնում եր։ Հանկարծ նա զգաց, վոր սուրբ վում ե ներքն, դեպի ցած, խորը ձորի մեջ. զգաց, վոր հսկայական պառւյտներ ե անում, որորվում, ճոճվում, վորպես թե ծասի գագաթին լիներ. ապա ոկտում ե բարձրա-

նալ վեր, բմբձր... բարձր, ճիշտ մինչև յեռացող գագաթը, սավառնող գագաթը: Նա ճշուծ եր, գալարվում, այդ նման եր մի ահուի մղավանջի, վոր ահարեկուծ եր մարդկանց հոգին: Սակայն ալիքները կորզեցին նրան... զգաց, վոր նրանք կորզեցին իրեն, և դրանք սկսեցին... նախ կամաց... ապա արագ, հետո ել ավելի արագ... թնդանոթի ոռութի պես արագ... և նետեցին, խփեցին նրան սրածայր ժայռերին: Նրա դեմքը ջախջախվեց, սրունքները կոտրտվեցին, գանդը ճզմվեց հավկթի կեղեի պես: Յեվ այսպես վերջին նշույլը դուրս յեկավ նրա անհագ կյանքից:

### XXXVI

Ես կողմակից եմ Ռըսկինի ունեցած անվստահությանը և սրտառուչ պատրանք»: Ի հանդեպ և մտադիր չեմ ակնարկելու, թե ալիքները Ռոբերտ վան Ռենսելերի հետ առընչություն ունեցող վորեե զգացմունք ունեյին: Այդ սոսկ պատահար եր, վոր նրանք դրկապինդ պահեցին նրան և ամրող որը նրան խփեցին սեպ ժայռերին: Վոր մի նրանք շտապում եյին նորից խլելու նրան և իրենց ամբողջ ուժը գործ եյին դնում նրան շպրտելու ամեն կողմ, ճզմելու, ջախջախելու, մինչև վոր նա կորցրեց մարդկային կերպաբանքի վորեե մի նշույլը: Դեռ գիշերը չեր հասել վոր քամին դադարեց. ալիքները ծովեղում նրա մարմինը մի լավ լվանալուց հետո մի փոքրիկ խորշ գտան և նրան թաղեցին ավազոտ ափում:

Այդ մի խաղաղ վայր եր և ուրիշ ձայն չկար, բացի ալիքների ձայնից, վորոնք ամբողջ գիշերը միմյանց ձայն տալով՝ հավաքվեցին ծովափ, և յետ ու առաջ որորեցին այդ մարմինը լուսնի տակ արծաթափայլ: Յերբ առավոտը բացվեց՝ մարմինն ուռած, կապտած և կիսով չափ ծածկված եր ավազով:

Արեն ել դուրս յեկավ. բայց մարմինը դիու այնտեղ եք, անուշադիր չմնալով բազմաթիվ փոքրիկ արարածների կող մեց, վորոնք անճարտկ քայլավտծքով և ողի մեջ ցցված իրենց յերկար զինվածքով մոտենում եյին նրան։ Դրանցից մեկը շուտով մազլցեց նրա զեմքի վրա և ճանկերը խրեց շրթունքների մեջ. իսկույն հավաքվեցին և մյուսները, քանի վոր ընտիր վորս եր այդ։ Միթե ձիշտ չե, վոր քառասուն ասարուց ավելի աշխարհը հետախուզության և յենթարկվել գտնկելու համար հազվագյուտ և թանկագին նյութեր, վորոնք ոժանդակեյին Ռոբերտ վան Շննսելլերի մարմինն ատեղծելու։ Մտածել տակառներով ընտիր գինիների մասին, վոր լցվել են այդ մարմնի մեջ... տուփերով անգին զլանակների մասին, վորոնք այնքան անուշ բուրմունքով հավեցրել են նրան. կրիայի, յեղնիկի և բաղերի մասին, — արտակարգ կերպով համեմված թացանների, անթիվ քաղցրավենիների, ֆրանսական վայելուչ անուններ պարունակող վարդագույն սատիննե ճաշացուցակների մասին և այլն, — մտածել այս բոլորի մասին.... Միթե հազարավոր մարդիկ չեն աշխատել ամեն որ ձեռք բերելու և պատրաստելու համար այս բոլորը, մատուցել զրանք արծաթյա և բյուրեղյա ամաններով, — մատուցել այդ թանկագին մարմնին, զգեստավորել, խնամել այդ և հարթել դբա բոլոր ճանապարհներն աշխարհում։ Իսկ հիմա, ի վերջո այդ փռված և ավագի վրա, վորպեսզի յերամ ներով սովալլուկ խեչափառները լավին այդ։

Այսպես անցավ մի որ ել. կեսորից հետո յերես ձկնորս սական նավակներ անցան մոտիկից. ձկնորսներից մեկը նշմարեց մարմինը. իր ընկերով յետ շտապեց դեպի զամաք, ձայն տվեց նաև մյուս նավակին ասելով, վոր անպայման նավարեկություն և տեղի ունեցել, հարկավոր ե գնալ ծովափ և ստուգել.

Ապա ինքը մոտեցավ մարմնին, — կամ ինչ վոր մեացել

եր նրանից; Հագուստները դեռ անեղծ եյին, ուստի նա սկսեց խուզարկել գրպանները. նախ զուրս քաշեց մի հրաշալի վոսկե ժամացույց, վորն արժեր հազար ութ հարյուր դոլար Ժընեվում: Այդ, իհարկե, հետաքրքրեց նրան, ուստի շուապեցրեց իր աշխատանքը և գտավ մի թղթապանակ՝ փողերով լի և մի քանի այցեանմսեր նրանում: Մի քիչ ջընջված եյին տառերը, բայց նրանց վրա հնարավոր եր կարդալ անունը. ձկնորսը մի ճիչ արձակեց... «Բարի տատված, այստեղ գրված ե Ռոբերտ վան Ռենսելիեր»:

— Ո՞վ ե Ռոբերտ վան Ռենսելիեր, — հարցրեց մյուսը զարմացած:

— Իսկի չես լսել նրա մասին. վահ, յերկրի ամենահարուստ մարդուն ե նա:

Խոսողը սարսափահար ցած եր նայում մարմինն. իսկ նշան ընկերը մի փոքր շարժեց մարմինը:

— Դևի պես հոտել ե արդեն, — ասաց նա:

### XXXVII

Շատ չանցած մյուս նավակը վերադաշտ և հայտնեց «Գիտավոր»-ի խորտակման և մի քանի ուրիշ մարմինների հայտնաբերման մասին: Այսպիսով մի քանի ժամից լուրը հասավ Նյու-Յորկ՝ մի այլ պանիկա առաջացնելով Ռուլ-Ստրիտում, և ահարկու վիշտ պատճառելով դժբախտ միլիոնատերի ընտանիքին, վոր այդպիսի կորուստ եր ունեցել: Նախ քան գիշերը հասնելլ լրագրները հայտարարեցին, վոր Ռոբերտ վան Ռենսելիերի մասորդները (նրանց սեփական գրազն ե) մասնավոր գնացքով ուղարկվում են քաղաք:

Ի հարկե, հուզմունքով ստացվեցին դրանք, և յերկու որ հետո տեղի ունեցավ խիստ հանդիսավոր ու տպավորիչ թաղումը: Շատ այունակներ հատկացվեցին, վորոնց նկատագրությունից յես մեջբերումներ կանելի, յեթե առանց

այդ ել այս պատմվածքը շատ յերկարած չլիներ։ Բավականանք առելով, վոր ծխակատարությունը տեղի ունեցած Ֆիֆտ Ավինույի մեծ յեկեղեցում, վոր դրան ներկա եյին մեր ժայրագաղաքի բալոր հարուստները և բարեկամները։ և վոր վերապատվելի դոկտոր Լիտտուս Մարեյն արտասահնեց իր ամենապերճ քարողն այս նշանաբանով։

«Որհնյալ են միլիոնառերեքը, վորովհետև նրանք ժառանգել են յերկիրը, և զուք չեք կարող այդ յետ առնել նըանցից»։

---

## ԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 **Սառաւեր—պարոն**, տեր:
  - 2 **Պոկեր—թղթախաղի մի տեսակը:**
  - 3 **Գոյֆ—անդիխախում յերկրներում շատ տարածված մի զնդախաղ:**
  - 4 **Պոլո—Անգլիայում և Ամերիկայում բարձր շրջաններում տարածված մի զնդախաղ են, զոր խաղացվում ե ծիրերի վրա նստած ֆնդուկին դարձնում են մի հաստուկ ձողով, զորի ծայրն առանձին կերպով և շինչած:**
  - 5 **West-side (Ուեստ-սայդ):** Արեմայան մասը, կողմը, Այդպիս կոչվում ե Նյու-Յորկ քաղաքի արևմտակողմը, զորտեղ գտնվում են, միլիոնատերերի և մուլտի միլիոնատերերի պալատանման չենքերը:
  - 6 **Ներփի—Անգլիայում կոմության առաջին պաշտոնյան նաև՝ պատվոր, պահենակալ, նահանգապետի անունից դատական կարգադրություններ անող անձ:**
  - 7 **Ալբրմի—Նյու-Յորկ նահանգի մայրաքաղաքը՝ զորտեղ նստում և նահանգապետը:**
  - 8 **Բեր—յերկանվյա, միաձի կառք:**
  - 9 **Debutante —զորեւ բանում տռաջին անգամ յերայթ ունեցող (պիտիորապես թարոններում):**
  - 10 **Magnifique—հոյագին:**
  - 11 **Mr—mister բառի կրճատ ձևն ե, զոր նշանակում և պարոն, տեր:**
  - 12 **Miss—միս, չոքնակի միսիս—որիսորդ, աղջիկ:**
  - 13 **Racunteur—պատմող:**
  - 14 **Օլցիոն (Option—ոպցին) —բառացի ընտրություն, ըստ ցանկության Այդպիս կոչվում ե այն պայմանական վաճառքը, յերբ արժեքը թղթեր են գնվում արժեքի մի մասի կանխավճարով, կամ զորոշ ժամկետով: Կարող ե լինել վաճառողի և գնորդի սպահուն:**

15 Պիետ—հեղուկաչափ, կես լիտրի չափում

16 Chambertin—ֆրանսիական թանգարժեք կազմիր դինու մը տեսակը:

17 Բում (*boom*)—առևտրի հանկարծակի ծաղկում, վերելք, վոր սովորաբար լինում է կարճատես և արհեստական կերպով առաջացած, նաև նշանակում է զորեւ բանի համար յեռանդով ռեկամ աներ

18 Թիքեր (*Ticker*)—մի հատուկ գործիք, վոր ավտոմատիկ կերպով և ընդունում և մի թղթյա ժամակինի վրա տպում և սակագներն ու առհասարակ զանազան լուրեր ։ Դորժիքի անունն առաջացել է նրանից, վոր շարժենակ թիք-թիք և անում։

19 Սիրի (*Lust. ciuitas, Phr. cite*), —քաղաք, Ամերիկայում գործածվում է Նյու-Յորկի, Անգլիայում՝ Լոնդոնի համար։ Սիրի կոչման հետ Անգլիայում կապվում է մի հարգալից պատկերացում, ուստի և Սիրիի ներկայացուցիչները պարբամենաական ցուցակներում առաջին հերթին են անվանվում։ Ամերիկայում այդ իմաստը համարյա թե անհատացել է։

20 Սևվաշարքել—*Blackmail*—սպառնակիքով դրամ կորզել շութեց



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043164

(30к)

312

А Г 7261

ԳԻՒԾ 1 ԱՊԻԵՎԸ

На армянском языке

СИНКЛЕР  
КОМАНДИР ПРОМЫШЛЕННОСТИ



АРМЕНГИЗ — ЕРЕВАН